

ԱԵԼԻՏԱ ԴՈՒՌԻՆԱՅԱՆ



ԵՎՐՈՊԱՅԻ

ՀԱՅԱԳԵՏՆԵՐ

III

ՎԻԿՏՈՐ ԼԱՆԳԼՈՒՄԱՆ  
ՀԱՅԱԳԵՏ



ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (2ኛ)  
Լ 181 դ

Դոլուխանյան Ա.

Լ 181 դ Վիկոր Լանգլուան հայագետ:  
Եր., Լուսակն, 2003, 120 էջ:

### III

Նվիրութ եմ եղբորս՝  
Լևոն Գուրգենի Դոլուխանյանի  
պայծառ հիշապակին

Լ - 0503020913 2003  
0150 (01) 2003

ԳՄԴ 63.3 (2ኛ)

© «Լուսակն» հրատ.  
2003 թ.

«Վիկոր Լանգլուան հայագետ» մենագրությունը «Եվրոպացի հայագետներ» մատենաշարի երրորդ գիրքն է: Առաջին անգամ առանձին հետազոտություն է նվիրվում 19-րդ դարի ֆրանսիացի նշանավոր հայագետ Վիկոր Լանգլուային (1829-1869թթ.): Գրքում ներկայացված են հայագետի գնահատականները՝ փրկած հայ գրականությանը, հայ պատմագրությանը, թարգմանչությանը: Նա առաջինն է ֆրանսերեն լեզվով հրապարակել Գրիգոր Մագիստրոսի բոլոր թղթերի համառուրված բնագրերը: 1852-1853թթ. Վիկոր Լանգլուան գիրքական ճամփորդությամբ շրջել է Կիլիկիայում և մի քանի կարևոր հետազոտություններով ներկայացրել Կիլիկյան հայկական թագավորության դիվանագիրությունն ու դրամական հարսփությունը: Հարկապես մեծարժեք են Վ. Լանգլուայի գնահատականները՝ փրկած Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը» և երկու սովոր հավորներում ամփոփված 5-րդ դարի հայ պատմագրությանը, որն արժնորվել է համաշխարհային պատմագիրության դիվակենպից:

Նախագեսվում է գրականագետների, պատմաբանների, բանասերների, ուսուցիչների, հումանիտար բաժիններում սովորող ուսանողության համար:

Խմբագիր՝  
բանասիրական գիրությունների թեկնածու

**Սուրեն Սահակյան**

## ՆԱԽԱԲԱՆ

19-րդ դարի ֆրանսիացի հայագետների մեջ առանձնանում է Վիկտոր Լանգլուան՝ իր մեծ նվիրմամբ, եռանդուն գործունեությամբ և արգասավոր հետազոտություններով:

Վիկտոր Լանգլուան ծնվել է Տիեֆում (Ֆրանսիա) 1829-ի մայիսին: Սովորել է Տին իրովագործակների (Chartes) դպրոցի արևելյան կենդանի լեզուների բաժնում, ուսման ընթացքում խորացրել է հայերեն լեզվի իմացությունը և հայագիտությունը դարձրել իր մասնագիտությունը<sup>1</sup>:

1852-53թթ. Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Երրորդի հանձնարարությամբ և նյութական աջակցությամբ ուղևորվել է Կիլիկիա և Փոքր Հայք: Մասնամասն ուսումնասիրել է Կիլիկիայի բնակավայրերը, պատմական հուշարձանները, հայկական վանքերում եղած ձեռագրերը, հայերի և նրանց գիրող մահմենականների կենցաղը, փոխհարաբերությունները: Դրանք հետագայում հրաժարակել են մի շարք հետազոտություններում: Փարիզ է վերադարձել նյութական և գիտական փաստերի հարուստ պաշարով: Ներք բերել է այլուսից թրծված արձաններ, որոնք վերցրել են գերեզմանափներից և 100-ի չափ արձանագրությունների պատճեններ՝ հունական, հռովմեական, բյուզանդական, հայկական:

Նրա ճամփորդական գեկույցներն արժանացել են հայտնի հնախույզ Ռաուլ Ռոշենի խիստ քննադադությանը: Սակայն երիքասարդ գիտնականը շարունակել է իր ուսումնասիրությունները և մեծ եռանդով զբաղվել դրամագիտությամբ՝ այդ բնագավառին ընծայելով մեծագույն հակագիտությունը: Միաժամանակ պատմական բացառիկ արժեք է գետել իրովարգակների բնագրերում և մանրախույզ ուսումնասիրել է Կիլիկիայի Ռուբինյան թագավորական գերդաստանի իրովարգակները:

Նույն ժամանակահարվածի մեջ ուրիշ նշանավոր հայագետ Էդուարդ Շյուլը ինքը, հայ պատմիչների մասին հետազոտություն պատրաստելիս, Վիկտոր Լանգլուային է հանձնարարել հայկական դրամների մասին պատմող բաժինը, որովհետև վերջինս հմուտ էր

<sup>1</sup> Վիկտոր Լանգլուայի կենսագրությունը գեն ՌՍՀ, հ. 4, Երևան, 1978, էջ 482-483, գ. Զարդիսմայան, Ուսումնասիրութիւնը հայ լեզուի և մատենագրութեան յարևմտւս (ԺԴ-ԺԹ դար), Վենետիկ, 1895, էջ 219-228. Ա. Ղազիկյան, Դայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կենքի, Երկրորդ պրակ, Թ-Ն. Վենետիկ, 1911, էջ 965-1003: Մաքենագիտական և կենսագրական փաստեր, գեն Պ. Ռովիաննիսյան, Մովսես Խորենացու մատենագիտությունը, Երկասիրություններ, Երևան, 1991, էջ 77-78:

հայկական դրամագիտության մեջ, իսկ այդ բնագավառը մինչև Լանգլուան ֆրանսիական գիտության մեջ լիովին բացակայում էր: Վիկտոր Լանգլուան սիրով հանձն է առնում խոսքանալով ջանալ ու կարգի բերել Կիլիկիայի Ռուբինյան հարսպության մինչև մեզ հասած դրամների պատմական-գիտական մեկնությունները: Նա կապ է հասպատում նշանավոր հոգևորական Գ. Այվազովսկու հետ, որի խորհուրդներն օգտագործում է իր հետազոտությունը շարադրելիս: Մինչև այդ, Ռուբինյան հայկական թագավորության դրամներով զբաղվել էր Հ. Կոմես վարդապետ Միղիւանը, որը նրանց մասին ուսումնասիրություն էր գրել մի ողջ գետքը ծավալով:

Վիկտոր Լանգլուայի հայագիտական, ինչպես նաև արևելագիտական գործունեությունն ընթանում էր ֆրանսիական պետության հանձնարարությամբ և հսկողությամբ: 1861 թվականին վերաբին պետական հանձնարարությամբ ուղարկվում է Խփալիա, որպեսզի այն գրեղի մատենադարաններում ու գրադարաններում գրնի համապատասխան այն պատմական աղբյուրներն ու փաստերը, որոնք ներկայացնում են հայկական ու ֆրանսիական թագավորների միջադեպական փոխհարաբերությունները՝ խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանում:

Ոհա այս նպատակով Վ. Լանգլուան քննել է ճենովյայի, Թուրինի, Վենետիկի դիվանները:

Վիկտոր Լանգլուայի հայագիտական վաստակը հսկայական է: Նա քննել է հայ գրականության, պատմության, իրովարգակիտության, վիմագրության, հայ եկեղեցու՝ 19-րդ դարի վիճակի խնդիրներ: Հարուկ աշխատություն է նվիրել Մովսես Խորենացուն՝ ջանալով պացուցել հայ պատմահոր վավերականությունը և 5-րդ դարի հայ լուսավորական շարժման գագաթներից մեկը լինելը<sup>2</sup>:

Վիկտոր Լանգլուան մի մեծարժեք աշխատություն է նվիրել Վենետիկի Միջիեարյան միաբանության կյանքին, նրա սրեղծմանը՝ ուսումնասիրությանը կցելով ակնարկ հայ ժողովրդի պատմության, գրականության վերաբերյալ՝ բնորոշելով իրեն ժամանակակից հայագետներին:

Զափազանց մեծարժեք է նաև Գրիգոր Մագիստրոսին նվիրված հետազոտությունը, որի մեջ նա համառոված ներկայացնում է Մագիստրոսի ությունները թղթերի ֆրանսերեն թարգմանությունները:

Վիկտոր Լանգլուան նաև դաշտադաշտ գրող ճանապարհորդ է,

<sup>2</sup> Victor Langlois, Etudes sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren, Paris, 1861. Նույնի հայերեն թարգմանությունը գեն Լանգլուա Վ., Մովսես Խորենացի և նրա պատմությունը (թարգմանեց Միք. Պալասանյանը), 1863:

այդ են վկայում նրա՝ Կիլիկիա կապարած գիտական ուղևորություն-ների հրաժարակված փափառորությունները:

Նրա հայագիտական հետքազույթությունների պասկը հայ պատմիչների ժողովածուի երկու հապորներն են, որոնք լույս աշխարհ են Եկեղեցու կողմէ և առաջարկությունների պատմությունների հայության մի շարք հայությունների և ազգային հայագետների անմնացորդ առակցությամբ:

Վիկոր Լանգուայի կայսրի մասին որևէ խոսք գրողները չեն մոռացել համառով խոսել նաև Նուբար Փաշայի մասին։ Նուբար Փաշան (1825-1899) եղել է Եգիպտակայ պետական-քաղաքական գործիչ։ Սերել է Նուբարյան հայ գերդասպանից։ Նախնական կրթությունը սպացել է Զմյուռնիայի հայկական դպրոցում։ Պատանի հասակում փեղափոխվել է Եգիպտոս, 1844-49-ին սովորել է Փարիզում։ 1850-ից սկսած պատասխանագործությունը կարել, գրքեր գրադարձների եղել է Եգիպտոսի արքաքին գործոց նախարար, ինչպես նաև՝ պրեմիեր մինիստր։ Սկեղծել է Եգիպտոսի Օրենսգիրքը։ Զբաղվել է Եգիպտակայ գաղութի, ինչպես նաև հայ ժողովրդի ազգային ճակարտագրով, նպաստել է «Արմավենի» հայերեն պարբերականի հրատարակմանը։ Կազմակերպել է «Հայ պատմիչներ» ժողովածուի թարգմանությունն ու հրատարակումը։ Եղել է 1878-ի Բեռլինի կոնգրեսին ուղղված հայկական ծրագրի հեղինակը։ Նուբար Փաշան Եգիպտոսին մաքուցած ծառայությունների համար սպացել է շքանշաններ, պիդուսներ, կանգնեցվել է նրա կիսանդրին, նրա անունով փողոցներ են կոչվել Կահիրեում և Ալեքսանդրիայում։

Վիկոր Լանգուան եղել է նաև հայ ժողովրդի ազգային շահերի շերմ պաշտպան: 1863 թվականին, ցնցված Զեյթունի հայերի ապստամբության փաստով, գրել է «Թուրքիայի հայերը և Զեյթունի ապստամբությունը» հոդվածը:

Հայագելքը վաղ է հեռացել կյանքից. նա վախճանվել է ասթմայի նոպայից՝ 1869-ին:

Վիկոր Լանգուան ջերմ կապերի մեջ էր ոչ միայն Վենետիկի Միհիթարյան միաբանության հայերի, այլև Ռուսասփանի կայսերական ակադեմիայի նշանավոր արևելագետների ու հայագետների հետ՝ հարկապես Մարի Ֆելիսիփե Բրոստի և Մկրտիչ Էմինի: Նա եղել է Վենետիկի Միհիթարյանների «Ակադեմիայի», ինչպես նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանի պարկավոր անդամ, Թուրինի գիտությունների ակադեմիայի անդամ, սփացել է Ասպետի թագավորա-

կան շքանշան:

Ներկա մենագրությունը առաջին ծավալուն շարադրանքն է՝ Վիկ-  
տոր Լանզլուայի հայագիրական ողջ գրծունեությունը լուսաբանող:

## ՎԻԿՏՈՐ ԼԱՆԳԼՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹ-ՅՈՒՆԸ

Վիկտոր Լանգլում իր հետազոտական հետաքրքրությունների առանցքներից մեկը դարձել է հայ միջնադարյան գրական հուշարձանների ուսումնասիրությունը:

Այդ գրականությանը նա ծանոթացել է Փարիզի գրադարաններում և հավաքած Վենետիկի Մխիթարյանների մաքենադարանում: Նրա երկարամյա աշխատասիրության արդյունքներից դարձավ Մխիթարյան միաբանությանը նվիրված մենագրությունը, որը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը կոչվում է "Notice sur le couvent Arménien de l'ile s. Lazare de Venise" («Համառոպ գրեգորություն Վենետիկի Ս. Ղազար կղզու հայկական վանքի մասին»), և երկրորդ մասը խորագրված է "D'un aperçu sur l'Histoire et la littérature de l'Arménie" («Ակնարկ Հայաստանի պատմության և գրականության»):

Չնայած Վ. Լանգլում իր գիրքը խոհեմարք կոչում է համառոպ գրեգորություն և ակնարկ, սակայն սեղմ ծավալի մեջ այն ունի շաբ խորագրված գրադրություն:

Այս գրքի առաջին հավաքած սկսվում է «Մխիթարի և Մխիթարյան միաբանության պատմությունը և Ս. Ղազար կղզու նկարագրությունը» ենթախորագրով ("Histoire de Mekhitare; de la Congrégation Mékhithariste et description de l'Ile de S. Lazare"):

Գիրքն սկսվում է Ս. Ղազար կղզու անմոռանալի նկարագրով: Այն ներկայացնում է Ս. Ղազար կղզու վրա գրնվող հայկական վանքը, որտեղից երևում են Վենետիկի Դոժերի պալատը, երկու հսկա սյուները, որոնք կրում են սուրբ Թադեոսի արձանը և թևավոր առյուծ ու ավետարանիչ սուրբ Մարկոսի արձանը: Կղզին ամբողջովին թաղված է կանաչի մեջ: Այս կղզում փիրում են խաղաղություն, բարեապշտություն և զիփական մթնոլորդ՝ հաստիական մի փոքրիկ հոգևոր գաղութի կողմից, որը հիմնել է Մխիթարյան Ս. Ղազար կղզու առաջնային կրոնավորները Եվրոպայի ովքերի մոտ հիմնել են հայոց ազգի օրրանը, որն իր հայացքով նայում է դեպի Արևելը:

*Notice sur le couvent Arménien de l'ile S. Lazare de Venise, suivie d'un aperçu sur l'Histoire et la littérature de l'Arménie par Victor Langlois, membre de l'Académie Arménienne de s. Lazare de Venise, de l'Academie des sciences de Turin, chevalier de l'ordre Royal, religieux et militaire des ss. Maurice et Lazare, Venise, 1869.*

Սուրբ Ղազար կղզին վենետիկյան ժամանակագրություններում առաջին անգամ հիշաբակվում է 12-րդ դարում: Ս. Դիլարիոն վանքը այդ ժամանակահարվածում դադարեցվում է մի հրովարդակով, հետո գարածքն անցնում է առաքինի ու հարգված մի մարդու՝ սենյոր Լենն Պաուլինին, որոշ ժամանակ անց Վենետիկի հանրապետությունը կղզյակը գնում է Պաուլինիից և դարձնում է Արևելքից եկած բորովիների բնակավայր:<sup>2</sup> Երբ Աֆրիկայից և Ասիայից եկած բորովիները վերացան, կղզին ծածկվեց խիստ կանաչով և լրված բնակավայր էր, որը կային Աղոթաբակիկի խեղճ ձկնորսների մի քանի հյուղակներ:

1715 թվականի ապրիլին դասներկու հայ վանականներ՝ հալածական թուրքական արշավանքից, հասնում են Վենետիկ: Նրանց գլխավորում էր Մխիթարյան Սեբաստիանու: Նա ծնվել էր հին Սեբաստիանու և հայ ծնողների միակ զավակն էր: Ծնուսի անունով կոչվել է Մանուկ: Մանուկը ցուցաբերում է եզակի խեղացիություն իր խիստ եռանդուն մտքի և աշխատասիրության շնորհիվ: Նա ուսումնառում է Կարմիր վանքում: Տասնիներ գարեւեկանում Անանիա Եպիսկոպոսից սպանում է Մխիթարյան անունը, հոգևոր հանդերձներ և սարկավագի ասդիճան: Քանի գարեւեկանում կարգվելով քահանա՝ նա շրջում է Ասիայում և իր հայրենակիցներին քարոզում է Վելեբրանի վարդապետությունը: Նա այցելում է Ս. Էջմիածին՝ հայ կաթողիկոսների նսկավայրը, հետո վերադառնում է Սեբաստիան, հետո անցնում է Բասեն, որը փեղի եպիսկոպոսը նրան վարահում է երեխաների ուսուցումը, հետո անցնում է Սիրիա, լինում է Հալեպում, որը հանդիպում է Փրանսիացի միսիոներ Անդրուան Բովիլեին ու որոշում է այցելել Հռոմ: Վերցնելով այս հոգևոր հորից հանձրարական նամակ՝ նա նավ է նստում Կիպրոս գնալու համար, սակայն ծանր հիվանդանում է՝ անկապար թողնելով իր ծրագիրը: Նա վերադառնում է Սեբաստիան, իր առողջությունը

<sup>2</sup> Սուրբ Ղազար կղզու մասին «Հայերի Վենետիկը» գրքում կարդում ենք. «Այսքեղ կային վարձու մի քանի բանշարանց, երկու լավ ջրիոր, սակայն կղզին անմարդաբնակ էր: Ծին շինությունները համարյա թե ծածկված էին խիստ թանթրվենիներով. և դրանց հասնելու համար անհրաժեշտ էր հաղթահարել բազմաթիվ չորացած թփեր ու վայրի ենքաները: Պատերը նկարագրող սպիտակ աղային ուրվաքրերը և վարդագոյն բարաքուի գարդարանակները օգնում են Մխիթարյան երևակայությամբ վերականգնել կղզյակի ժամանակագրությունը՝ թղարում Ս. Դիլարիոն վասնի բնետիկության նսկավայր, ժղուած բորովիների արգելանց, ժղուած աղքատ հիվանդների ծերանց, ժղուած Կրետեից արդարաւագ Դոմինիկյանների ժամանակավոր բնակավայր, այնուեւրի բացարձակ լրված վիճակ: Սակայն հենց այս վայրի լրվածության շնորհիվ կղզին զեղադեսի և առողջարար էր թվում. և Մխիթարյան այնուեւր գիտակ իր վանքը, ծաղկուն մենասփառն և մշակույթի կենտրոնը» (փետ Ակերամ Ներմագ, Պատաւ Կոնի Ըստիքի դի Նեգին, Հայերի Վենետիկը, Տասնվեց դար պատմության և առաջնի միջուկ, իրավերենից թարգմանեց Սոնև Հարությունյանը, Երևան, 2000, էջ 229):

Աը վերականգնելու համար, և հասդարձում է Սուրբ Նշան վանքում, որ սպանում է վարդապետի ասդիճան: Նա ձեռնարկում է մի նոր ճամփորդություն Փոքր Ասիայով դեպի Կոստանդնուպոլիս՝ իր հայրենակիցներին քարոզելով կաթոլիկական հավաքի ճշմարդությունը: Համբամանքները նրան սպիալում են վերապին վերադառնալ Բասեն, նորից զբաղվում է քարոզությամբ, երբ սկսվում է մի սարսափելի համաճարակ, որն ամայացնում է այդ վայրերը: 1700-ին նա հասնում է Կոստանդնուպոլիս և հասդարձում է Բերա թաղամասում՝ իր երեք աշակերդների հետ: Ենց Բերայում է նա սկսում է գույքությունը իր առաջին գրքերը և այսպես է դրվում է Մխիթարյան միաբանության հիմքը: Կոստանդնուպոլսում մնալը դառնում է անհնար, և Մխիթարյան իր միաբանության համար որոնում է նոր ու խաղաղ վայր ու մեկնում է քրիստոնյա Մորեա: Բերայից մեկնելուց առաջ նա հավաքում է իր աշակերդներին և նրանց բաժանում է առանձին խմբերի, իր թշնամիներից աննկատ հեռանալու համար: Նա քաջալերում է իր միաբաններին, ասում, թե նրանց հովանավորելու է Աստվածամայրը:<sup>3</sup> Շուտով միաբանները հավաքվում են Մողրնում՝ անցնելով հազարավոր դժվարությունների միջով: Մողրնում հասդարձությունը անմիջապես հետո, Մխիթարյան հասդարձում է միաբանության խիստ կանոնակարգը և որոշում է կառուցել վանք ու եկեղեցի: Թվում է, թե ամեն վիճակը անցել էր, սակայն Աստված Մխիթարյան և նրա միաբանության համար պարագաները կառուցուել են նոր փորձություն: Մի սարսափելի նոր արշավանք են սկսում թուրքերը Մորեայի վրա: Հայկական եկեղեցին ավերվում է և այրվում, միաբանները մի կերպ նավ են նսպում ու մեկնում Վենետիկ:

1715 թվականի ապրիլին նրանք հասնում են Վենետիկ և Սենափից խնդրում հովանավորություն: 1717-ի սեպտեմբերի 8-ին Սենափը որոշում է Մխիթարյան ու նրա ընկերներին հարկացնել քաղաքից դուրս փարածը՝ Սուրբ Ղազար կղզին: Հայ հոգևորականները սկսում են վերանորոգել կղզու ավերակները և բարեկարգել շրջապատող միջավայրը: Մխիթարյան Սեբաստիան իր եռանդուկ օրինակ է ծառայում բոլորին: Նա ոչ միայն վերակառուցում ու վերանորոգում է շինությունները, այլ շարունակ պարապում է գիտությամբ, և նրա հիմնած դպրանը սկսում է արդարությ բազմաթիվ հավորներ, որոնք ուղարկվում են Կոստանդնուպոլիս, Ասիա և Վերջապես բոլոր այն վայրերը, որտ կային հայկական ցեղի թեկութ փոքրաթիվ մարդիկ:

Վանքը լիովին ավարտում փեսք է ապանում 1740-ին՝ հենց Մխիթարյանների խորհրդանշը մի խաչ է, որի չորս թևերի վրա կան հետևյալ դրամները՝ Ռ. Վ. Ա. որոնք նշանակում են՝ Որդեգիր Կուսին, Վարդապետ Ապաշխարութեան (դրամները՝ Langlois V., Notice sur le couvent Arménien de l'ile s. Lazare de Venise, p. 11).

թար Սեբաստիոն ջանքերով, և այդ վկայում է համապատասխան արձանագրությունը հայերեն ու լատիներեն լեզուներով՝

### ՄԵԼԱՍՏԱՆՍ ԱՅՍ ԸՆՍ ԲՈԼՈՐԻՆ

ՃԻՆԵԱԼ ԵՂԵՒ Ի ՓԱՌՍ ՓՐԿՉԻՆ.

ՅԱԲԲԱՑՈՒԹԵԱՆ ՍԵԲԱՍՏԻՈՆ

ՄԼԽԻԹԱՐԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

FUIT HOC MONASTERIUM TOTUM

TEMPORE MECHITAR PETRI EX SEBASTE,

I. ABBATIS EXTRUCTUM, AN. 1740.<sup>4</sup>

Սակայն դրանից ոչ շատ անց Մխիթարյան գույքությունը կատարվում է երեք գույքի շարունակ պաշտելի աբբահայրը պայքարում է անբուժելի հիվանդության դեմ և 1749-ի ապրիլի 27-ին վախճանվում է 74 գույքեկան հասակում: Նրա մարմինը ամփոփեց վանքի մագուղի խորանի ներքո: Այդ ժամանակից սկսած Ս. Ղազար կղզու միաբանությունը, ի պատիվ նրա հիմնադրի, կոչվեց Մխիթարյան: Մխիթարյան հաջորդեց Մելքոն Կոստանդնուպոլսեցին: Նրա ժամանակ է հենց Մխիթարյանների մի մասը նույնանուն միաբանություն հիմնեցին Աստվածամայրություն՝ Վիեննայում:

Մելքոնը վախճանվեց 1800-ին և նրան փոխարինեց Ագոնց Գյուլի վերը, որը ծնվել էր Տրանսիլվանիայի հայկական գաղթօջախում: Նա առաջինն էր, որ ստացավ արքեպիսկոպոսի ասդիճան: Նրա պաշտոնավարությունն ընթացել է ծանր ժամանակահավածում: Բոնապարտը, հաղթելով Իտալիայում, նվաճեց Վենետիկի և Վերացրեց Վենետիկի հանրապետությունը: Սակայն ծեռք չդրվեց հայկական միաբանությանը, ավելին՝ այն թույլադրեց կոչել ակադեմիա (կանոն):<sup>5</sup> Քանչորս գույք աբբահայր լինելուց հետո Ագոնցին փոխարինում է Սուրբա Սումալը՝ 1824-ին: Ս. Սոմալը խթանում է Միաբա-

<sup>4</sup>Langlois Victor, Notice sur le couvent Arménien de l'ile s. Lazare de Venise, p. 15.

<sup>5</sup> Այդ մասին գրիված է. «Նապոլեոնը յավ էր գրամատրուք հայերի հանդեպ. սակայն անցավ համարյա երեք գույքի շարունակ սեպտեմբերի գույքին Ս. Ղազար հասավ երիտարար Պետրոս՝ օգոստոսի գույքության երկու օրինակից կնքված հրամանագրով. որով Նապոլեոնը հայդարարում է, որ Վենետիկի Ս. Ղազար կղզու հայ գույքապետները պահպանում են իրենց ներկա կարգավիճակը: Սակայն կայսեր բարեհոգությունը սրանով չէր սահմանափակությունը. համարվելով գիտությունների կաճառ, միշտ կայսերի կայսեր բարյացակամությունը (դրամները՝ Langlois V., Notice sur le couvent Arménien de l'ile s. Lazare de Venise, p. 11).

նույթյան նոր վերելքը: Նա իր՝ գիտության նկարմամբ ունեցած սերը ներարկում է միաբաններին: Գրաբարով լրիս են գետնում բազմաթիվ թարգմանություններ: Ս. Սոմալը վախճանվում է 1846-ին, նրան հաջորդում է Գևորգ Հյումյուզյանը, որը Վիկոր Լանգուայի ապրած ժամանակ դեռ գլխավորում էր Մխիթարյան Միաբանությունը: Դայագելու թարգմանութիվ շքանշանները, որոնք աբբահայրը սփացել էր Ավստրիայից, Իտալիայից, Պարսկասպանից և Ֆրանսիայից:

«Եփո Վ. Լանգուան նկարագրում է Մխիթարյան Միաբանության արդարին գետնը, Ս. Ղազար վանը, հայ հոգևորականների ծեսերը, ամենակարևորը՝ վանքի գրադարանը»:

Ընդարձակ դահլիճում, ուր շարված էին երեսուն հազար գրագրությունները, որոնցից բաղկացած էր գրադարանը, լուսավորվում են դեպի պարփեղը բացվող լուսամուգներով: Այդ գրքերը հոգևոր, գիտական և գրական գործերի հազվագյուտ հրապարակություններ են: Դահլիճի մեջգեղում կարելի է դեսնել իին դրամների հավաքածու, որի մեջ կան նաև միջնադարյան դրամներ՝ Ասիայի, հայուսապես Հայասպանի: Դահլիճում դրված է Մխիթարի կիսանդրին: Սրահի անկյունում կահույքի մեջ կարելի է ցուցադրված գետնել բիրուական մի պատճենու: Սա մի հիշաբակ է Ս. Ղազարովիչից<sup>6</sup> Հնդկասպանի հարուստ հայից: Այդ պատճենու դիմաց կա մի շաբ հզոր հեռադիրակ: Բայց թանգարանի ամենահերթքիր առարկան մի եղիպական մումիա է. սա մի նվեր է նշանավոր հայ Պողոս բեյից՝ դրված վանքին:

Մեծ հիացմունք է պատճառում գրադարանի մուտքի դռան վերևում կախված Շովիաննես Այվազովսկու ծովանկարը: Այվազովսկին մեծ ճանաչում ուներ Ռուսասպանում և Սուրբ Աննայի շքանշանի ասպեկտ էր<sup>7</sup>:

Կանքի ձեռագրագուն ունի երկու հազար հավորից բաղկացած ձեռագրական հավաքածու, որը և կազմում է Միաբանության հիմնական հարստությունը: Սա Եվրոպայում գտնվող հայկական ձեռագրերի ամենահարուստ հավաքածուն է, այն զիջում է մայր հայրենիքում՝ Էջմիածնում պահպող ձեռագրերի հավաքածուին: Բոլոր ձեռագրերը պահպում են մեծ խնամքով. նրանց մեջ կան շաբ հները՝ գրված մա-

<sup>6</sup> Այդոր այս Ս. Ղազարովիչը կապ ունի ռուսական իշխանական գիտորդու սփացած Լազարյանների հետ, չենք կարող ասել-Ա. Դ.:

<sup>7</sup> «Հայակավոր ծովանկարի Այվազովսկին հետաքայլում սփացել է շաբ ուրիշ շքանշաններ. իսկ 1887-ից Ռուսասպանի Գեղարվեստի ակադեմիայի պատվագրության մեջ կատարվում էր:

գաղաթի վրա: Շաբ ձեռագրեր նկարագարոված են: Ձեռագրերի համար հոգևոր հայրերը պատրաստել են ձեռագրացուցակ: Մեկ ուրիշ դահլիճում հավաքված են արքասահմանում հրապարակված հայկական գրքերը և նրանք, որոնք հրապարակվել են հենց վանքում: Այդ դահլիճի դռան վերևում կա Նապոլեոն Երրորդի նկարը, որը հովանավորում էր միաբանությանը:

Կանքի գրադարանը նույնպես գրավում է այցելուի ուշադրությունը. այն գետեղված է վանքի մուտքի մոտ: Մխիթար Սեբադացու ժամանակներից սկսած գրադարանը հրապարակել է բազմաթիվ գրքեր՝ բոլոր ժանրերով: Այդ գրքերն ուղարկվել են Թուրքիա, Ռուսասպան, Պարսկասպան, Հնդկասպան: Մխիթարյան Միաբանության գրադարանի գրքերն իրենց որակի համար սփացել են բազում մեղալներ՝ Փարագում (1855-67թթ), Ֆլորենցիայում (1861թ.), Լոնդոնում (1862թ.):

Նապոլեոն Բոնապարտի ժամանակ Ակադեմիայի իրավունքներ սփացած միաբանությունն ուներ մեծ թվով արդարականացած անդամներ, որոնցից էին Մարի Ֆելիսիփե Բրուսեն<sup>8</sup>, Պետրովմանը<sup>9</sup>, լորդ Բայրոնը, Սիլվեստր դը Սասին և ուրիշներ:

Վ. Լանգուան նկարագրում է Մխիթարյան միաբանների օրինակելի կենցաղավարությունը: Կղզին թաղված էր այգիների մեջ, որոնցում աճում էր խաղող. նրանց միաբանները սփանում էին հրաշալի սպիտակ գինի: Կանքի այգին հիանալի խնամված էր, ամենուրեք մաքրություն էր ու փայլ. կղզուց երեսում էին Ալյան լեռների ձյունեկապարները: Ազ կողմից Լիդրն էր՝ նույնպես կորած կանաչի մեջ:

Վ. Լանգուան խոսում է նաև Մխիթարյանների հիմնած երկու վարժարանների մասին՝ Վենետիկում և Փարիզում, որոնք գոյագետում են մասնավոր մարդկանց նյութական հովանավորությամբ: Երկու մեծահարուստ հայեր Մադրասից կանոնավոր ձևով դրամ են ուղարկում Ս. Ղազար կղզու հայրերին:

Վիկոր Լանգուայի գրքի երկրորդ մասն սկսվում է 35-րդ էջից, և այն ունի ենթախորագրեր՝ «Հայասպանի պատճենությունը և նրա գրականությունը հին ժամանակներից մինչև մեր օրերը»:

Հայագեղը ներկայացնում է Հայասպանի աշխարհագրական դիրքը՝ Մեծ Հայքից մինչև Միջազգեղը, մինչև Եփրամ: Երկիրն ընկած է հսկա լեռնաշղթաների մեջ. նրա կենտրոնում Արարագ լեռն է, և ըստ

<sup>8</sup> Մարի Ֆելիսիփե Բրուսեն է նվիրված «Եվրոպացի հայագեղներ» մագիստրացի երկրորդ գիրքը:

<sup>9</sup> «Այսրին Պետրովմանը (1801-1876թ.) եղել է գերմանացի լեզվաբան, հայագետ, սեմագետ: Հայերների պատմա-համեմատական ուսումնասիրության հիմնադիր: ճանապարհորդել է Արևելքում, եղել է Կիլիկիայում: Պետրովմանի շնորհիվ հայերներ ճանապարհության վերաբերյալ է իրեն հնդկարգական լեզու:»

ասպածաշնչային ավանդության՝ ջրհեղեղից հեկո Նոյի փապանն է այնպեղ հանգրվանել: Այս լեռնաշղթան շրջապատված է մի շարք բնակավայրերով՝ Մինգրելիա, Խմերեթիա, Գուրիա, Վրաստան, Կախեթիա, Շիրվան, Ջիլան, Աղրբեջան և Քրդաստան: Փոքր Հայքը հասնում է մինչև Տրապիզոն, այն կցված է Մեծ Հայքին, մյուս կողմից հարևան է Կապանովկիային, Կիլիկիային, Սիրիային:

Կիլիկիան, որ 3 դարեր շարունակ եղել է հայկական թագավորություն, անջապահ է եղել Փոքր Հայքից Տավրոս լեռնաշղթայով: Բոլոր կողմերից այն շրջապատված է լեռներով, միայն մի կողմից ողողվում է Միջերկրական ծովով:

Մեծ Հայքը բաղկացած է 15 նահանգներից, որոնք ունեն իրենց գավառները: Նահանգներն են՝ Բարձր Հայք, Տայք, Գուգարք, Ուփիք, 14-րդ Հայք, Տուրութերան, Վրարապ, Վասպուրական, Սյունիք, Արցախ, Փայտակարան, Աղճնիք, Սոլիս, Կորդույք, Պարսկահայք: Վ. Լանգուան հիշեցնում է, որ հույների գերիշխանության ժամանակ եղել են՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք:

Հայագետը նկարում է, որ իր ժամանակ՝ 19-րդ դարի երկրորդ կեսին, ավելի շուրջ 60-ական թվականների վերջին, Հայաստանի բաժանումը խիստ փարբեր է նախորդող շրջաններից: Թուրքերը, որոնք փիրում են երկրի Արևմտյան մասում, այս լայնածավալ երկիրը բաժանել են փաշայությունների մեջ, որոնց զիսավոր քաղաքներն են Էրզրումը, Կարսը, Բայազետը, Վանը, Դիարբեքիրը: Ռուսները Պարսկաստանից նվաճել են Հայաստանի Արևելյան հավաքածը՝ ընկած Քույր և Վրաք գետերի միջև: Այդ հարվածի զիսավոր քաղաքներն են Երևանը, Նախիջևանը, Ասրապատը, Շաքին, Շիրվանը, Շամախին, Բարդան, և նրանց մեջ է Էջմիածինը, որի կողմանը է Հայաստանի կարևորագույն հոգևոր կենտրոնը:

Վիկոր Լանգուան առանձնացնում է պարմական Հայաստանի այն հնագույն քաղաքները, որոնք նրա ժամանակ չեն կորցրել իրենց պարմական նշանակությունը և դեռ մնում են որպես հայկական կարևորագույն կենտրոններ՝ բնակեցված կամ ամայի՝ Կարինը՝ 19-րդ դարում Էրզրում, Անին՝ Բագրագունիների մայրաքաղաքը, որի ավերակները հիացմունք են պատճառում ճանապարհորդներին, Վաղարշապատը, որը նույն հոգևոր կենտրոն էջմիածինն է, Վանը, Ուռիան կամ Եղեսիան՝ Վրաք արքայի մայրաքաղաքը, Մծբինը և վերջապես Երևանը:

Լանգուան հիշեցնում է հայփնի պարմական փաստը, ըստ որի երկիրը կոչվում է Հայաստան՝ նախնի Հայկի անունով, որը թորգումի որդին էր, Թիրասի որդին, Գամերի որդին, Նոյի Հաբեթ որդու որդին:

Նրա կարծիքով Հայաստանը կախման մեջ էր Ասորեստանից մինչև Պարույրի ժամանակները, որն ապստամբեց օպարի լծի դեմ և նվաճեց անկախություն<sup>10</sup>:

Վլեքասանդր Մակեդոնացու արշավանքից հեկո Հայաստանը ընկնում է Սելևկյանների ձեռքը: Նեկո անցնում է պարթևներին, և Վրշակ թագավորը Հայաստանը հանձնում է իր եղբորը՝ Վաղարշակին, որը դառնում է Հայաստանում Վրշակունիների գերդաստանի հիմնադիրը: Վ. Լանգուան խոսում է Տիգրան Մեծի մասին, որն ունեցել է արքայից արքա փիրսոսը: Նեկո հիշապակվում է Վրգար թագավորը, որն, ըստ ավանդության, նամակ է գրել Դիսուս Քրիստոսին և եղել է վերջինիս ժամանակակիցը: Ըստ Մովսես Խորենացու հաղորդածի՝ Վ. Լանգուան նշում է, թե Վրգար թագավորը հավաքագել է Դիսուսին: Հայագետը Տրդագ Մեծի և Գրիգոր Լուսավորչի ժամանակների Հայաստանը դիմում է որպես փառակետ մի էջ երկրի պարմության մեջ, որին հաջորդող շրջաններում խիստ սրվում են հայպարսկական հարաբերությունները և զրադաշտականության հակամարդությունը քրիստոնեության դեմ:

Վ. Լանգուան ճշգրտեն է գնահատել Մեսրոպ Մաշտոցի այրութենի դերը հայ ժողովրդի կյանքում. «...Սուրբ Ներսեսի աշակերգը՝ Մաշտոցը, այդ ժամանակաշրջանում շնորհեց իր ազգին մի այրութեն, որը պահպանվել է մինչև մեզ՝ շնորհիվ իր լեզվի, գրականության և կրոնի, և որը դարձել է իր ազգության զիսավոր հիմքը»:

Հայագետը ներկայացնում է Վրշակունիների ամկումը, պարսիկների ձեռնարկած կրոնական հալածանքները, խոսում Վարդան Մա-

<sup>10</sup>Մովսես Խորենացին իր «Հայոց պատմութեան» ԽԱ գուխը կոչել է՝ «Որ ի Սկայորդտյան Պարոյ՝ առաջին ի Հայոց թագավորը, օգնական լինի Վարբակայ Մարի, բատնալով գթագաւորութիւնն Սարդանապալայ»: Մ. Խորենացու երկիր աշխարհաբար թարգմանության հեղինակը՝ Սրբ. Մախմասանը, ուշագրավ բացագրություն է վոկել Մ. Խորենացու հենքնայլ մտքին. «Եւ այժմ ահա զուարձացացյ, ոչ փոքր ինչ կրելով խնդրութիւն, հասանելով ի գեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախաւոյն սերուներ ի թագաւորութեան հասանեն յաստիճան: Վասն որոյ արժան է մեզ ասպանօթ մեծ գործ կատարել, և բազում ասել ատարկութիւնս ճառից. գորոց մեզեն իսկ զիմունս այսպիսից բանից ընթեռնու արժանաւորեցար ի չորս հագներգութիւնս. զարգանատին ի բանս և զիմաստնոյն իսկ և ի մեջ իմաստնոց իմաստագնինին (փե՞ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 64-65): Սրբ. Մախմասանը ծանրթագրությունների բաժնում գրում է. «...որովհետք Խորենացու խոսքը, թե այսպես պետք է մեծ գործ կատարենք, չի կարող վերաբերվել Պարույրին կամ Սկայորդուն, որոնց մասին շար քիչ բան է գրում, այլ հարկացն Տիգրան Երվանդյանին). իսկ այդ երեք գործերը փայլեցնում են Դավիթ Անհաղթի լեզուն և ոճը: Իսկ թե ինչու պարզ՝ անունը չի փայլիս Խորենացին՝ ինձ թվում է, թե սա հեքինանք է նրա բարեկրթության և փափկանկարության: Ընդհանուր ավանդությամբ՝ Դավիթ Անհաղթը Խորենացու բարությունը քրոց որդին էր, ուստի հեղինակն անհարմար է գրել իր գրքում գրվարանն իր բրոց որդուն» (փե՞ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 470):

միկոնյանի բարձրացրած ապստամբության, Հայաստանի՝ մարզպանական երկիր դառնալու, արաբական արշավանքների մասին:

Վերջապես 9-րդ դարում Մեծ Հայքում վերականգնվում է հայկական թագավորությունը, և Բագրատունիների թագավորական նստավայրը դառնում է Անին:

Վ. Լանգլուան սխալվում է, եթե ասում է, թե վերջին Գագիկ Երկրորդ Բագրատունին իր երկրի բարձր հանձնել է Բյուզանդիային և դրանից հետո նրան սպանել են<sup>12</sup>:

Անին բյուզանդական կայսերը հանձնել են Վեստ Սարգիսը և Պետրոս Գեղադարձ կաթողիկոսը: Վ. Լանգլուան խիստ համառոք խոսում է Կիլիկիայի Ռուբինյան, այնուհետև Լուսինյան թագավորությունների մասին: Ցուրովի ափսոսանքով հայագեղը նշում է, թե Հայկի կողմից սպեղծված հնագույն պետությունն ընկավ մահմեդականների լջի վակ: Սակայն ինչպես նրան ժամանակակից մյուս հայագեղները, Լանգլուան է նշում է, թե Հայաստանի մի զգայի մասը 19-րդ դարում միացել է Ռուսաստանին և պահպանվել:

Գրքի երկրորդ մասում ժամանակագրական կարգով թվարկվում են հայ գրողները՝ սկսած չորրորդ դարից մինչև 19-րդ դարի 60-ական թվականների վերջը, սակայն հարկապես վերջին դարերի մարդենագիրների շարքում կամ բացթողումներ, իսկ 18-19-րդ դարի գրողներ ճանաչվում են միայն Միհիթարյանները: Վ. Լանգլուան խորապես համոզված է, թե հեթանոսական շրջանում հայերն ունեցել են գրականություն, որը չի պահպանվել: Նա արդահայքում է արդեն մերժված մի կարծիք, թե չորրորդ դարի հեղինակներ էին Գրիգոր Լուսավորիչն ու Ազաթանգեղոսը: Որպես մեսրոպագրաց գրականության սկիզբ՝ ընսում է հինգերորդ դարը, մասրամասն խոսում գրերի սպեղծման պատմական հանգամանքների մասին: Հինգերորդ դարի մարդենագիրներ է համարում Եզնիկին, Խորենացուն, Սամբրե Վերծանողին՝ Մ. Խորենացու եղբորը, Հովհան Մանդակունուն, Եղիշեին, Ղազար Փարատեցուն, Դավիթ Վիլհոլդին: Վեցերորդ դարի հայ մարդենագիրներից հիշաբակում է Արքահամ Եփեսոսացուն, Պետրոս Սյունե-

<sup>12</sup>Langlois Victor, Notice sur le couvent Arménien de l'île S. Lazare de Venise, p.42.

Տակո Վկիքոր Լանգլուան ծանոյ չի եղել Մարի Բրոսեի երկահարոր մեծարքեր ու սումանիքությանը ("Les ruines d'Ani"), որի մեջ ներկայացվում է Գագիկ Երկրորդի արծանապահիվ պատասխանը Մոնամախին, եղան վերջին Վեստ Սարգսի և Պետրոս կաթողիկոսի միջոցով պահում է Անին: Գագիկ Երկրորդի պատասխանը հետևյան է: «Ըստուններ, որ նրանք տվին դրանք, դու, ուրեմն, կարող ես մրածել, թե դու՝ ես դրանց ընթե գերը: Ինպէ՞ս կարող ես դու վերցնել ուրիշի թագը և քաղաքները. որդե՞ն է քո արդարությունը» (դրւ M. Brosset, Les ruines d'Ani, capitale de l'Arménie, sous les rois Bagratides, aux Xe et XI s., histoire et description; IIe partie, 1861, p.135):

ցուն, յոթերորդ դարից՝ Կոմիտաս կաթողիկոսին, Հովհան Մամիկոնյանին, Անանիա Շիրակացուն, Մովսես Կաղանկապիվացուն, ութերորդ դարից՝ Հովհան Օձնեցուն, Ստեփանոս Սյունեցուն, 9-10-րդ դարերից՝ Հովհաննես Դրասխանակերպցուն, Թովմա Արծրունուն, գրաներորդ դարից՝ Սամվել Կամրջաձորցուն, Մեսրոպ երեցին, Գրիգոր Նարեկացուն, Կողիկ Վարդապետին:

Գրիգոր Նարեկացուն Վ. Լանգլուան բնութագրում է հետևյալ կերպ: «Գրիգոր Նարեկացի՝ պերճ գրող, վաեմ բանասրեղծ, Հայաստանի Պինդարոս<sup>13</sup>: Նրա ինսունիինք սրբազն սորերը միացնում են բանասրեղծական կապարելության բոլոր գեսակները: Նրանց ոճը վաեմ է, գրված բանասրեղծական արձակով, միգերը մեծախորհուրդ են և հիասքանչ: Վյո երկի բազմաթիվ հրապարակությունների մեջ լավագույնը Գաբրիել Ավետիքյանի ծանոթագրածն է»:

Դիշաբակվում են և չորս ներբողներ՝ նվիրված Սուրբ Խաչին, Սուրբ Կույսին, Առաքյալներին, Սուրբ Հակոբ Մծրնեցուն<sup>14</sup>:

Տասնմեկերորդ դարում հիշաբակում է Գրիգոր Մագիստրոսին, Պետրոս Գեղադարձին, Անանիա Սանահնեցուն, Արիստակես Լաստիվերցուն, Գրիգոր Վկայատերին, Սիսիանոսին, գրասներկուերորդ դարում՝ Ներսես Շնորհալուն, Հովհաննես Սարկավագին, Մագթեսոս Ռուհայեցուն, Սամվել երեցին, բժիշկ Միսիթար Շնորհուն, Գրիգոր Տղային, Ներսես Լամբրոնացուն, Միսիթար Գոշին, գրասներերերորդ դարում՝ Գրիգոր Ակեռացուն, Միսիթար Անեցուն, Արիստակես Քերականին, Հովհաննես Վանականին, Վահրամ Մեծին, Կիրակոս Գանձակեցուն, Մաղաքիա Աբեղային, Վահրամ Շաբունուն, 13-14-րդ դարերում՝ Հովհաննես Երզնկացուն, Ստեփանոս Օրբելյանին, Խաչագուր Կեչառեցուն: Տասնինեկերորդ դարում՝ Թովմա Մեծոփեցուն, բժիշկ Ամիրդովլաթ Անասիացուն, գրասնոթերորդում՝ Սիմեոն Լեհացուն, որը լավիներենից թարգմանել է Հիոնիսիոս Արեռապացու փիլիսոփայական-ասրբածարանական խրթին գործերը, բառարանագիր Ստեփանոս Ռոշբային:

Վիկոոր Լանգլուան մեծ հիացմունքով է խոսում հարկապես 17-րդ դարում աշխարհի փարեր մասերում բացված հայկական տպարանների մասին: Դրանք բացվում են Վենետիկիում, Հռոմում, 1616-ին՝

<sup>12</sup>Պինդարոս - հույն քնարերգու (ծնվ. Ք.ձ.ա. 518, մահ. 438): Տաղում է դորիական մեծ ընկանառիքոց: Քնարերգական արվեստը սովորել է Վենետիկում: Նրանից մեզ են հասել 4 գրքեր: Գրել է հիմներ, դիմերամբներ: Եր վաեմ ոճով բնարեգությունը հասցեկ է կապարելության: Ք.ձ.ա. 480-ին եղել է փառքի գենիթում, վախճանվել է լինելով շաբ մեծապահիկ:

<sup>13</sup>Գրիգոր Նարեկացու այս չորս ներբողների մասին գենե Խաչագրյան Պողոս. Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 81-93:

Լեոպոլ-ում, 1624-ին՝ Միլանում, 1633-ին՝ Փարիզում, 1640-ին՝ Նոր Ջուղայում<sup>14</sup>, 1640-ին՝ Լիվոռնոյում, 1660-ին՝ Ամստերդամում, 1673-ին՝ Մարսելում, 1677-ին՝ Կոստանդնուպոլիսում, 1680-ին՝ Լեյպցիգում, 1690-ին՝ Պադուայում: 17-րդ դարի մատենագիրների մեջ հիշաբակում է Առաքել Շավիթեցուն, որը հավաքում է իր ապրած ժամանակաշրջանի դեպքերը՝ 1601-ից մինչև 1662 թթ: Ուկան Երևանցին սկզբում ուղարկվում է Տուլանդիա, ապա Մարսել՝ հայոց փաղագրական գործ զարգացնելու համար և ի թիվս այլ գործերի հրաժարակում է Ասպարաշունը:

Վ. Լանգուան ժամանակագրական կարգով շարունակում է հայ գրողների թվարկումը 18-րդ դարում: Կոմիքասը՝ մի մարդիրոս, Կ. Պոլսում 1707-ին գրում է բազում գործեր, որոնց թվում մի ժամանակագրություն՝ հոյների, հայերի, պարսիկների մասին: Նրա Եղբայրը՝ Երեմիան, թողել է պարմական բնույթի գործեր:

Մխիթարյանների փաղագրած բազմաթիվ գործերի մեջ կարևոր է նկարագրող Ասրվածաշունը, որն, ըստ Վ. Լանգուայի, իր օրերում շաբ եզակի ու վնարված գիրը էր Եվրոպայում<sup>15</sup>: Նա կարևոր է համարում Մագրեսոսի Ավելարանի բացարրությունը, Հայերենի թերականությունը, Մեծ բառարան Հայկացյան լեզվի երկը:

18-րդ դարում հանդես եկած գրողներից հիշաբակվում է Մաղաքիա Տիրացուն, որը գրել է փարեզրություն ու վերջում ավելացրել է իր ժամանակի դեպքերը: Վ. Լանգուան որպես բեղուն գրող հիշաբակում է Կոստանդնուպոլիսի պարրիարք Հակոբ Նայսանին: Նա խոսում է Աթանասի կազմած Եռակեզու բառարանի մասին՝ իբրահիմ, հայերեն, թուրքերեն: Հայագետը մի առանձին հիմացնունքով է խոսում Մի-

<sup>14</sup> Նոր Ջուղայի փաղարանը, որն Արևելի առաջին փաղարանն է եղել, գործել է 1636-ին, Խաչագործ Կեսարացու ջանքերով:

<sup>15</sup> Խոսքն այսինք, անշուշփ, 1733-ին Մխիթար Սեբաստիացու ջանքերով փաղագրված Ասրվածաշնչի մասին է, որի փիդոսաթերթի վրա գրված է. «Ասրվածաշնչ» գիրը հնոց եւ նորոց կրակարանց, շարակարգութեամբ նախնացն մերոց եւ ճշմարդասիրաց թարգմանչաց: Զոր զիմի ամաց բազմաց Յամի Տեառն 1666, և ի թուին Հայոց Ոճ-Ժե, հրամանաւ Տեառն Յակոբայ Հայոց Կաթողիկոսի զիմակարգեալ և դիմեսեալ ըստ Հագինացոց, նաև զիմամայնութիւն հանուրց գրոց ասպուածանչից իրերաց առնթեր կարգեալ քեառն Ուկանայ վարդապետի Երևանցւոյ և առաջնով դրագութեամբ ի լոյս ածեալ: Խսկ այժմ նոյն լաւագոյն թղթովք, ազնուազոյն պարկերօք, գեղեցկագոյն ծաղկագործ, զգուշագոյն սրբագրութեամբ, և բազմօք ծախփոք վերսպին դրագութեամբ ի լոյս ածեալ, աշխաբահրութեամբ և ջանի Տեառն Մխիթարայ Վարդապետի Սեբաստիացու՝ Արքայ Հայր կոչեցելոյ: Ի փասու մեծագոյն Ասպուծոյ: Եւ ի յօդութ մասնկանց Եկեղեցւոյ: Յամի Տեառն 1733 և թուին Հայոց ՈճԶԶԲ (Այս գրի մասին մանրամասներ տե՛ս Ն. Ուկանյան, Բ. Կորկուդյան, Ա. Սավայսան, Հայ գիրը 1512-1800 թվականներին, Հայ հնագիտ գրքի մատենագիրություն, Երևան, 1988, էջ 311-313):

քայել Չամչյանցի «Հայոց պագմության» մասին, որը կազմված է երեք սպարածավալ հապորներից, գրված է մեծ բազմագիրակությամբ և իր տեսակի մեջ եզակի է որպես ամենամբողջական Հայոց պագմություն: Նա հայքնում է, թե Մ. Չամչյանցի պագմությունը թարգմանվել է անգլերեն ու իբրահիմ, իսկ Ղ. Ինճիճյանի հետոսությունն ու աշխարհագրությունը՝ գերմաներեն: Մխիթարյաններից շաբ բարձր է գնահապում Ագուս Գյուվերին, Գ. Ավելիթյանին, Հյուրմյուզյան եղբայրներին, Գ. Այվազովսկուն և հապկապես Ղևոնդ Ալիշանին, որին անվանում է աշխարհագրագետ, պարմաբան, բանասեր, համայնագիրակ միաձող:

Վիկոր Լանգուան մանրամասն թվարկում է այն կարևոր երկերը, որոնք Մխիթարյանների կողմից թարգմանվել են հայերեն: Դրանցից են Բայրոնի քնարերգությունը, Կեսարի կյանքը, Հոմերոսի «Իլիական» ու «Ոդիսականը», Սոֆոկլեսի ողբերգությունները, Վերգիլիոսի բոլոր երկերը, Դորացիոս, Ցիցերոն, Սենեկա, Պլուտարքոս, Թեոփրատես, Սուլը Ավգուստին և այլն, և այլն:

Վ. Լանգուան կարևոր հրաժարակումներից է համարում Դին և Նոր Կովակարանների, Սաղմոսների, «Ժողովողի», Մագրեսոսի Ավելարանի, Պողոս Առաքյալի թղթերի մեկնությունները, հանրագիրարանների փաղագրությունները՝ կենսագրական, պագմական, 18-րդ դարի համաշխարհային պագմությունը, Ֆրանսիայի պագմությունը, Առուական կայսրության պագմությունը, Ամբողջական խոսք Հոեփորական արվեստի, Թվաբանության, Տոմարագիրության, Երկրաչափության, Եռանկյունաչփության, Նավարկության, Մանրանկարչության, Բժշկության, Ֆիզիկայի, Արվեստաբանության, Փիլիսոփայության, Արդարադափության մասին գրքերը: Մխիթարյանները հրաժարակել են վասներկու հապորից կազմված երկրագնդի աշխարհագրությունը, մեկ այլ ընդհանուր աշխարհական գրքություն՝ քարտեզներով և պարկերազարդ ներդիրներով, որում Հայասպանի հավաքած իրաշալի լուսաբանված է հին հեղինակների և բոլորովին նոր ճանապարհորդների կարծիքների հիման վրա: Մի աշխարհագրական ավլաս, համարված լավագույնը՝ իր նախաբանով, մաթեմատիկական, ֆիզիկական և քաղաքական գիւղաներով: Վ. Լանգուան խոսում է նաև երկիակիր «Նոր բառգիրը հայկագեան լեզուի» բառարանի մասին՝ լոյս գիտած 1836-ին<sup>16</sup>: Հայագետը նշում է, թե հայերենի այդ ակադեմիական բառարանը բառե-

<sup>16</sup> Տե՛ս Նոր բառգիրը Հայկագեան լեզուի, երկասիրությին երից վարդապետաց յաշակերգութենք, մեծին Մխիթարյա Աքբարի Գարբիերի Աւելիթյան, Հ. Խաչարոյ Մխիթարյան, Հ. Մկրտիչ Ազերեան, հ. I, Վենետիկ, 1836, հ. II, 1837:

որ բացագրությունները փալիս է ըստ դասական հեղինակների ընագրերում ունեցած գործածության՝ գուգակցելով դրանք հունարենի ու լապիներենի հետ: Նա նշում է նաև Արտեն Բագրափունու քառասուն փարված գիտական հետազուրման արդյունքը հանդիսացող հայերենի լիակաբար քերականությունը: Նրա կարծիքով Արտեն Բագրափունին հայ բանաստեղծություն քերեց Հորացիուսի, Վերգիլիոսի, Միլիոնի բանաստեղծական արվեստը: Տայ ժողովուրդը հպարփ է, որ Արտեն Բագրափունին ստեղծել է էպիկական մի հրաշալի երկ՝ կոչված «Հայկ»<sup>17</sup>:

Վ. Լանգլուան հիշաբակում է այն համեմատական քերականություն-բառարանները, որոնք գրել են Արտեն Բագրափունին (Փրանս-հայերեն), իդական, հայերեն, թուրքերեն-երկխոսություններով (Գարդիել Ավետիքյան), անգլերեն-հայերեն, հայ-անգլերեն (Պասկալ Օշե), ռուս-հայերեն (Մինաս Մեղիչի), գերմաներեն-հայերեն (Դինոգլու), մի բազմաթերթ քերականություն, որը պարունակում է փարբեր լեզուների գլխավոր արմագները (թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, թաթարերեն) ուրիշ լեզուների հետ ունեցած վերլուծական համեմատությամբ, որի հեղինակը վերսպին Մինաս Մեղիչին է, այդ երկն արժանացել է ռուսական ցար Նիկոլայ Առաջինի Օսկե մեդալին:

Վ. Լանգլուան բոլոր երկրների գիտնականներին մագուցած նվեր է համարում մի շարք հունական ընագրերի հայերեն հրաժարակությունները, որոնք առավել ամբողջական պահպանվել են հենց գրաքարյան թարգմանությամբ, ինչպես, օրինակ, Եվսեբիոսի Ժամանակագրությունը և Փիլոն Եբրայեցու երկերը: Հայագետը շաբ մեծարժեք գործ է համարում Սուրբաս Սոմալի "Quadro"-ն, որը դար առ դար ներկայացնում է հայ գրականության անցած ճանապարհը<sup>18</sup>:

Հայագետը նկարում է, որ նույն պահին, երբ Միհիթարյան միաբանությունը եռանդուն զարկ էր գրել հայ գրականության զարգացմանը, նա մենակ չէր, բոլոր այն գեղերում, որդեռ հայեր կային, մրածում էին հայ գրականության առաջնթացի մասին:

Հետազուրման վերջում Վ. Լանգլուան խոսում է այն հայագետների մասին, որոնք իրավամբ խթանել են Եվրոպայում հայագրության զարգացմանը: Առաջինը նրանց մեջ Սեն Մարտինն է, որը գրել է Հայաստանի պատմության և աշխարհագրության մասին՝ «...Որոնք իրենց ճշգրիպ խորագրով համարվել են մեր ժամանակաշրջանի ամենագեղեցիկ գրական հուշարձանները»<sup>19</sup>: Եթե վաղաժամ մահը

<sup>17</sup>Խորը 1858-ին Վենետիկում լույս բեսած Արտեն Բագրափունու «Հայկ Դիցազ» ծագալուն պետք մասին է:

<sup>18</sup>Sté' u Somal S., Quadro della storia letteraria di Armenia, Venezia, 1829.

<sup>19</sup>Langlois Victor, Notice sur le couvent Arménien de l'ile S. Lazare de Venise, p. 76.

Սեն Մարտինին չկրտեր գիտությունից, ապա հայկական մշակույթը Ֆրանսիայում կափանար շաբ մեծ զարգացում:

Իր ժամանակի նշանավոր արևելագետների մեջ Վ. Լանգլուան առաջինը նշում է Ռուսական գիտությունների ակադեմիայի անդամ Մարի Բրոստենին, հետո Բորեին, աբքա Կապելլեսփիին, Նոյմանին, Պետերմանին, Ֆելիքս Նեկին և Էդուարդ Դյուլորիեին:

Արևելքի վրա հագրկապես ուշադրություն են սկսում այն հնագիտական հայկնագործումները, որոնք կափարվում են Եվրոպացիների կողմից՝ արևելքում կափարած պեղումների հետևանքով: Շարդենի, Թուլուննֆորսի, Ժորեի ուղղությունները ներկայացնում են Հայկի երկիրը: Եյուբուա դը Մոնպեռոն առաջինն էր, որ մանրախույզ ձևով և խնամքով ներկայացրեց Մեծ Հայքը, նրան հետևեցին Մ. Թերսիեն, Բրոստեն, Վրիշը, Վազմերը, Խանիկովը և հայր Ներսեսը: Նրանք այցելեցին Կովկաս, եղան Հայաստանում և իրենց ճամփորդական գեկույցները բացարկեցին Արշակունիների, Բագրափունիների, Ռուբինյանների մասին: «Վյոր էլ,- ասում է Վ. Լանգլուան, խիզախ հետազուրողներն ամեն օր այցելում են Հայաստանի քիչ հայկնի մասերը, և ոմանք այցելում են նրան հարևան երկիրը՝ Սիրիա, որը կան գաղթական հայեր՝ ասիական հողում խաչակիրների հանդիպած առաջին քրիստոնյաները<sup>20</sup>»:

Վիկոր Լանգլուայի գիրքն ավարտվում է Միհիթարյանների՝ նրա մասին ասված խիստ համառոր եզրափակիչ խոսքով. «Վյո գործի հրաժարակողներն իրենց պարզեն են համարում մի քանի քառ ավելացնել պարոն Վիկոր Լանգլուայի մասին, որին վաղաժամ մահը չափազանց շուրջ կիրեց հայագիտությունից: Նա ոչ միայն երևելի հայագետ էր, այլև գիտնական հայագետ, որն իր օգբակար ու հետաքրի երկերով մեծ ծառայություն է մագուցել գրական աշխարհին<sup>21</sup>»:

Եվ նշվում են Վիկոր Լանգլուայի գիտական արդարությունը ամենակարևոր գործերը՝

- ա) Ճամփորդություն դեպի Կիլիկիա,
- բ) Հայկական դրամների գիտական մեկնաբանում,
- ց) Ռուբինյան գեղարդաստանի ժամանակահարվածի փաստաթղթերի ժողովածուի հրաժարակում,
- դ) Միհայել Ասորու ժամանակագրության թարգմանություն,
- ե) Միհիթարյանների գործակցությամբ հայ պատմիչների ժողովածուի հրաժարակում, որի առաջին հագործն արդեն լույս է դրեսել, և

<sup>20</sup>Նույն գեղում, թ. 77:

<sup>21</sup>Նույն գեղում, թ. 77-78:

Երկրորդը գրնվում է լիպարանում<sup>22</sup>:

\* \* \*

Գրական առումով մեծարժեք է Վիկտոր Լանգլուայի ուսումնասիրությունը՝ նվիրված Գրիգոր Մագիստրոսին և նրա թղթերին, որը լույս է փետել “Journal Asiatique”-ում 1869-ին<sup>23</sup>. Վիկտոր Լանգլուան մանրամասն ներկայացնում է Գրիգոր Մագիստրոսի կյանքը, գործունեությունը և ընթերցողին ու եվրոպական հայագիտության է հանձնում միջնադարի բացառիկ տաղանդի վեր այդ գիտնականի ու մագիստրի թղթերի համառորդ թարգմանությունը՝ թվով ութսուներեք նամակ: Նրա երկից երևում է՝ հեղինակը հրաշալի ուսումնասիրել է լիպարանմեկ դարերի պատմական ժամանակաշրջանը և քաջածանոթ է այդ ժամանակահպվածը լուսաբանող պատմական աղբյուրներին, որոնց հաճախակի անդրադառնում է՝ համապատասխան նշումներ կափարելով գողագիտություն:

Վիկտոր Լանգլուան իր հետազոտության սկզբում նշում է, թե հետազոտվող հայ նաբենագիրը չի պատկանում կրոնական դասին, սերում է Հայաստանի նշանավոր նախարարական գներից մեկից, եղել է զինվորական և իր գործունեությամբ կարևոր դեր է կափարել հայրենիքի ճակարտական խնդիրներում: Նրա կյանքի վերաբերյալ հասել են մի շարք փաստեր: «Եվրազուրության սկզբում հայագեցը գրեսականորեն հիմնավորում Գրիգոր Մագիստրոսի դարակազմիկ երևույթ լինելը հայ ժողովրդի պատմական ընթացքի և նրա գիտական ու գրական մորքի զարգացման մեջ: Զարմանալի է՝ քաղաքական ու ուսումնական շարունակական զբաղվածության մեջ գրնվող գործիքն ինչպես էր կարողանում ժամանակ գրնել նվիրվելու նաև գրական ու գիտական գործունեությանը: Ազգային միտքը նոր ծևով զարգացնելու համար Գրիգոր Մագիստրոսը հիմնովին ուսումնասիրեց հայ գրական արժեքներն իրենց ամբողջության մեջ, նա սովորեց հունարենն ու ասորերենը, հավաքեց ծեռագիր արժեքներ այդ երկու լեզուներով և թարգմանեց դրանք հայերեն, որոնց մասին նա վկայում է իր բառում թղթերի մեջ<sup>24</sup>:

Գրիգոր Մագիստրոսն ականաբես էր Հայաստանի օրինական

<sup>22</sup>Նույն գեղում, թ. 78:

<sup>23</sup>V. Langlois, Mémoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869.

<sup>24</sup> Նույն գեղում, թ. 2:

վերերի զահի անկմանը, որը գեղի ունեցավ մեր թվարկության 11-րդ դարի կեսերին մոտ: Այդ ժամանակահպվածում Հայաստանը բոլոր կողմերից ենթարկվեց մահմետակաների հարձակմանը՝ միաժամանակ պայքարելով Բյուզանդիայի բռնապետության դեմ: Քաղաքական այս ծանր վիճակը՝ հարձակումները հույների, պարսիկների, արաբների կողմից, աննպաստ էին ազգային գրականության զարգացման համար: Գրիգոր Մագիստրոսը, սակայն, ջանքեր չի խնայում բարձրացնելու ազգային լեզուն և գրականությունը: բացում է դպրոցներ, խրախուսում ազգային հավաքն ու լեզուն պահպանող հոգևորականներին, պաշտպանում նրանց աղանդավորներից և օգար նորաբանություններից<sup>25</sup>: Մագիստրոսն այնքան էր նվիրված հայ գրականությանն ու հայ եկեղեցուն, որ երեք օրում գրում է մի հոգևոր պոեմ՝ իր մնաց նվիրումը հասպալող<sup>26</sup>: Վ. Լանգլուայի կարծիքով Գրիգոր Մագիստրոսի բազմագիտակությունը (érudition) երևում է հենց նրա թղթերից: Նա չափազանց շատ էր կարդում և յուրացնում էր շատ գիտելիքներ, ու դրանք շարադրում էր իր թղթերում: Նա հիանալի գիտեր հոգևոր և աշխարհիկ պատմությունը, հունական և արևելյան դիցաբանությունը, քերականությունը, փիլիսոփայությունը, բնագիտությունը, բժշկությունը, մաթեմատիկան և սիրում էր քննախոսությունը այդ գիտաճյուղերի մասին: Նրա ամեն մի նամակը պարունակում է ամենապարբեր թեմաների շուրջ հետաքրքիր նյութեր և «մեր հետինակին առավել ճշգրիտ բնորոշում չի կարող լինել, քան կոչել հանրագիտակ (encyclopédiste)»<sup>27</sup>: Վիկտոր Լանգլուան ասում է, թե իրեն երկար են զբաղեցրել Գրիգոր Մագիստրոսի թղթերը և, ցավոք, ինքն իր ձեռքի փակ ունի այդ թղթերի միայն մեկ ժողովածու, որը պատճենն է Էջմիածնի մի ձեռագրի, որը պատկանում է Շուսապանում գտնվող Վկանիմիրի գիմնազիայի վնօրենին՝ Ս. Էմինին, որը սիրով թույլ փվեց այն արդարությունը: Այս ձեռագիրը ճանաչվում է որպես Մագիստրոսի թղթերի ամենալիվ ժողովածուն և պարունակում է ութսուներեք թղթեր: Նա հիշաբակում է, որ թղթերը ճշգրիտ հասկանալու համար դիմել է Փարիզի Սուլադ-Ռաֆայելյան վարժարանի վնօրեններին, որոնք պատրաստակամ օգնել են վերծանելու այդ հսկայածավալ նամակագրությունը: Լանգլուան հիացմունքով է խոսում Մուլայան վարժարանի աշակերտների գրագիտության և եռանդի

<sup>25</sup>Նույն գեղում, թ. 3:

<sup>26</sup> Խոսքը «Առ Մանուչե» կամ «Հազարարդեան» պոեմի մասին է, որի սկեղծագործական պատմության մասին խոսք կիսի այս գրում:

<sup>27</sup> V. Langlois, Mémoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.3.

մասին, իսկ նրանցից մեկը՝ Մ. Էմինի անվանակիցը, մեծագույն եռամբով ընդօրինակեց ձեռագիրը: Միաժամանակ այդ ընդօրինակողի խոր ծանոթությունը թղթերի բնագրին մեծապես օգբակար էին նրա միջոցով թղթերի չհասկացված հագվածները ընկալելու համար: Վ. Լանգուան նշում է, թե առաջին անգամն է, որ Գրիգոր Մագիստրոսի թղթերը հետազոտվում են իրենց ամբողջության մեջ<sup>28</sup>: Ուսումնասիրության 4-րդ էջից սկսած Վիկոր Լանգուան շարադրում է Գրիգոր Մագիստրոսի մանրամասնված կենսագրությունը: Գրիգոր Մագիստրոսը սերում է Սուլեն-Պահլավ գոհիմից, որոնք ծագում են Պարսից Արշակունիներից<sup>29</sup>: Վ. Լանգուան ասում է, որ Գրիգոր Մագիստրոսը ծնվել է 10-րդ դարի վերջին կամ 11-րդ դարի սկզբներին<sup>30</sup>: Նրա հայրը նահապակ Վասակն էր՝ Բջնի ամրոցի տերը (Վ. Լանգուան Բջնին ծանոթագրում է որպես Վրարապյան նահանգի Նիգ գավառի ամրոց): Դայագեփը, հենվելով Մագթեոս Ուռիայեցու որոշ փաստերի վրա, եզրակացնում է, թե Գրիգոր Մագիստրոսն իր արմագներով կապված է Գրիգոր Լուսավորչի և Սահակ Պարթևի հետ: Գրիգորը երիտասարդ հասակից նվիրվում է գինվորական գործին և մասնակցում է ճակարամարդերի և Բյուզանդիայի կայսր Մոնամախի ու հայոց արքա Գագիկի ժամանակ շափ նշանավոր գինվորական էր ու հայվնի իր քաջությամբ: Երբ Գրիգորի հայրը՝ Վասակ Պահլավունին, սպանվում է<sup>31</sup>, նա փոխարինում է իր հորը: Դայագեփը նշում

<sup>28</sup> Գրիգոր Մագիստրոսի թղթերի բնագրին առաջարանով ու ծանոթագրություններով առաջին անգամ հրապարակել է Վ. Կոստանյանց Ալեքսանդրապոլում, 1910-ին (Տե՛ս Գրիգոր Մագիստրոս, Թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910): Վ. Կոստանյանցի թղթերի ժողովածուն ապարագում է ԶԲ (82) թղթով, որն ունի հետևյալ խորագիրը՝ «Առ ոմն, որ իմաստակը ոչ ուղապես» (էջ 233): Նրանից հետո մինչև ԶԸ (88) գայիս են չափածո գրամքները որոնք «Առ Մանուչ» պոեմի հետ բառագիր են Գրիգոր Մագիստրոսի «Տաղասացութիւնը» ժողովածուի մեջ (փե՛ս Գ. Մագիստրոս, Տաղասացութիւնը, Վենետիկ, 1868): Այս ժողովածուի «Առ Մանուչ» պոեմի սկզբում Մագիստրոսը մանրամասն լկարգում է պեսի սրբեղման պարունակությունը: Նա արաք բանասթեղծ Մանուչին բացարդում է՝ եթե Մուհամեդը 40 փարում գրեց Ղուրանը, ապա ինքը 4 օրում լսությանը կողածնի չափածու: Այս առաջարկը Մանուչին թվում է անիրական այն ասթիճան, որ գրաք է զայիս դաշտանափոխ լինել: «Իսկ նա բազում գրաւս ի մեջ եղեալ, թե կարացես առնել դու զայ, յայնժամ ինին և ես բրիսպունեայ» (էջ 9): Վ. Կոստանյանցը թղթերի ծանոթագրությունների մեջ (էջ 247) նշում է, թե առաջին անգամ է ամրոցությամբ հրապարակում Մագիստրոսի թղթերը, մինչև այդ նրանցից մի բանից որ հրապարակել են Մ. Մտերյանը, Մ. Էմինը, Վ. Թորգոնյանը, Ն. Բյուզանդացին: Նա ծանոթ է Վ. Լանգուայի թարգմանությանը և նշում է առյուրը (Journal Asiatique, Paris, 1869, ser. VI, t. 14, p. 5-64): Մագիստրոսի թղթերից բառագիր բառվածքներ կան Գ. Զարրիհանյանի, Գ. Խալաթյանցի, Ն. Մառի, Տեր-Մկրտչյանի, Մ. Չամչյանցի, Վ. Լանգուայի մոտ (էջ 248):

<sup>29</sup> Վ. Լանգուան իր ասածը հասպարելու համար հեղում է Ազաթանգեղուսի և Մովսես Խորենացու «Դայոց պարմությունների» համապատասխան հարվածները: Տեղին ենք

է այն որոշիչ դերը, որն ունեցել է Գրիգոր Մագիստրոսը Գագիկ Երկրորդին հովհաննես Սմբադ արքայի մահվանից հետո թափուր թագավորական գահին նսպեցնելու: Կարևորագույն խնդրում: Նա նաև ներկայացնում է Սյունյաց իշխան Վեսպ Սարգսի ուրնձգությունները արքայական գահի նկապմամբ: Վեսպ Սարգսի ապում էր Գրիգոր Մագիստրոսին, որն օգնում էր օրինական թագավորին՝ Գագիկ Երկրորդ Բագրադունուն, զահ բարձրանալ:

Դունած Վեսպ Սարգսի կազմակերպած խարդավանքներից՝ Գրիգոր Մագիստրոսը մեկնում է Տարոն՝ յուրօրինակ մի աքսոր իր համար, զբաղվում իր սիրելի գրական գործերով: Ս. Կարապետ վանքում նա հիմնում է իր դպրոցը, ուր հավաքում է արքակարգ ընդունակ աշակերպներ և սկսում է ուսուցանել նրանց: Վեսպ Սարգսին Անիի արքունիքում առավել մեծացնում է խարդավանքները Գրիգորի դեմ այն ասպիճան, որ վերջինս թողնում է Տարոնը և մեկնում Բյուզանդիայի արքունիքը՝ Կոստանդնուպոլիս: 1044-ին հասնում է Կոստանդնուպոլիս և այնուել ջերմ ընդունելության արժանանում: Նա Սուլը Սոֆիայի տաճարում հրապարակայնորեն բանախոսում է հույն փիլիսոփաների հետ, որոնք նրան համարում են Դայագեփը նշանավոր գի-

համարում այսպես մեջքերեկ Սբեկիանոս Մայնասյանի՝ Մ. Խորենացու պարմության հետքայ ծանոթագրությունը. «Պարթև թագավորների այս ցանկը, որ բերում է Խորենացին ԿԸ և Կթ գոլիխներում, համեմաբեցինք սինիրոնիկ ցանկի պարթևներական թագավորների շարքի հետք: Զնայելով այս երկու ցանկերի մեջ՝ մեջ՝ Գուրշմիթը բարձր է գնահատում Խորենացու բերած ցանկը, որ նա առել է Բարձումայից: Ըստ Գուրշմիթի՝ Խորենացու ցանկում կարծագիր կամ աննշան թագավորություններ կցված են Երկարավոր կամ փառավոր թագավորություններին: Այս ցանկում Պարթև թագավորների մահվան տարիները ճշգրիտ համապարասխանում են Ժամանակակից կասիկական հետինակների և դրամների դվյալներին: Առհասարակ Գուրշմիթը զգնում է, որ Խորենացին լսավանդայակ է Պարսից գործերին (փե՛ս Մովսես Խորենացի, Դայոց պարմություն, Աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Սփ. Մայնասյանի, Երևան, 1981, էջ 501):

<sup>30</sup> Վյժմ Գրիգոր Մագիստրոսի ծննդյան թիվը մոտավոր ծնով համարվում է 990 թվականը, իսկ մահվանը սպույզ է՝ 1058թ.:

" Վ. Լանգուանի գործակում հղում է Մագթեոս Ուռիայեցու պարմության հետևյալ հավաքածը. «Մելոյ միայնակ, քաջ Վասակը գազագած աղյուծին նման միաբնեց այլազգիների գործի մեջ և ճեղքելով դուրս եկավ: Կատաղի մարդիկ հոգնած՝ նա զնաց բարձրացավ Սերկանիի կոչվող լեռը և պատրիարքի փանջանքներից հանգստանում եր ժայռի հովին: Փախստական զյուղացիները թեսնում են նրան և ոճրացործ Կայենի նման մեկը, զբնելով նրան վշտահար քուն միտած, ուժգին հարված հասցեներվ՝ ժայռից ցած է զյուղում: Կահա այսպես մեռուակ քաջ Վասակ Պահլավունին (փե՛ս Մագթեոս Ուռիայեցի, Ժամանակական հարվածների, Երևան, 1973, էջ 9):

գուններից<sup>32</sup>: «Ենց Կոստանդնուպոլսում էլ նա ծանրթանում է երկու արաք Եմիրների հետ, որոնք հասպավվել են այդ քաղաքում: Այդ արաքներն են Մանուչեն և Իբրահիմը: Մանուչեն մի ջերմեռանդ մահմեդական էր, որ չէր ներում ավելարանիշներին, Սուլթանը գիրքը ոչ չափած գրելու համար: Գրիգորը արաք Եմիրին հաճույք պատճառելու համար գրագ է զայխ գրելու հազար գուղից բաղկացած մի պոեմ, որը կպագկերի Դին կրակարանի հիմնական դրվագները՝ մինչև Դիսուս Քրիստոսի գալը: Մանուչեն էլ խոսքանում է դառնալ քրիստոնյա՝ «եթե նա կապարի իր խոսքումը երեք օրում»<sup>33</sup>: Դա գուղի է ունեցել 1049-ին, Մագիստրոսը կապարել է խոսքումը և Մանուչեն հավաքափոխ է եղել:

Մեկ ուրիշ արաք Եմիր՝ Իբրահիմը, որը մայրական կողմից հայ էր՝ Սիսակից ցեղից, չափած նամակով դիմում է Գրիգոր Մագիստրոսին՝ նրան ներկայացնելով իր կասկածները քրիստոնեական հավաքի ճշմարիկ լինելու հարցում: Լանգուան ասում է, որ, ցավոք, այլ պարմական փասկեր Իբրահիմի մասին հայրնի չեն, բացի Գրիգոր Մագիստրոսի թղթերից:

Կոստանդնուպոլսում եղած ողջ ժամանակահավաքածում Գրիգոր Մագիստրոսը վայելում է Մոնամախ կայսեր բարեսիրությունը, որը նրան պարզեցում է Մագիստրոսի գիրդուը<sup>34</sup>:

<sup>32</sup>«Նմանապես և Գրիգոր Պահլավունին՝ (ինձ՝ Գրիգոր Մագիստրոսը-Ա. Դ.) Վասակի որդին, որը նոյնապես մեծ զիգելիքների տեր մարդ էր. նաև՝ հոռոմոց գրված բոլոր պատրաստաները հիացմունք էին պատճառում: Նա անշափ կրթված, բոլոր գիրություններն ուսումնափրած. Վստո՞ր Դին ու Նոր Կրակարանները կապարելապես յուրացրած մարդ էր: Նա իմաստաթերների հետ Սուրբ Սոփիայի ավրանում էր նստում և բանափում հոռոմ վարդապետների հետ: Սա ևս դասվում է հայ ժողովոյի վարդապետների շարքին» (գրե՞ս Մաքրենու Ուուհայեցի, Ժամանակագրություն, էջ 121):

<sup>33</sup> 1868-ին Վենետիկում լույս բեսած պոեմի նախարանում նշված է 4 օր և ոչ թե երեք, գուցե Վ. Լանգուայի ճեղքին եղած ընագրում երեք օր է եղել (գրե՞ս Գրիգոր Մագիստրոս. Տաղասացութիւնը. Վենետիկ, 1868. էջ 9): Մ. Չամչյանը նոյնպես նշում է 3 օր - Ա. Դ. (գրե՞ս Մ. Չամչյանց, Հայոց պարմություն, հ. II. էջ 927):

<sup>34</sup> «Վ. Լանգուան գողագակում տրամադրությունը այն համարելով մեծապահիկ դիլիդոս բյուզանդական արքունիքում և բարի բացարրության համար նշում է աղբյուրները՝ Ն. Խնձինյան, Մ. Չամչյանց, Մ. Չամչյանը գրում է. «Խսկ Գրիգոր Մագիստրոս ցուցանակ յանձնային հաւաքարմութիւն մեծ առաջ Մոնոմախոսի կայսեր, ևս և գործնական բազում երևելի գործն իշխանութեան նորին՝ պատուեցաւ ի նման և եան պարի մագիստրոսութեան, որ էր առուն մեծի իշխանութեան ի կարզս զօրավարաց և յայն օրէ կոչեցաւ նա մագիստրոս կամ մաժիստո» (գրե՞ս Մ. Չամչյանց, Հայոց պարմություն, հ. Բ. Երևան, 1984. էջ 929): Magister բառը՝ «Լատինско-ռուսկий словаръ»-ում բացարրված է՝ 1) начальник, глава, правитель, смотритель (գրե՞ս «Латинско-русский словаръ»- Մосква, 1986, стр. 466): «Նոր բարգիրը հայկակեան լեզուի» հեղինակները բացարրում են «Մագիստրոս-բառ լադիներն, Magister-պետ, գորապետ, իշխանապետ, ղուրա, որպիսի եղան և Գրիգոր Մագիստրոս, վասն որոյ դիսի ի վերացրի թղթոց նորա «Գրիգորի Մագիստրոսի գերապանծ իշխանի Պահլավունոյ հայոց»» (գրե՞ս Նոր բազգիրը հայկակեան լեզուի, հ. II. էջ 188):

Իմանալով բյուզանդական կայսեր՝ դեպի Մագիստրոսն ունեցած վերաբերմունքի մասին՝ Գագիկ Երկրորդը, լրջորեն վախեցած, դառնությամբ լի մի նամակ է հղում իր հին զորավարին: Գրիգոր Մագիստրոսը պատրաստանում է նամակին, բողոքելով իր անմեղության համար, նրան ասելով, թե մաքնության համար պետք է ամբաստանել միայն Վեսպ Սարգսին: Այդ նույն միջոցին բյուզանդական կայսրն ամեն գիտակի միջոցներ էր փնտրում Անին և Բագրատունիների հայկական գարածքները իր կայսրությանը միացնելու համար. միշտածում է Գագիկին կանչել Կոստանդնուպոլիս և Անին վերցնել նրա ձեռքից: Վեսպ Սարգսը, որը բյուզանդական կայսեր հետ նյութել էր դավը, շփապեցնում էր կայսերը Գագիկ Երկրորդին իր մուտ կանչելու համար: Եվ Գագիկը, հավաքալով կայսեր խոսքերին, որոշում է մեկնել<sup>35</sup>: 1044 թվականին Կոստանդնին Մոնամախը ուղարկում է բանակ՝ Անին գրավելու համար: Տեղի ունեցած ճակատամարտում հույները ջարդվում են: Վ. Լանգուայի կարծիքով Գրիգոր Մագիստրոսը չի եղել Անին բյուզանդացիների հանձնողների մեջ և չի եղել դավանան<sup>36</sup>:

Անին նվաճելուց հետո Գրիգորը շփապ թղղնում է Հայաստանը, մեկնում Կոստանդնուպոլիս, փորձում Գագիկին վերադարձնել գահին, սակայն, զգալով իր ապարդյուն ջանքերը, համակերպվում է սպեղծված քաղաքական իրավիճակին, հանձնում է Բջնին, իր մյուս

<sup>35</sup> Վիկոր Լանգուան Մաքրենու Ուուհայեցու ժամանակագրության. Մ. Չամչյանից պարմության համապատասխան հավաքածների հետ հղում է նաև իր օգտագործած՝ Վր. Լաստիվերցու պատմության հեքույալ մասը. «Չորս հարյուր իննաւունըրու թվականին առնվեց Անին, բայց ոչ պատերազմական կարգով, այլ խարենական խոսքերով. որպինքու ավելարանով ու խաչով երդիկելով համոզեցին Գագիկին՝ թագավորի հրամանով, որ ասում է. «Միայն թեզ գիտենելուց հետո թագավորությունն կրամ թեզ և ք թաղաքին ու երկրին հավիտենական ժառանգ կիսապատեմ»: Նևապես ասել են իմաստուները. իմաստունըրու երդում է, և անմիտը հավաքում. և դարձյալ. «Սրբուների խոսքերը լորի պես պարար են. և իմարները կլանում են դրանք»: Երդումների ու խաչի թե խակամության ու երկյուղած բնափորության պարճառով, չզիրեմ, Գագիկը հավաքաց և քաղաքի բանակիները գրեց Պեղորոսին, որ այն ժամանակ մեր Լուսավորի հայրապետական գահի աթոռակալն էր. և մեծամեծ ուխտ ու պայմանով երկրի բոլոր հոգսերը հանձնեց նրան: Նա Վահրամի և իրեն թագավորեցնող մյուս իշխանների խորհուրդը չկաց. այլ ենթարկվելով նենապակու Սարգսի սայրանքին՝ դրս եկամ քաղաքից ու զեաց Շունասպան անդառնայի ուղևորությամբ՝ կարթով բունված մի ծկան նման կամ ծուլակն ընկած մի թշունի պես: Թագավորը նրան գիտենելով՝ ոչ երդումները մարտարեց և ոչ է խաչի միջնորդությունը, այլ փակեց նրան իր մուտ ու պահանջեց. «Տո՞ւ ինձ Անին, և փոխարենը ես թեզ կրամ Մելիքինեն իր շրջակա զավառներով»: Բայց նա հանձն չառավ» (գրե՞ս Վրիտիկակեան Լաստիվերցի, Պատմություն, թարգմանությունը Վ. Ա. Գևորգյանի, Երևան, 1971, էջ 35-36):

<sup>36</sup> V. Langlois, Mémoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.10.

կալվածքները բյուզանդական կայսրությանը, փոխարենը քաղաքներ և գյուղեր սպանում Միջագետքում և հասպարվում այնքեղ<sup>37</sup>:

Վ. Լանգլուան գրում է, թե Միջագետքից բացի կայսրը Գրիգոր Մագիստրոսին է հանձնել Տայասպանի Տարոն և Վասպուրական նահանգների կառավարումը<sup>38</sup>: Այդ ընթացքում թուրքերը նոր հարձակում են սկսում, որի դեմ բյուզանդական կողմից կրվում են վրաց նշանավոր իշխան Լիպարիկը և հայերի կողմից՝ Գրիգոր Մագիստրոսը, սակայն միացյալ այս ուժերը պարփակում են, Լիպարիկը գերի է ընկնում, Գրիգոր Մագիստրոսը վերադառնում է իր նախավայրը: Ճակապամարդը դեղի է ունեցել Բասենի մոփ և ժամանակի պարմիչ Արիստակես Լասպիկերցին իր պարմության ժգ գլուխը կոչել է. «Այն մեծ պարերազմի մասին, որ եղավ Բասենի դաշտում, որտեղ հոռոմները պարփեցին»<sup>39</sup>:

Գրիգոր Մագիստրոսը վախճանվել է 1058-ին՝ առաջացած տարիքում, նրա մարմինը գեղափոխում են Սուրբ Կույսի վանքը՝ Կարինում: Ըստ Վ. Լանգլուայի իր ապրած ժամանակ Գրիգոր Մագիստրոսի գերեզմանը դեռ պահպանվում էր<sup>40</sup>:

Գրիգորն ունեցել է շափ երեխաներ. նրա ավագ որդին՝ Վահրամը, սկզբում նվիրվում է ռազմական գործին՝ ինչպես հայրը, բայց հետո դառնում է հոգևորական և ընդունում է կաթողիկոս Գրիգոր Երկրորդ Վկայասեր անվամբ: Նա Վկայասեր է կոչվել ասորի և հույս վկաների պարմությունները հայերենի թարգմանողներից մեկը լինելու պարբռառով: Գրիգորն ուներ ևս երեք որդիներ՝ Վասակը՝ Անդրեյի դուռը, Վասիլը և Ֆելիքսն և երկու աղջիկ, որոնց անունները պարմությունը չի պահպանել: Իր կենդանության օրոք Գրիգորը կորցրել է մեկ աղջկան և երկու որդիներին, որովհետև նրա երկու ավագ որդի-

<sup>37</sup>Միջայի Զամյանցի «Տայոց պարմության» մեջ դեպքը նկարագրված է հետևյալ ձևով. «Զայս ամենայն լուսակ Գրիգորի Մագիստրոսի, որ դեգերեր յաշխարիին յունաց, դարձաւ ի Կոստանդնուպոլիս՝ դեղ ինչ առնել և սպեղանիս դնել մեծի խոցուածոյ, որով հարաւ թագավորութիւն հայոց: Եւ գեղեցիացն ամենայնի որը եղենն՝ ինքն ևս դարձաւ ի կողմն կայսեր և եղև կամակից նախարարացն, որպէս գրէ զայս և ինքն ի թուղթն յեալ առ կրոնատրս Սանահնի վանացն: Եւ գիրեցեալ սպուզի, թէ այսուհետք աշխարի հայոց ոչ գրանել ինչ հանգիստ՝ եթ կայսեր մուրհական գիայերեն ամբոց իւր՝ զթշնի, զկայեան և զկայծոն և եան ի գեղի նոցա զքաղաք և զգիս ի սահմանն Միջագետք գրով և մարտանա ժառանգել զայն որդոց յորդի» (բնե՞ւ Մ. Զամյանց, Տայոց պարմություն, հ. II, էջ 934):

<sup>38</sup>V. Langlois, Memoire sur la vie et les écrits du prince Grégorie Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.11.

<sup>39</sup> Արիստակես Լասպիկերցի. Պարմություն, թարգմանությունը Վ. Ա. Գևորգյանի, Երևան, 1971 էջ 51:

<sup>40</sup> V. Langlois, Memoire sur la vie et les écrits du prince Grégorie Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.19.

ները վախճանվել են հորից հետո: Գրիգոր Վկայասերը վախճանվել է 1105-ին, իսկ Վասիլին ընկել է երկու հույս նիզակավորների հարվածից՝ 1077-ին: Գրիգորը, չնայած դավաճանության այն անորոշ կասկածի, որն առկա է նրա հիշագրակի վրա, մնացել է իր հայրենակիցների համար մեծ ու խոր հիացմունքի առարկա: Ներսես Շնորհալին իր «Վկայասանությին» պոեմում, փառաքանելով Գրիգոր Մագիստրոսին, ասում է, թե բանասբեղծում էր ինչպես Տոմերոս և խոտում էր ինչպես Պատրինը, նրա աստվածասիրությունը դեպի Եկեղեցիները, վանքերը, որբերն ու այրիները, դեպի աղքաք մարդիկ, անսահման եր: Գրիգոր Մագիստրոսը հավասարապես զբաղվում էր թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ գիրություններով: Ներսես Շնորհալին, Վրիսպակես Լասպիկերցին, Մաքրենոս Ուռիայեցին և շափ ուրիշներ նրան համարում են Տայասպանի նշանավոր գիրնականներից ու մբածողներից: Վ. Լանգլուան համոզված է, որ Գրիգոր Մագիստրոսն իր ժամանակի համար եղել է, իրոք, արդասովոր մարդ: Բավական է հիշել այդ աշխարհիկ մարդու հետաքրքրությունների շրջանակը: Նա սովորում էր լեզուներ, մեկնում քերականություններ, թարգմանում հունարեն և ասորերեն գրքեր, ուսումնասիրում էր Եկեղեցու և աշխարհիկ պարմությունը, առասպելաբանությունը, բնագիրությունը, բժշկությունը, մաթեմատիկան, քննում էր ասպրագիրության գաղղնիքները. նա չէր կամենում հեռու լինել գիրության բոլոր ճյուղերից, և դա երևում է նրա բազմաթիվ նամակներից: Նրա մեծ մղումն էր՝ առաջ դառնել իր երկրի գիրությունն ու գրականությունը, դրա համար նախապարագում էր պարարպ հող՝ աճեցնելով այնպիսի աշակերդներ, որոնք պետք է շարունակեին իրենց ուսուցչի գործը: Գրիգոր Մագիստրոսը կրօպտ որոնող էր, նրա աշխափասիրությունը սահմաններ չէր ճանաչում: Նա կյանքի վերջում բողոքում էր, որ իր առողջությունը դարձել է խախուփ և խանգարում է լարված աշխափանքին: Երրահիմ ամիրային ուղղված մի նամակում նա խոսդուվանում է, թե կարդացել է բոլոր հնարավոր գրքերը, չի զացել սպուզելու քաղեական, հունական, եթովպական, պարսկական և այլ աղբյուրներ, բայց ամեն ինչ իմանալ հնարավոր չէ: Վ. Լանգլուան ասում է, թե Գրիգոր Մագիստրոսն ունեցել է ընդարձակածավալ թարգմագիրություն, հրաշալիորեն մարզված հիշողություն, լայնախու ու նրբին մբածողություն և աշխարհի հեշտորեն: Եթե նա ապրեր հինգ դար ավելի վաղ, այսինքն՝ հայ գրականության ուկեղարում, ապա անկասկած կլիներ այդ դարաշրջանի ամենամեծ ու նշանավոր գրողներից մեկը<sup>41</sup>:

41 Նույն գրում, էջ 16:

Վ. Լանգլուայի ուսումնասիրության երկրորդ մասը կոչվում է՝ «Գրիգոր Մագիստրոսի նամակները (թղթերը)» (‘Correspondance de Grégoire Magistros’):

Գրիգոր Մագիստրոսը սփեղծագործում էր երկու եղանակով՝ արձակ և չափածո: Նայագեցը համառուրակի է կանգ առնում չափածո գործերի վրա՝ բավարարվելով նշել միայն խորագրերը: Չափածոյի գագաթը համարում է «Հազարարողեան» պոեմը («Հազար գոտուն ուրանաւոր», “Poeme des mille strophes”), որի ամեն տան առաջին գոտը յոթ է, երկրորդը՝ ութ: Նայագեցը նկագում է, թե Ս. Ղազար կղզու Միաբանության գրադարանն ունի այդ պոեմի չորս ձեռագիր օրինակ, որոնք անդիպ են, ինչպես անդիպ են Միացեցի դուրսի բոլոր գործերը<sup>42</sup>:

Գրիգոր Մագիստրոսի որոշ բանասփեղծություններ անանուն չափածո թղթեր են: Ֆրանցից են՝ «Ներբողեան ի սուրբ Խաչ»՝ նվիրված կաթողիկոս Պետրոս Գերադարձին, մյուսը կոչվում է՝ «Ներբողեան ի խաչանիշ զաւազան»: Այս երկու գործերը գտնվում են Ս. Ղազարում պահպող ձեռագրում և տպագրվել են 1868-ին:

Արձակ գործերից են՝ «Մեկնութիւն քերականութեան Դրակացնյ»՝ գրված ավագ որդու՝ Կահրամի խնդրանքով: Այս մեկնությունը երկար ժամանակ օգտագործվում էր Նայասփանում, և Հովհաննես Երզնկացին, որը շատ պարզական քերականության հեղինակ էր, իր գործում հիշում է Մագիստրոսի այս երկը<sup>43</sup>: Վ. Լանգլուան նշում է, թե Ս. Ղազար կղզում կա Գրիգոր Մագիստրոսի քերականության մեկնության երկու բնագրեր: Գրիգոր Մագիստրոսը կարդում և գրում էր հունական և ասորական այնպիսի գրքերի մասին, որոնց թարգմանությունները կազմում են միջնադարյան արևելյան քրիստոնեական միջամտությունը: Իր թղթերից մեկում, որն ուղղված է Սևանի վանքի վանահայր Սարգսին, Գրիգորը պարզում է, թե ինքը չի դադարում թարգմանել այն գրքերը, որոնց հայերեն թարգմանությունները չկան, ինչպես, օրինակ, Պլավոնի «Ֆեղոնը» և «Շիմեոսը» և ուրիշ փիլիսոփաների գործեր, գերջապես Էվկիդեսի երկրաչափությունը: Ցավոր Մագիստրոսի այդ թարգմանությունները մեզ չեն հասել: Ս. Ղազար կղզում, ինչպես գրում է Սուրբիա Սոմալը, կա միայն մի շաբ կարճ

42 Նոյն գեղուամ, էջ 16-17:

43 «Մագիստրոսի գործը մանրամասն քննելով, նա հայտնում է, թե «աշխարհական էր ի հաւաքում մեկնութեան սորա և մինչ առ մերս ժամանակ այնու վարժեին վարդապետը մեր զաշակերպեալսն իրենաց» (գրես Արմենուի Երզնկացի Սրբապյան, Հովհաննես Երզնկացի Պուոգ, Կյանքը և գործը, Երևան, 1993, էջ 44):

հարված Էվկիդեսի երկրաչափության<sup>44</sup>:

Գրիգոր Մագիստրոսն ունեցել է բազում աշակերպներ, որոնց մեջ ամենաակնառուներն էին Եղիշեն և Բարսեղը: Առաջինը Պետրոս Գերադարձի կողմից նշանակվում է Սեբաստիայի եպիսկոպոս, որին Գրիգոր Մագիստրոսը շնորհավորական թուղթ է հղում այդ պաշտոնում ընդունելու համար՝ միաժամանակ խորհուրդներ դալով, թե ինչպես առաջ դանի իր նոր պարփականությունները:

Ըստ Վիկիպեդիայի՝ Գրիգոր Մագիստրոսի մեզ հասած նամակագրությունը կազմում է ութսուներեք թուղթ, որոնցից միայն երկուսն են չափածո<sup>45</sup>: Մագիստրոսի բոլոր թղթերը շոշափում են բազում այլութեաներ, որոնց մեջ հեղինակը կողք կողքի դնում է փիլիսոփայությունը, ասպամարտանությունը, դիցաբանությունը, պարմությունը, բնագիտությունը և այլն: Նրա ոճը, որի մեջ զգացվում է հեղինակի ապրած ժամանակի որոշ բարբարությունը, հեշտ ընկալելի չէ, ճոռոմարան և հավակնուր գրելածեաը, որով նա հարսպացնում է հայկական թղթի գրական գեսակը, պարունակում է միքի համար շաբ հետաքրքիր նյութեր: Դժվար է հասկանալ նրա ասպամարտանական-փիլիսոփայական նրբախնդիր պահանջներ պարունակող խառնիխուուն գրելածը: Նունարեն լեզվի դարձվածքները լայնորեն օգտագործված են նրա լեզվում և խառնված են հայերենին: Գրիգոր Մագիստրոսի թղթերը կարելի է բաժանել երեք գեսակների՝ 1) վարդապետական թղթեր, 2) փիլիսոփայական թղթեր, 3) ընդունեկան թղթեր: Այս բաժանումը կապարել է Գարեգին Զարքիանայանը, և նրան հետևել են ուրիշները: Վարդապետական թղթերի մեջ կարևորագույնը նվիրված է թոնդրակյան աղանդին և ուղարկված է ասորի պարփառքին, երբ Մագիստրոսը Վասպուրականի ու Տարոնի կառավարիչն էր: Գրիգորի պարփառան ուղղված ամիրա Իբրահիմին, որը խնդրել էր մեկնել քրիստոնեական հավաքի առասպեկները և բացագրել նրանց ճշմարդացիությունը՝ այն նույնական շաբ հետաքրքիր է: Վ. Լանգլուայի կարծիքով Մագիստրոսի փիլիսոփայական թղթերը պակաս հետաքրքիր են, քան վարդապետականը<sup>46</sup>: Նա երբեմն իմաստափարում է մրգերի, ձկների շուրջ, բառախաղեր անում, և երբեմն

44 V. Langlois, Memoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.18.

45 Գրիգոր Մագիստրոսի թղթերը ունակ հաշվում են Ռէ (77), ումանք՝ Ղ (90), ումանք՝ Զ (80). Վ. Կոստանդնուպոլիսը կարծում է, թե որանք Ջէ (87) են (կրես Գր. Մագիստրոս, Թղթերը, էջ 250):

46 V. Langlois, Memoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.20.

նրա ոճն անհասկանալի է դառնում: Նամակներից մեկն ուղղված է իր աշակերտ Վահրամին և պարունակում է այնպիսի օգար բառեր, որոնց իմաստը անըմբունելի է. դրա մեջ նա խաղում է բառերով՝ կազմելով իր անունը՝ Գրիգոր Մագիստրոս, և նամակում կան որոշ անհեթերություններ: Ընդհակառակը, նրա ընդունեկան թղթերը հասկանալի են և շափ ուշագրավ: Ենց այդ կարգի թղթերում է երևում նրա բնավորությունն իր ամբողջության մեջ: Դրանց մեջ է, որ նա դեղեկացնում է բազում մասնավոր դեպքերի մասին՝ հենց իր կյանքից, իր կյանքի փոփոխությունների և ընդամենքի անդամների մասին: Այդ վերջիններից է Պետրոս Առաջինին՝ Գեղադահին, ուղղված նամակը, որում Մագիստրոսը կաթողիկոսին բացաբրում է, թե ինքը վագ դիմք է բռնել հավանաբար Գագիկ թագավորի նկազմամբ, նմանագիպ մի նամակ ուղղում է Սևանի վանահայր Սարգսին, որին ուզում է պարմել հայոց արքայից իր կրած հալածանքների մասին, և ի վերջո Սյունյաց Հովհան եպիսկոպոսին գրված նամակը իր հորեղբոր՝ Վահրամ սպարապետի մահվան առիթով: Այս նամակում նա գեղեցիկ ոճով խոսում է քաջ զորավարի արժանիքների մասին: Բանասպեղական քնքանքով հիշում է, թե ինչ խնամք է տարել հորեղբայրը իր մանկության օրերին, նրա սիրով հուզվում է, և նա ազարություն է տալիս արքասվախառն գողերին:

Առաջարանի վերջում Վիկոնտ Լանգլուան ասում է, որ հերթով կներկայացնի Մ. Էմինի ունեցած ձեռագրում եղած թղթերը, հավկապես թարգմանելով ամեն մի թղթի մեջ եղած ամենակարևոր հայդարձները:

Առաջին թուղթը, որը ներկայացնում է ընդարձակ թարգմանությամբ՝ ուղղված է ասորի պարտիարքին և պարմում է թոնդրակեցիների աղանդի մասին:

Ենց այս թղթով բացվում է Գրիգոր Մագիստրոսի նամակագրական ժողովածուն: Մագիստրոսը թուղթը գրել է որպես պատասխան ասորի պարտիարքի նամակի, եթե նա բյուզանդական կայսրության կողմից նշանակված էր Տարոնի և Վասպուրականի կառավարիչ: Թղթից երևում է, որ Մագիստրոսը պայքարել է թոնդրակեցիների աղանդի դեմ, որն ընդհանրություններ ուներ մանիքենիության հետ, և որը դարձվել էր նաև Ամիրում: Նախ Գրիգորն ասորի պարտիարքին ասում է, թե սպացել է նրա նամակը: Նա օրինակներ է բերում Դավթի Սահմուներից և Պողոս առաքյալի թղթերից՝ համբերությամբ գիշելու և Դիոսլ Քրիստոսի խորհուրդներին հերքնելու մասին: Գրիգոր Մագիստրոսը խորհուրդ է տալիս կարդալ Նարեկա վաճքի վանահայր Անանիա Նարեկացու գործը՝ ընդեմ թոնդրակեցիների

աղանդի: Նա նրան հիշեցնում է՝ վագրանուն Սմբագի մասին, որն ապրել է Հովհանի և Սմբագ Բագրագունու ժամանակներում: Այս Սմբագը ուսուցանում էր թոնդրակեցիների աղանդը Մջուսիկ կոչված պարսից մոգի միջոցով: Նա Ծաղկուրն զավարի Զարեհավան գյուղից էր, ապրում էր Թոնդրակ գյուղում, որը գտնվում է Ազահունյաց գավառում: Նա իրեն ներկայացնում է որպես արքեպիսկոպոս, քարոզում է վագրթարագույն մկրեր, գաղփնի է պահում իր ուսմունքը, նա հրամայում է ծաղրել սրբազն մյուտոնը: Մագիստրոսն ասում է, թե թոնդրակեցիներն իրենց ուսմունքը պահում էին շափ գաղփնի՝ նման Պյութագորասին և Ձեռվնին, որոնք գերադասում էին քաղցից մեռնել. քան հայփնի դարձնել իրենց մկրերը: Մագիստրոսը հետո հիշաբակում է թոնդրակեցիների հիմնական գլխավորներին՝ Ձեռդորոսը կամ Ձորոսը, Անանեսը, Արքան, Սարգիսը, Կյուրեղը, Շետուն և Ղազարը, որին Հայաստանի և Վրաստանի պարտիարքներն անհծել են: Ինքը հարցաքննել է հավաքի հեվալորդներին, և նրանք ասել են, թե իրենց ուսմունքը ոչնչով փարբեր է քրիստոնեությունից: Մագիստրոսը հեգնանքով ասում է, թե ինքը կներկայացնի նրանց ճարդարանքը: Նրանք իրականում սարքանայի հեվալորդներ են: Իրենց քրիստոնյան ձևացնող այդ աղանդավորները չեն ընդունում Սուրբ գիրքը, խաչը, եկեղեցին, հոգևոր զգեստները, պատրարքը: Նրանք ծաղրում են Քրիստոսին, անարգում են Սուրբ Կույսին: Նրանց առաջնորդը վերցնում է խմորը, այն թաթախում է գինու մեջ և շպրտում է ասելով. «Ահա քրիստոնյաների խաբենություն»: Նրանք շարունակ զրաբարդում են եկեղեցուն: Մեկ ուրիշ պարագույն՝ Ղազարը, նորանոր չարիքներ է բերում մեր եկեղեցուն: Մագիստրոսն ասում է, թե Միջագեպք գալուն պես ինքը հալածել է այդ աղանդը, որն ավերածություններ է անում քրիստոնյաների շրջանում: Այդ անհավաքները շարունակ քարոզում են, թե չկա ոչ դրախտ և ոչ էլ Վստիված՝ ինչպես ասում էին էպիկուրյանները: Գրիգորն ասորի պարտիարքին կոչ է անում նզովել թոնդրակեցիներին և թույլ չփալ, որ նրանք մուգենան իր հավաքայալներին: Նա թոնդրակեցիներից նամակ է սպացել, որում Վերջիններս փորձում են չքրենանալ, վկայություններ են բերում Սուրբ Եպիփանի «Պարունակաց գրքից» և ուրիշ նշանավոր հայ հոգևորական հայրերից: Բայց ինչպես նկատել է Անանիա Վարդապետը, նրանց ուսմունքը կապ չունի Դին ու Նոր Կորակարանների հետ: Ինչպես մեղուները ամենագեղեցիկ ծաղիկներից հյութ են հավաքում մեղը պարտիաստելու համար, ինչպես բժիշկները պարտիարքում են լավագույն դեղերը հիվանդներին ողացնելու համար, այնպես էլ նրանք նյութում են ամբարշպությունը: Նրանք ոչ մի գարբերություն չեն

փեսնում կնոց և գրամարդու միջև և ոչ է՝ ընդամենքիք: Նրանք Ասք-վածածնին չեն պաշտում: Նրանք ասում են, թե չեն հավաքում Դին և Նոր Կոբակարանների վարդապետությանը: Գրիգոր Մագիստրոսը զուգահեռներ է անցկացնում թոնդրակեցիների և պավլիկյանների միջև: Պավլիկյանները սերում են Պողոս Սամոսապցուց: Պավլիկյանները քրիստոնյաներ են, որովհեք իրենց բերաններում շարունակ ունեն Վվելքարանը և առաքյալների գրքերը: Սակայն նրանց կարծիքով Մովսեսը չի գետել Ասպծուն, այլ հանդիպել է Անին, և ի վերջո սաքանան է երկնքի և երկրի արարիչը. բոլոր ազգերի և բոլոր սրբեղծվածների հետինակը: Եվ այս բոլորով հանդերձ նրանք իրենց համարում են քրիստոնյա: Այդ աղանդի որոշ ներկայացուցիչներ մոգեր են և զալիս են մոգ Զրադաշտից, նրանց, ովքեր կապ ունեն մոգերի հետ, պաշտում են արևը և կոչվում են արևորդիք<sup>47</sup>: Մագիստրոսը խոսում է թոնդրակեցիների մի ճյուղի մասին, որոնք կոչվում են Կաշեցիք: Թոնդրակեցիներն ունեն անառակ վարքագիծ. նրանք ունեն անառակապներ, որոնք կոչվում են Շնավանք (”maison de débauche”):

Տեսրու նկարագրում է, թե իր հրամանով ինչպես են այրել այդ փետոր և նրա բնակիչներին թշել են երկրից դուրս: Հոգևորականներին հրաման է գրված թոնդրակեցիների դեմքին շիկացած երկարով «աղուեսադրոշ» դնել: Գրիգոր Մագիստրոսը նշում է, թե աղանդավորության դեմ պայքարում հայոց և ասորի եկեղեցիները պետք է լինեն միասնական:

Գրիգոր Մագիստրոսի երկրորդ թուղթը վերսպին վերաբերում է աղանդավորությանը:

Վ. Լանգուան գրում է, թե այս նամակում է Գրիգոր Մագիստրոսը խոսում է թոնդրակեցիների առաջնորդ Մարքի մասին, որին կոչում է աղուես, ավերիչ, մոլորեցնող, խավարի բարեկամ: Թոնդրակ գյուղը նա անվանում է կրակի բույն, որի մեջ այրվում է ամեն սրբազն բան: Սակայն Սուրբ Հոգին հանցնում է այդ կրակը ասպեկտային ցողի միջոցով: Մագիստրոսը բացաբրում է թուլ բառը որպես ցողող, իսկ Խնունը՝ որպես մթության մեջ արգելափակող: Նա ասում է, թե կարդացել է թոնդրակեցիների թուղթը՝ ուղղված պարիհարքին, որը լի էր մոլորություններով: Նրանք հայքարարում են, թե կարողիկուը հրաժարվում է նրանց ընդունել եկեղեցում, որովհեք նրանք

<sup>47</sup>Վիկոր Լանգուան արևորդիք է համարում նրանց, ովքեր պաշտում են հնավանդ կուրք հանդիսացող կրակը, որի հավաքը եղել է Խախտան քրիստոնությունը: Այդ աղանդը պահպանվել է մինչև Ներսու Շնորհային, մինչև 12-րդ դարը, և վերջինս հափուկ թուղթ ունի նրանց մասին (գրե՞ս նոյն քննություն, լուսաբանություն, էջ 25):

դիմում են որպես ախսպավոր բորովներ: Գրիգորը վերսպին անդրադառնում է թոնդրակյան աղանդի գրակեպներին, որոնք նա շարադրել էր նախորդ թղթում և հիշապակում է աղանդի գլխավորներին, որոնցից Ղազարին անվանում է Շեկ շուն (”le chien roux”):

Մագիստրոսի երրորդ նամակը գլխակապ ունի, որը դառնում է Գրիգոր Մագիստրոս, սակայն այդ չափածո գործն անհնար է թարգմանել ֆրանսերեն, որովհեք Վ. Լանգուայի կարծիքով այն ամբողջովին կազմված է բառախաղի վոա և հենց այդ պարբառով անթարգմանելի է:

Չորրորդ թուղթը ուղղված է Հայասպանի կաթողիկոս Պետրոս Գեղադարձին, այն ժամանակահարվածում, երբ քահանայապետը վերադառնալով արսորից գրադեցնում է իր պաշտոնը, նրանից խնդրում է Սուրբ Եփրեմի գիրքը հավաքի մասին, որ նա կարդացել էր էր արսորում<sup>48</sup>:

Ծինգերորդ նամակն ուղղված է Աշոփի որդուն, որը գրել է Գրիգորին՝ իր հորը կարելեցելու համար:

Այս նամակից Վ. Լանգուան թարգմանում է այն հարվածները, որոնք ունեն դասպիհարակական եզակի նշանակություն: Մագիստրոսը չի ուղում խառնվել հոր և որդու հարաբերություններին ու իրեն չի գրեսնում դափակորի դերում: Միաժամանակ գրում է, թե որդուց իմացել է, որ Աշոփը հալածել է իրեն հոգևոր ծնով դասպիհարակող վարդապետին: Նրա կարծիքով դա եղել է կոպիկ սխալ, որովհեք հոգևոր հայրերն ավելին են քան ծնողները՝ գրված բնությունից, որովհեք ասպեկտային խոսքը նրանց միջոցով է սերմանվում մարդկանց մեջ:

Արժեքավոր է վեցերորդ թուղթը՝ ուղղված արար էմիր Էբրահիմին (Աբրահիմ ամիրայ): Գրիգոր Մագիստրոսը շնորհավորում է Էբրահիմին քրիստոնեական հավաքի խնդիրներում խորանալու համար, որովհեք Վ. Լանգուան աղուես ավելի էր կողմից Աբրահամի ցեղից էր. իսկ մոր

\* Վիկոր Լանգուան գրողաբակում որոշ փասթեր է բերում Պետրոս Գեղադարձի կննագրությունից: Նա զահ է բարձրացել 1019-ին՝ Բագրայունի արքա Խովհաննես Սմբարի ժամանակ, իսկոր նա 15 ամիս բանապարհկան է մնում թշնիում: 1036-ին նա վերսպին կաթողիկոս էր Վղվանի կաթողիկոս Հովսեփի միջնորդությամբ: Գաղկել Երկրորդի գահընկեց ինեւուց հետո նա միանում է գահընկեց անող իշխաններին, իսկ մեկնում է Կոստանդնուպոլիս, Կոստանդին Սոնամախ մով: Կայսրը նրան շերմունեն ընդունում է, սակայն երեք տարի պահում է իր մով: Ի վերջո ազարություն է պարագանեական Կարսի թագավոր Սենեքարիմի որդի Աբրում միջնորդությամբ: Ըստ Մ. Զամշանցի գահինանվել է 1058 թվականին: Խնչպես ասում է Վրիսպակն Լասպիկերցին «Պետրոսը ասպեկտ գանձաներ էր» (վե՞ս Աբրահամի թագիկերցի, Պարմություն, թարգմանությունը Վ. Ա. Գևորգյանի, Երևան, 1971 էջ 54), նրա հարսպությունը շատ մեծ էր, նա ուներ իհակ հարյուր գյուղեր:

կողմից հայ էր՝ Սիսակի ցեղից: Նա նրան հիշեցնում է Ասպծու խոսքումը՝ փրված Աբրահամին՝ բազմացնել նրա ցեղը և համեմափում է Հակոբի փասներկու որդիներին կենդանակերպի փասներկու նշանների հետ: Թույժն այնուհետև սրանում է իմասփասիրական բնույթ, և հիշափակվում են ին հին Հունափանի նշանափոր փիլիսոփաները՝ Փերիքուսը, Արիստոփելը, Անտվելը, Պլատոնը, Սոկրափեսը, Պյութագրասը, Պոհմիդեսը, Հռոփոսը, Դիպակասը: Նա նշում է նաև Պիդոմեոսին, որն իր պալափում հավաքել էր բոլոր բանափեղների գրքերը: Գրիգորը պափախանում է այն հարցերին, որոնք փարբեր թեմաների համար փվել էր Եբրահիմը, որպեսզի իմանա նրանց պափախանը: 1) Ինչպես են ապացուցում Ասպծու գոյությունը: 2) Ո՞վ է խոսել Մովսեսի հետ Սինա լեռան վրա՝ Ասպված, թե՝ իրեշփակը: 3) Որո՞նք են այն երկու իրեշփակները, որոնք որոնում էին Աբրահամին, Սոդոմի հարցով: 4) Աղամն իր կամքով կերավ արգելված պիտույք, թե Ասպված նրան դափապարփեց այդ անել: 5) Չարն ու բարին Ասպծու սփեղծածն են, թե Ասպված սփեղծել է բարին, իսկ սափանան՝ չարը: 6) Աշխարհիկ փիլիսոփաները Ասպծու մեջ փեսնում են մեկ եռյուն, թե՝ երեք: 7) Քսանչորս մարզարեները նո՞յն են, ինչ Մուհամեդը: 8) Որո՞նք են մարդեղության ապացույցները: Նամակագիրը վկայակոչում է քաղենացի Արյուղնենեսին, Բյուռոսին, Աղամի սփեղծման հարցերում, ինչպես նաև Զրադաշտին, հետո խոսում է առաջին մարդու սփեղծման և նրա անկման մասին: Ի դեպ, բոլոր հարցերին պափախանելիս Գրիգոր Մագիսփրոսը հենքում է ոչ միայն քրիստոնեական Սուրբ գրքերի վրա, այլև հեթանոս փիլիսոփաների հայացքների: Նա վկայում է Պյութագորասին և նրա աշակերպներին, հափկապես Պերիկլեսին, հետո նա դնում է Հոմերոսին, որին մեծապես պափում են Հունափանում և Եգիպտոսում, խոսում է Ալեքսանդր Մակեդոնացու, Անդիսթենեսի, Կոհեանդեսի, Սոֆոկլեսի, Օրփեոսի, Սիրիլայի և ուրիշների մասին:

Այս ընդարձակ նամակը Գրիգոր Մագիսփրոսն ավարփում է քննախոսելով Հիսուս Քրիստոսի ծնունդը, որը ներկայացվել է մարզարեների և առաջալերի կողմից:

Ուշերորդ նամակը<sup>50</sup> ուղղված է իր աշակերպներ Բարսեղին և Եղիշեին, որոնցից Մագիսփրոսը խնդրում է Արիստոփելի գրքերը: Այս նամակն ամբողջությամբ հրափարակել է անգիտացի նշանափոր հայագետ Ֆրեներիկ Կոնիքերը անգլերեն լեզվով «Համեմափութիւն իին հայերէն թարգմանութեան եւ յոյն բնագրի Արիստոփելի Սկրո-

<sup>50</sup> Ծարադրանքի մեջ որոշակի նամակներ բաց են թողնվում այս գրքի ծափալային դիքակերից - Ա. Դ.:

գութեան՝ Յաղագ Մեկնութեան, Յաղագ աշխարհի, Յաղագ Առաջնութեանց եւ Մոլորութեանց եւ Պորֆիրի Ներածութեան» ուսումնասիրության մեջ<sup>51</sup>: Նամակը ներկայացնում է այն ուսումնական ծրագիրը, որը մշակել էր Գրիգոր Մագիսփրոսը հայկական օրինակելի դպրոցների համար. «Եւ ի խոյզ ելանել ջերմագոյն և քաջողջական խոհականութեամբ և փրամաքանական հափուածոց, հոմերական և պղափոնական նախասականին և այլոցն բոլոր արհեստից և մարենից, զի ամենայնի հմասփասէրն խոսպովանեալ լիցի զգիփութիւն և ուրացեալ զանգիփութիւն, մանավանդ ըստ կարողութեան քաղիցն արհեստից. թուական, երաժշգական, երկրաչափական, ասպղաբաշխական: Այսոցիկ հենքել բաւական է: Այս իսկ եթէ Արիստոփելի հաւաքունքը, այն է, որ ասացեալն է «յաղագ երկնային մարմույն և գնդափեսութեան երկրի», կամ «յաղագ օրինադրութեան կենցաղոյն» յորս յիշափակէ, և զորակութեանցն քակումն, և զախսիցն բաժանմունս, զոր անուանեն խորհրդական. առաքեա այսր զդա: Ապա թէ միայն Պորֆիրի առասութիւնը իցէ բաց որոշեալ ի խնդրոյ քրիստորին հնգից սպորոգութեանցն, որք են այսոքիկ սեռ, գեսակ, պարբերութիւն, յափուկ և պափակումն կամ եթէ ութիցն որք են, դիգաւորութիւնն, պիփանացուն, պափճառս, մակադրութեան կարգն, վարդապեփական, յեղանակն, թէ առ ինչ մասն բարբերումն, կամ զիւրն իսկ Ըստագիրացոյն. գոյացութիւնն, որակ, քանակ, առ ինչ, ո՞ւր, երբ, կալ, ունել, առնել, կրել. այսոքիկ ոչ են մեզ ըղձալի ի հեռասփանէ զսոսա խնդրել, քազի դրամադրութիւնք այս վաղ ուրեմն պափահեաց մեզ, մինչ բակալին պափանեակ եղելոյ»<sup>52</sup>:

Գրիգոր Մագիսփրոսն առանձնացնում է չորս գիփաճյուղեր՝ մաթեմափիկան, երաժշգիպությունը, երկրաչափությունը, ասպղաբաշխությունը և ասում է, թե ինքը դեռևս պափանի հասակից հեփամուկ է եղել արփաքին գիփությունների մեջ խորանալուն:

Ուշագրավ է իններորդ նամակը, որը պարունակում է Ողոմափանուի մի առակը՝ բնագրային արժեք ունեցող, քանզի ինչպես վկայում է Վ. Լանգլուան դրա հունական օրինակը կորած է. "dont les œuvres sont perdues en grec"<sup>53</sup>: Նամակն ուղղված է Քօնիի Եպիսկոպոս Եփրեմին, որը նրան ուղարկել էր նոներ: Մագիսփրոսը սկսում է խորհրդա-

<sup>51</sup> Տե՛ս Օքսֆորդի մասնաշիպական ժողովածու. Կաղարշապափ. 1893, էջ 1-51: Ֆ. Կոնիքերը համատուի խոսում է Գրիգոր Մագիսփրոսի անձի մասին և ապա ուսում այս նամակի բնագիրը. որն ինքը բաղել է Մյունխենի մագիստրադանում պահվող մի ձեռագիր (գեն նշված աշխաբությունը, էջ 10):

<sup>52</sup> V. Langlois, Memoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.33.

ծել նոան մասին՝ այն անվանելով Բաքոսի (Դիտնէսիոս) արյուն, ինչպես կարծում են մեծ մասամբ, նա բերում է նոան պարսկական անվանումը «անար», իսկ նուոր կոչվում է հունարեն grenade: Եվ նա պարմում է Ողոմափիանոսի հեփսյալ առակը: Մի առյուծ ննջում էր, մեղուների պարսը փորձում է նրա ափամների վրայից վերցնել վերջին խոչույքի մնացորդները: Առյուծը պոշով քում էր իրեն ձանձրացնողներին, բայց ոչ մեկը փեղից չէր շարժվում: Առյուծը, հոգնելով այդ անզգույշ մակարույժներից, ցրիկացնում է ափամները, և փակում երախը: Մի քանի մեղուներ հասցում են փրկվել և ներկայանում են Ակկարովնի ափյանին: Դափակորը նրանց ասում է. «Մի մտեք երեք քնած առյուծի երախը, այլապես դուք կօախչախվեք նրա ափամների դրակ, ավելի լավ է բզզացեք ձեր պալարում: Բզզացեք ձեր փեթակում, ըստ ձեր ցանկության, բայց բոլորովին մի գնացեք արքունիք»<sup>53</sup>: Նեփո բերվում է առակի բարոյախոսական եզրակացությունը: Մտեք ձեր գունը, ձեր խճիթը և երգեցեք այնպես, բայց մի գնացեք կաճառ, այլապես դուք կվրանգվեք ճգմվել առակի մեղուների պես:

Տասմերորդ թուղթն ուղղված է մի կադ վարդապետի, որին Գրիգոր հրավիրում է զալ Եպիփանի տոներին: Գրիգոր Մագիստրոսն այդ թղթում բերում է Հռուփոսի կազմած եկեղեցական տոների ցանկը:

Տասնմեկերորդ նամակն ուղղված է Թոռնիկ Մամիկոնյանին, որի մեջ Գրիգոր Մագիստրոսն իմաստափրում է ձկների մասին, քանի որ Թոռնիկը խոսքացել էր իրեն ուղարկել «կարմրախայր ծուկն»:

Մագիստրոսն այսպես խոսում է իրական և առասպելական ձկների մասին: Դիշում է հուշկապարիկներին, կես մարդ, կես ձուկ Տրիփրոնին, որին կոչում են Ովկիակովն, ձկներին, որոնք հեփսնում են Օրփեոսին և Դելֆինին, որ նրան փրկեց Սիցիլիա վերադառնալիս: Նեփո հիշում է մի եթովպացու, որը նավ նսփեց Ալսճռում, և որը փրկվեց մի ձկան կողմից: Նեփո նա հիշում է եզիսպական ձկանը՝ Փագրոս անունով, Աշղահակ ձկանը, որը փեսնելով Խոսրով արքայի հարճերից մեկին, լաց եղավ Փիսոնի գեղափին, նրան նեփեց մի հոյակապ մարգարիտ, որի միջոցով կինը սփացավ արքայի բարեհաճությունը, այդ մարգարիտը կոչվեց Ասպծու նվեր՝ Ասպվածապուր, Բիգոն ձուկը և այն: Գրիգորը շնորհակալություն է հայքնում Թոռնիկին կարմրախայր ձկների համար և վերսպին խնդրում է ուղարկել նորերը:

Տասնչորսերորդ նամակը նորից ուղղված է Թոռնիկ Մամիկոնյանին, որը Գրիգորին հրավիրում է մասնակցելու մի եկեղեցու օրինու-

<sup>53</sup> Դույն փեղում:

թյան գոնիին: Նա օգտվում է այս առիթից քննախոսելու համար Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնված առաջին եկեղեցիները, ինչպես, օրինակ, Սուրբ Կարապետը, Սուրբ Վթանագինեսը: Նա ջերմորեն խոսպանում է ներկա գրնվել այդ եկեղեցու օրինությանը, որին կմասնակցի շաբ ժողովուրդ: Խոսում է եկեղեցիների հոյակապության մասին, որոնք շոյում են մարդկանց ազքերն իրենց խորաններով, դռներով, կամարներով, քանդակներով և այլն:

Տասնինգերորդ նամակը պարախան է Սյունյաց Տովիան եպիսկոպոսին և նրանում խոսվում է իր հորեղբոր՝ Վահրամի մահվան մասին: Տողապակում Վիկոր Լանգուան, օգտվելով Մագիստրոս Ուռհայցուց, Բրոսսեի «Անիի ավերակները» աշխարություններից և ուրիշ երկերից, մանրամասն խոսում է Վահրամ Պահլավունի Սպարապետի և նրա մահվան մասին<sup>54</sup>:

Մագիստրոսը ողբում է հորեղբոր՝ Վահրամի մահը, որը մեծ կորուսք էր և Շայապանի, և իր համար: Նա հիշում է այն քնքանքը, որ ուներ հորեղբայրը իր մանկության տարիներին: Թուղթն ավարփվում է մի երկար ներբողով, որը հայ ներբողագրության ընդիր էջերից է: Տասնվեցերորդ թուղթը պարախան է Գագիկ Երկրորդ արքայի նամակին: Մագիստրոսը շնորհակալություն է հայքնում արքային, որը նրան զգուշացնում է թշնամիներից սպասվող Վփանգի մասին: Ինքը գիտի, որ մի քանի նենգ մարդիկ կամենում են ոչնչացնել իրեն մաքնությամբ, բայց ինքը սպասում է նրան՝ ասելով. «Պարոն, հաճեցեք «օգնել» ինձ»: Նա բերան է չի բացում իրեն արդարացնելու համար: Նամակում գողեր են բերվում Սուրբ գրքերից:

Տասնութերորդ նամակն ուղղված է կաթողիկոս Պետրոս Առաջին Գելաղարձին և գրված է այն պահին, երբ քաղաքի ամբոխն ապստամբել էր նրա հայրապետական եկեղենակության դեմ: Նա վշտակցում է կաթողիկոսին և խնդրում է իրեն ուղարկել Անանիա Շիրակացու գործերը, որին անվանում են «մեծ քնոկոն»:

Գրիգորը պատգամում է կաթողիկոսին միսիթարվել հիշելով իին ժամանակների բազմաթիվ նշանավոր դեմքերի, որոնց հալածել են իրենց հայուններում: Դրանցից են Եվլիափիեսը, որն աքսորվեց իր հա-

<sup>54</sup> Վահրամը՝ Հայասպանի սպարապետը եղել է երրորդ թե չորրորդ որդին Գրիգոր Պահլավունու: Գրիգոր Մագիստրոսի պապի: Նա աչքի է ընկել բազում պատերազմներուն: Նա գրիվել է Դվինի ազարագրման ժամանակ՝ մահմեղականների դեմ բյուզանդական զավակն զորից հետ կովկիս: Նրա հետ գրիվել է նաև նրա որդին: Նահարակվելիս Վահրամը ութառու փարեկան էր: Նրա մարմինը բերափոխել են և թաղել Մարմաշեն Եկեղեցում՝ իր կնոց՝ Սոֆիի կողրին (լրե՛ս V. Langlois, Memoire sur la vie et les écrits du prince Grégorie Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.35-36):

մաքաղաքացիներից՝ հակառակորդ Ապահնուսի պարբառով, Պլավոնը, վաճառվեց Սիցիլիայում, չնայած Էպիկուրյաններն ասում են, թե նա այնպես էր իր հաճույքների համար, Սոկրատեսը նույնպես մեռավ համաքաղաքացիների պարբառով, Հոմերոսը, Դեմոքրենեսը և հոեփոր Ողիսևսը: Գրիգորը հիշեցնում է Դիպոկրատեսին, որն իր գրքի մի հարվածում գրում է Պրյուդոսին՝ խորհուրդ փալով հեռու մնալ հեշտափական հաճույքներից: Ենքո նա խնդրում է կաթողիկոսին իրեն ուղարկել Անանիա Շիրակացու գործերը, որոնք պարունակում են ուսուցողական հսկայական նյութ՝ մաթեմատիկայի և երաժշտության վերաբերյալ: Դիշափակում է նաև նույն հեղինակի մի ուրիշ գործ՝ Նվիրված Երկրաչափությանը և ասդիագիտությանը, խոսում է Պլավոնի երկերի մասին և ավարտում է հիշելով Պոդոմնեսուին:

Քսանիններորդ նամակն ուղղված է Սանահինի վանքի հոգևորականներին, որոնք մնուայրում էին Մագիստրոսին Միջազգեպք ուղարկած իրենց նամակին չպարագախանելու համար: Մագիստրոսը սկզբում փիլիսոփայում է որոշ խնդիրների շուրջ և հեքո ասում է, թե նրանց նամակն իրեն պարբառել է ուրախություն: Ենքո Սանահինի հոգևորականներին համեմափում է Ձերեն ճգնավորների հեք, որոնց մասին երկար ճառում է: Վերջում խոսքանում երբեք չմոռանալ Սանահինի միաբաններին:

Քսանիններորդ թուղթն ուղղված է Մարմաշեն վանքի վանահայր Սութեննեսին, որին պարմում է իր ապրած ժամանակի դժբախտությունների, մասնավորապես իր ծանր խնդիրների մասին:

Քսանիններորդ թուղթն ուղղված է Սևանի վանքի վանահայր Սարգսին, որում Գրիգորը ողբում է Նայասպանին բաժին հասած չարիքները: Նա ափսոսում է, որ արքան փոխարեն իր խորհուրդները լսելու, ունկ է դնում Սարգսին: Այս առիթով հիշեցնում է Նյուքար Մադեսի մահը Արամի ծեռքով և միաժամանակ վկայակոչում է հեթանոս ժամանակների ազգային բոլոր անվանի դեմքերին և հերոսներին, Արշակունի մեծ արքաներին և Բագրագունիներին: Նա բերում է մի անվանացանկ, որը միապահելը դժվար է:

Քսանիններորդ թուղթն ուղղված է Պետրոս Գեպաղարձին, որը նրան խնդրել էր ուղարկել իր երկու աշակերդներին՝ Բասիլին և Եղիսին: Նա սիրով հանձնում է իր երկու աշակերդներին կաթողիկոսին, որովհետո վսկահում է նրանց մի լավագույն հոգիապետի:

Քսանիններորդ թուղթը հղում է Իրրահիմ ամիրային («Արքահիմ Ամիրայ»), որը Գրիգորին խնդրել էր իմասպասիրել փիլիսոփայության և կրոնի մասին: Մագիստրոսի համար հաճելի անակնկալ էր ամիրայի նման խնդրանքը, և նա անմիջապես շրապում է կապարել

վերջինիս պահանջը: Նրա կարծիքով կյանքում պետք է պաշտել երեք բան՝ նախ հավաքը, հետո իմասպությունը, և վերջապես փաղանդը: Գրիգորը հիշաբակում է որոշ մարդկանց և թագավորների անուններ, որոնք կապված են եղել գիտությանը՝ Սողոմոնը, Պիկոսի որդի Պերիկլեսը, Պլավոնը, Փողամեռը, Ներփաներոսը: Ենքո երկար քննախոսում է նամակում բարձրացված հարցերի շուրջ:

Քսանիններորդ նամակն ուղղված է Սևանի վանահայր Սարգիս վարդապետին, որում Մագիստրոսը խոսում է Գագիկ արքայի երիտափարդ փարիքի մասին և փորձում է արդարացնել իր սխալներն՝ ասելով, թե թագավորի երիտափարդ փարիքը չէ, որ սխալների պարճառ է դառնում, այլ իրենց կապարած մեղքերի հանրագումարը, որոնց համար Ասպարած պարմում է: Այս թղթում նա դնում է Ժողովունից (X, 16) բերված հայպինի փողը. «Վա՛յ, քեզ, երկի՞ր, երբ ք թագավորդ մանուկ է»:

Ենքարքիր է քսանիններորդ թուղթը՝ ուղղված Դանիել երաժշտին, որի մեջ Գրիգորը պարմում է հեքևյալ գրույցը: Պորֆիրիֆոնուսը իր սրինգով գարնանը նվազակցում է թշուններին և նմանեցնում է նվազը նրանց երգին: Նա ավելացնում է, թե մի օր էլ, երբ նա երգում էր Օրիենոսի բանասփեղությունները, շենքը պահող սյուներն ինքնաբերաբար ոսպեր են արձակում, որոնց վրա նստած թշունները դայլայում են: Ազոլոնը, նախանձելով այս երաժշտին, մեռնում է նրան, բայց Երկուուսը Բաքոսի աղոթքով նրան վերադարձնում է կյանքը: Կյանքս է պարմում Դիոնիսիոս Պելեպոնեսոցի գրքում: Աթենացինները պաշտում են նրա արձանը Պատնասու:

Երեսուններորդ նամակն ուղղված է Դանիելին, խոսում է այն թմբիրի մասին, որի մեջ Գրիգորը պարմում է Պոռոկղեսի<sup>55</sup> կոչված Պումպիոսեան, մարդը Ողիսևսի հեք (Արտիսու). Նույն ձևով Դիովմիդէսինը Պարէսի հեք: Նա խոսում է նույնպես Ռուսոսի մասին:

Երեսունմետերորդ թուղթն ուղղված է մի իշխանի, որի անունը չկա նշված, վերջինս Գրիգորին խոսքացել էր ուղարկել մի կաթսա, և այն ուշացել էր նրան հասնելու: Սա առիթ է, որ Մագիստրոսը խոսի ամենահշակավոր կաթսաների մասին, որոնք կան հոգևոր և աշխարհիկ գործերում: Երեսիայի կաթսան. Տիգանեան հսկայական կաթսան, որի մեջ նեփեցին խեղված Բաքոսին, որի մեջ սպանեցին Պելոսին, որի միջից այս պարագակ դուրս: Ենքո նա հիշում է գաճարի կաթսաները,

<sup>55</sup> «Վ. Լանգլուան բողոքակում գրում է՝ չի հանդիսան ասել, թե այս անունը Պարտոկլեսն է, որը այլափոխվել է արտագրողների մեղքով (թե՛ս V. Langlois, Memoire sur la vie et les écrits du prince Grégorie Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.42):

որոնց մեջ դևագիտները դնում էին ողջակիզվողներին:

Երեսունմեծկերորդ նամակն ուղղված է մանիքենիությանը, խոսվում է եկեղեցիների կառուցվածքի մասին:

Գրիգոր Մագիստրոսն ասում է, թե թոնդրակցիները չեն ընդունում սրբապարկերները և դա համարում են կոռապաշտություն: Նա կոչ է անում հավաքագյալներին աղոթել սրբերի նկարների առջև և պահպանել նրանց հիշագրակը: Այս թեմայով նա քննախոսում է՝ սկսած կենաց ծառի սկզբնավորումից և շարունակում տուրք գրքերի պատմություններով:

Երեսունինինգերորդ թուղթն ուղղված է Վեսպ-Վահրամին՝ իր որդուն և յուրաքանչյուր պարբերություն սկսվում է Վահրամ անվան գրառերով: Երեսունյոթերորդը շաբ հեփաքրքիր է՝ ուղղված է Վրասի որդի Գագիկին: Մագիստրոսն ասում է, թե ինքը հեփևում է այն գրամաբանությանը, որի մասին գրում է Արիստոքրել Մարտիրացին, որովհետք նա ասում է, թե նշանավոր մրածողներին պեսք է պատվել ազգային հերոսներին հավասար: Նեպոն նա ներբռողում է Տելեփիս Գրիգորին և միջնորդում է Գագիկին ընդունելու նրան՝ կաճառ հիմնելու համար: Մագիստրոսն ավարտում է նամակը մեջքերելով Արիստոքրելին, Պլաքոնին, Շոմերոսին և այլոց:

Երեսունութերորդ նամակը հղված է մի մարդու, որն անկեղծորեն չէ փիլիսոփա: Այս նամակում վերսպին արծարձվում են հունական դիցարանության սյուժեները: Գրիգորը հիշում է Պենվոկլեսին, որը հիմներ էր երգում Բաքոսին՝ Ապոլոնի գաճարում: Մագիստրոսը բացարում է. «Ապոլոն որդի Արամագդայ»<sup>56</sup>:

Քառասունմեծկերորդ նամակում, որն ուղղված է Շաապու անունով մի կրոնավորի, տրվում են այդ անվան այլալեզու արտահայտությունները: Մագիստրոսը դնում է անվան «Սարուր Վուամեան ձևը»: Նա ասում է, թե արաբերենում այն Սապուր է (”Sapour en arabe”), եթրայերենում Սավլու<sup>57</sup>: Այս նամակի ավարտը չափած է:

Քառասուներեքերորդ նամակն ուղղված է հայր Անանիային և պարունակում է դիցարանական անուններ հունական հեթանոսական պանթեոնից՝ «Արամագդ»՝ Եռակլես, Դինիսիոս, Ապոլոն, Դեմետեր,

<sup>56</sup> V. Langlois, Memoire sur la vie et les écrits du prince Grégorie Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.45, անունները թերվում են ըստ թղթերի բնագրի - Ա. Դ.:

<sup>57</sup> Նոյն գրեղում:

<sup>58</sup> Մագիստրոսը Զնսին միշտ կոչում է Արամագդ (Ա. Դ.): Ազաթանգելոսը 5-րդ դարում Արամագդը դիմում է որպես Զնսի համարժեքը. «Եւ անդ կործանեցին զբաղին Զեւս դիցն Արամագդայ, որն անուանեալ դիցն ամենային: Եւ անդ կանգնեալ գրերունական նշանն, և զաւանն ամրականան հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյն նուիրէին» (փե՞ս Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 440):

Արիդայ, Արենայ, Պոսիդոն, Կեկրոփս, Մողակայ, Սեւիդայ, Արտեմայ, Արգոնի, Սեմելե, Ուեայ, Ափոռոդիտէս և այլք»<sup>59</sup>: Նա նշում է նաև, որ եգիպտացիները պաշտում են Նեղոս գետը, Փագրոս ծկանը և այլ ասպակածների:

Քառասունչորսերորդ նամակում գրում է մի ուկե մարդանու մասին: Գրիգորը բավականին երկար խոսում է այս զարդի բնույթի մասին, ասում է, որ նմանները առաջ են եկել արաբական արքունիքում, որ դա ուղարկված է Միհապետի կողմից: Նրա կարծիքով Մարմաշենի վանքի վանահայր Սոսթանեսին ուղարկված այդ մարդանին՝ ուկե կոնդակով, ունի արդասովոր ծագում: Այս պատրաստված է անեղծ ձևով, վրան կրում է թագավորի փակագիրը (”*Cette bague porte la chiffre du roi*”)<sup>60</sup>, որը կարծում են գրված է Քրիստոսի վերքից հոսած արյամբ: Եվ ծերակույքի փիլիսոփաները կարծում են, թե այդ մարդանին Սոսթանեսին ուղարկել է Կոստանդին Մոնախ կայսրը:

Քառասունվեցերորդ թուղթը վերսպին հղված է Սևանի վանքի վանահայր Սարգսին: Այս նամակը պարունակում է շաբ կարևոր փաստեր Գրիգոր Մագիստրոսի թարգմանական գործունեության մասին: Նա խոսդու վանում է, թե շարունակ թարգմանում է այն գրքերը, որոնք ինքը չի գրնում հայերեն լեզվով: Պլաքոնի երկու գրքերը՝ «Ֆեղոնը» և «Շիմեոս» («Քեղուն», «Շիմեոս»), որոնցում ճառեր կան գուշակությունների և ուրիշ փիլիսոփաների մասին: Նա հիշագրակում է Օլիմպիադորոսին<sup>61</sup>, որին թարգմանել է Դավիթը (փիլիսոփա), նշում է նաև թե սկսել է թարգմանել Էվկլիդեսի երկրաչափությունը: Մագիստրոսն ասում է, եթե գեր Ասպակածը կամենա երկարացնել իր կյանքը, ապա ինքը կշանա խնամքով հայերեն թարգմանել այն, ինչ չի թարգմանվել հոյն և ասորի հեղինակներից:

Խիսդ արժեքավոր է քառասունութերորդ նամակը՝ ուղղված Մոկսի և Մանազկերպի եախսկուպս Գրիգորին՝ ձմռանը գեղացած հենեղաբեր անձրևների և փոյթորկի մասին: Մագիստրոսը ձմեռը համեմա-

<sup>59</sup> V. Langlois, Memoire sur la vie et les écrits du prince Grégorie Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.47.

<sup>60</sup> Նոյն գրեղում:

<sup>61</sup> Դավիթ Անհաղթը իր «Փիլիսոփայության սահմանումները» երկու անգամ հիշագրակում է Օլիմպիադորոսին. «Ինչպես ասում էր փիլիսոփա Օլիմպիադորոսը, ընությունը գրել է մի սրանելի հնարք՝ աղբագրացնելով հարսդացնել և կեղծ հարսդությամբ աղբագրացնելով» (էջ 55). «Այդ առթիվ փիլիսոփա Օլիմպիադորոսն ասաց. «Եթե Պլաքոնի գրվածքը չկանչեր իմ մղումը, ես գամանաքար հարած կիմնեի կյանքին հոգնաթախանձ հանգույցը» (էջ 76), (փե՞ս Ազաթ Անհաղթ, Երևան, թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Ս. Ս. Արևշապյանի, Երևան, 1980):

փում է ծերունու հետ, այնուհետև մի քանի խոսք է ասում յուրաքանչյուր ամսի վերաբերյալ: Ենքոն նա է բերում գողթան երգիչների երգած հայ հին վիպասի մի ջնաղ կոդոր, որը ներկայացնում է Արքաշն արքայի կենսաբաղդությունը:

Ո՛ փայր ինձ զծուս ծխանի և զառաւօփն նաւասարդի,

Զվագելն եղանց և զվարգելն եղերուաց,

Մեք փող հարուաք և թմրկի հարկանեաք<sup>2</sup>:

Այս հարվածը Կարապետ Կոստանյանցի հրադարակության մեջ ունի մեկ փող ավելի:

Ո՛ փայր ինձ զծուս ծխանի  
Եւ զառաւօփն նաւասարդի,

Զվագելն եղանց և զվարգելն եղերուաց,

Մեք փող հարուաք և թմրկի հարկանեաք,

Որպես օրէն էր թագաւորաց<sup>3</sup>:

Վիկոր Լանգլուան հարվածը ֆրանսերեն թարգմանել է հետևյալ ձևով.

Qui me rendra la fumée du brasier et le joyeux matin de navassart,

Et l'élan des biches et la légéreté des cerfs,

Alors que nous faisons retenir les trompes et résonner les tambours!

Խիսդ ուշագրավ է Մագիստրոսի հիսունվեցերորդ նամակը՝ ուղղված Կիրակոսին՝ հոյս կղերականին: Ողջ նամակը բժշկության և բնագիտության մասին է, որում Գրիգորը քննախոսում է մարդու հագլությունների շուրջ և Կիրակոսին խորհուրդ է փալիս կարդալ Կաղղիանոսի երրորդ գիրը: Նա ասում է, թե հայերի գրքերը բժշկության և բնագիտության վերաբերյալ հունարենից չեն թարգմանված, քանի որ հոյսները փոխառել են այն ամենը, ինչ գիտեին երեաները, քաղդեացիները, եգիպտացիները, եթովպացիները:

Վաթունվեցերորդ նամակը նորից ուղղված է Տայասպանի կաթողիկոս Պետրոս Չուաջինին: Գրիգորը սկզբում ներբողում է հայրապետին, որն իր բոլոր ջանքերով պայքարել է գոգիության դեմ և հսկել է իր հովին: Նա մաղթում է, որ Վերջինս դեռ երկար մնա իր կաթողիկոսական աթոռին: Ենքոն նա խոսում է իր որդու մահվան մասին: Նա հիշում է երիքասարդ որդուն, որն աչքի էր ընկնում իր փարիքի հայ

<sup>2</sup> V. Langlois, Memoire sur la vie et les écrits du prince Grégorie Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XIe siècle, Paris, 1869, p.49.

<sup>3</sup> Գրիգոր Մագիստրոս, Թղթերը. ԼԳ. էջ 87: Ալստեմիկոս Աշոտ Արքահամյանը գողթան այս երգին կցել է այսպիսի բացաբարություն. «Ո՛ փայր» բառացի նշանակում է ո՞վ կորար. անցյալ անկարար սպորտայասականի անցյալ ապառնու իմաստով: Տվյալ դեպքում գործածված է որպես բացականչչական արքահայրություն՝ ախ, ո՞ր է թե իներ, ո՞ր է թե փար» (փե՞ս Ա. Ա. Արքահամյան, Գրաքարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 398):

Երեխաների մեջ հագուկ փայլով, և շնորհակալ է, որ Աստված նրան փարավ իր մոփ, քանզի հուսով է, որ ծաղկափթիթ հասակում մեռած որդին կիխնի դրախտում: Նա ավարփում է նամակը՝ օրինելով Աստծուն և նրան ուղղելով իր փառափրությունը:

Վաթունվերորդ թուղթն ուղղված է մի եպիսկոպոսի. նրանում Գրիգորը քննախոսում է արքայական կաղնու մասին: Նա քննախոսում է հին աշխարհի նշանավոր կաղնիների հետ կապված գրուցները՝ օգտվելով հունական դիցարանությունից:

Վաթունվերորդ նամակն է ուղղված է դարձյալ մի եպիսկոպոսի և նվիրված է խնձորներին: Նա իր նամակագրին ասում է, թե արդեն ինքը խոսել է նուների մասին<sup>4</sup> և հիմա քննախոսելու է խնձորների վերաբերյալ: Նա հիշում է հին աշխարհի նշանավոր խնձորները, Աֆրոդիտին փրկած խնձորը, Բարելոնի խնձորը, Սողոմոնի խնձորը և այլն: Վերջապես նա ասում է, թե Դիպուրապն իր իններորդ գրքում ներբողում է խնձորը որպես երիքասարդացնող պփուտ, որը կարող է օգտագործել կարմիր հիվանդության՝ Ագրորական ախսի դեպքում: Այդ հիվանդությունը Վ. Լանգլուան համարում է քութեշը (”scarlatin”). Դիսկորինոսը խնձորը դեղ է համարում հիվանդությունների դեպքում:

Վաթունվիններորդ նամակում, որն ուղղված է Մոկսի և Մանագկերփի եպիսկոպոսին, Գրիգորն ասում է, թե Պլափոնը երբեք չէր կամենում ճառել Աստվածության մասին, որովհետև այդ նյութը պահանջում է շափ մեծ զգուշություն, և ինքը քննախոսում է այդ նյութը փիլիսոփայորեն:

Յոթանասուններկուերորդ նամակում՝ ուղղված մի արքեպիսկոպոսի, Մագիստրոսը պահմում է աշխարհի նշանավոր ծիերի մասին, հարկապես հիշում է Ալեքսանդր Մակեդոնացու Բյուցեֆալը<sup>5</sup> անունով ծին:

Յոթանասունչորդ թուղթը ուղղված է «առ ոմն», սակայն մասնագետների կարծիքով այն հեղին է «Առ որդին իւր»: Վ. Լանգլուան ասում է, թե այն բանասրեղծական մի հարված է, որն սկսվում է:

Լուսաք թէ եկ պապն պաղակ

Վարդանասարն պիսակ:

<sup>4</sup> Լանգլուան նեթադրություն է, թե նամակն ուղղված է Բջնիի Եփրեմ եպիսկոպոսին, որին նամակ էր գրել նուների վերաբերյալ:

<sup>5</sup> Բյուցեֆալը եղել է Ալեքսանդր Մակեդոնացու սիրելի ծին: Կովողները նկատում էին, որ ծին իր սպավորից խնձանում էր: Բյուցեֆալը սպանվել է մ.թ.ա. 326-ին: Նրա գերեզմանի վրա Ալեքսանդրը հիմնել է Բյուցեֆալ քաղաքը:

«Եփազա ամբողջական փապագրություններում այս երկու փողն ունեն ուղիշ պարկեր».

Լուար, թէ եկն պապակ, վարդապաքաղն պիսակ...<sup>66</sup>

Թղթի վերջում բավականին բարդ ձևով Գրիգոր Մագիստրոսը բն-նախոսում է բանասրողական կեսակների շուրջ:

Յոթանասունիհիգերորդ թուղթը վերպիին հեփաքրքիր պատում է՝ քաղված հունական դիցաբանությունից: Նամակագրին դիմելով՝ Գ. Մագիստրոսն ասում է, որ չնայած նրան շափ թիւ է ճանաչում, բայց ուզում է նրան մաքուցել փիլխսոփայական մի ընծառ: Նախ խորհուրդ է դադիւն հեփևել Ծխուսի իմաստությանը, իեւրո հիշագրակում է Կոփ-գասի երկը, որի մեջ պատմվում է, թե Բաքոսը դժնկում է խաղողի որթը, սակայն դիմաները դիրքանում են Բաքոսին, երբ նա դեռ երեխա էր, նրան մասնագրում և նրա խենդակած մարմնի մասերը դնում են կրակի վրա: Իմանալով այդ սպանության մասին՝ Արամազդը շանթահարում է դիմաներին և հավաքելով հաշնված մարմնի մասերը մի արկղում, դրանք հանձնում է իր որդուն՝ Վաղոլինին: Սա է այն դանում է Պառեաս, և նրա դամարի դուան մոտ մեծանում է մի հիասքանչ խաղողի որթ, որի միայն մի ողկույզից սպացվում էր քամանութ հազար չափ գինի: Ենքո Գրիգոր Մագիստրոսը խոսում է այն խաղողի այգու մասին, որը Նոյ նահապետը դժնկում է Ակոռիում (Վ. Լանգլուան փակագծերում գրում է. “Petit village au pied de l’Ararat”- «Փոքրիկ գյուղ Արարագի սպորոպիին»):

Յոթանասունկվերորդ նամակն ուղղված է Սարգսին՝ կոչված Տելեփիս, որն ունեցել էր ջերմային գենդ: Գրիգորը նրան գրում է դեղի մասին և հանձնարարում է Եսիդիմտսի բժկական երկը:

Յոթանասունիններողն ուղղված է Գրիգոր Ննծուցին՝ կոչված «փիելեփիս», որ թոռեց իր վանքը՝ Վարազա լեռ գնայու համար:

Մագիստրոսը Գրիգորին հիշեցնում է, թե Ասպրած կամենում է հավաքել հոգևորականներին միևնույն բնակագրեղում, նա դնում է Սուրբ զրոց խոսքերից լոռողերը. «Ո՞ր Տերը կմնա ձեր բնակագրեղում, և ո՞վ կապրի ձեր սուրբ լեռան վրա», հետո մեկ ուրիշ մեջքերում Եսայի մարգարեից. «Նաևս ունթանում է նավահանգիստ, և սակավա-

Աղէ՛, զինեա՛, զինուորեա՛, սպառազինեա՛, դու վառեա՛,

Արիաբար դու մրցեա՛ ի հանդիսի ի սպառին:

Այս գողերը հայ միջնադարյան քնարերգության եզակի կենսահիասքափ գողերից են:

պես մարդը գնում է անապափ»: Նա հիշեցնում է, թե մեծ սրբերը, ինչպես Պողոսը, ապրում էին լեռների վրա, անապափներում և գերեզմանների վրա: Ենոք Մագիստրոսը կարարում է շեղում և խոսում է լեռների մասին՝ բայց Սուրբ գորերի և աշխարհիկ երկերի:

Վերջին թույլը՝ ուժասուներենքերորդը, վերսպին ուղղված է Գրիգոր Նանոցին և սկսվում է մի շեղումով՝ նվիրված հազար բարին: Այս թղթում, ինչպես նկատում է Վիկտոր Լանգուան, արքագրողները գետենել են մի շարք այլ թղթերից հափշաճներ:

Ավարտելով Գրիգոր Մագիստրոսի թղթերի համառոք նկարագիրը՝ Վիկտոր Լանգուան նկարում է, թե հեշտ է առավել ծավալուն խոսք ասել Միջազգեպրի դուքսի մեծահափոր նամակագրության մասին, բայց ինքը բավարարվել է նշել ամփոփ ձևով ամեն նամակի բովանդակության հիմնական մասը՝ ուղղված հասցեափերերին։ Կարելի է փեսնել, որ այդ նամակների մեծ մասը հետաքրքիր են հնադարի վերաբերյալ փեղեկություններ պարունակելու պաճառով, սակայն առավել ուշադիր դրանք զննելով, կարելի է եզրակացնել, որ նամակագրությունը հիմնավոր ձևով ներկայացնում է այդ շրջանի գրական աղբյուրները<sup>67</sup>։ Պեսք է նկարել նաև, ավելացնում է Վ. Լանգուան, որ Գրիգոր Մագիստրոսը վկայակոչում է քիչ հայտնի անուններ, որոնք չենք գրնուում անփիկ աշխարհի նշանավոր գրողների բնագրերում։

«Այս ամենով հանդերձ Մագիստրոսի թղթերը փասնելերորդ դարի հայ գրականության ամենազարմանալի կոթողն են, և մնում են ցանկալի, -ասում է Վ. Լանզլուան, -որ Վենետիկի Ս. Ղազարի ակադեմիան հրապարակի այդ կարևոր նամակագրությունը «Ազգային մատենագիրների ժողովածուում», որի թողարկումը սկսվել է»:

<sup>67</sup> Վիկտոր Լանգուան, հավանաբար ելեկով Մագիստրոսի ապրած ժամանակաշրջանի բաղադրական անկումներից և համեմափելով այդ հարվածի գրականությունը 5-րդ դարի մաքենագրության հետ, այն անվանում է անկումի գրականություն՝ “*à des sources littéraires de la décadence*”. Պարզ է նկատել, որ արդի գրական մոդեռնումներում նման բնորոշում չկա - Ա. Դ.:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ՃԱՆԱՊԱՐՀՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԿԻԼԻԿԻԱ, ԿԻԼԻԿՅԱՆ ՇԱՅ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐՆ ՈՒ ՃՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ

Վիկոր Լանգլուան Ֆրանսիայի Նապոլեոն Երրորդ կայսեր համձնարարությամբ և նյութական աջակցութեամբ 1852-1853 թվականներին այցելում է Կիլիկիա, Փոքր Հայաստան, հնագիտական հետազոտություններ կատարելու: Նա ընդամենը քաններեք փարեկան էր, սակայն ուներ իր գործի կարևորության գիտակցումը և անսահման նվիրվածությունը՝ իրեն Կստակածը հնարավորին չափ անթերի կատարելու: Այդ հետազոտման արդյունքներին նա անդրադարձավ իր կարճապէն, սակայն գիտական առումով բեղուն ու օրինակելի կյանքի փարեր փարիններին:

Դեպի Կիլիկիա կատարած ճամփորդության առաջին գրավոր հաշվետվությունը եղավ 1854 թվականին Փարիզում լույս գետած «Տեղեկագիր Կիլիկիայի և Փոքր Հայքի հնագիտական հետազոտությունների (1852-1853 թթ. ընթացքում) երկը: Ուսումնասիրության համառորդ նախարան-խոսքում հայագետը ընդիհանուր գծերով պարուն նախարարին ներկայացնում է իր կատարածը. «1852 թ. մայիսի 26-ի որոշմամբ, Զերդ գերազանցությունը ինձ հանձնարարել է հետազոտել Փոքր Հայաստանը, թագավորություն իհմնված միջնադարում՝ Փոքր Ասիայի մի մասում, հայտնի Կիլիկիա անունով»<sup>1</sup>: Նա ասում է, թե ուր ամսվա ընթացքում ինքը շրջել է այս քրիստոնեական հին թագավորության բոլոր հնարավոր կեփերը, որը մահմեդականների գրավումից և վերջին Լուսինյան թագավորության վերացումից հետո դարձել է իհմնականում Աղանայի փաշայություն: Նա հավաքացնում է, որ իր էքսկուրսիաների ընթացքում հաջողությամբ այցելել է Փոքր Հայաստանի պատմական վայրերը և կարողացել է ուշադիր քննությամբ հնարավորինս նկարագրել այն ամենը, ինչ մնացել է հնագույն ժամանակների քաղաքներից ու հուշարձաններից: Ինքը ներկայացնելու է մի շարք արձանագրություններ՝ իր կողմից հայտնաբերված և դրանց նկարագրությունները, որքան որ դրանք մնացել են վաղնջական հուշարձանների ավերակների մեջ ցիրուցան եղած քարերի վրա: Եթե այդ արձանագրություններից շատերը թերի են, ապա դա չպետք

<sup>1</sup> V. Langlois, Rapport sur l'exploration archéologique de la Cilicie et la Petite-Arménie, pendant les années 1852-1853, Paris, 1854, p. I. Ցավոր քաննեկերորդ դարասկզբին է շարունակում է մահմեդականների կողմից ոչ միայն հայկական, այլև ընդհանուր քրիստոնեական մշակութային գանձերի ոչնչացումը - Ա.Դ.:

է միայն վերագրել դարերի կործանարար ընթացքին, դրանց թերի լինելու պայմանագրությունը նաև մահմեդականներն են, որոնք երկիրը գրավելու պահից սկսած կործանել են քրիստոնեական հուշարձանների մեծ մասը, որովհետո դրանք նրանց հիշեցնում էին նախկին գերերին<sup>2</sup>:

Այսուհետեւ Վ. Լանգլուան առանձին-առանձին նկարագրում է իր այցելած բնակավայրերը, որոնց թիվն ապշեցուցիչ բազմաքանակ է: Նկարագրվում են Կոռիկոսը, Այասը, Տարտոնը, Լամբրոնը, Աղանան, Սիսը և այլ բնակավայրերը: Գիբնականը բերում է հունարեն և հայերեն մի շարք արձանագրություններ՝ դրանց կցելով ֆրանսերեն թարգմանությունը, ներկայացնում է նկարագրված բնակավայրերի աշխարհագրական դիրքը, բնակիչների նիստուկացը, պատմական կարևոր հուշարձանները: Շապ ուշագրավ են հավկապես Տարտոն քաղաքի հայկական արձանագրությունները: Հայկական եկեղեցին, ըստ ավանդության, հիմնվել է Սուրբ Պողոսի կողմից, սակայն վերսպին կառուցվել է իններորդ կամ գասներորդ դարերում և կոչվել է Սուրբ Կույսի անունով: Նրա պատերի վրա փորագրված են փաստահարուսափ արձանագրություններ, որոնց հաղորդած դեպքերի մասին պատմությունը լուս է: Վիկոր Լանգլուան բերում է այդ կարևոր արձանագրությունները.

† Ի թու: Հաց:  
Ո՛՛Ե: Նորոգեց  
աւ պարիսպս Տարս  
ոնի ծեռամբ թագ.  
Հայոց Նեթոնյ.<sup>3</sup>

Այս արձանագրությունը փորագրված է եկեղեցու արքաքին պատին: Եկեղեցու ներսի պափի վրա ագուցված գրապանաքարի վրա գրված է մեկ այլ արձանագրություն.

|               |                        |
|---------------|------------------------|
| † ՍԲ          | ԱՌ                     |
| ԵՓ            | ԱՆ                     |
| Ո             | Ս                      |
| †             | †                      |
| Կա(ն)զնեց(ալ) | Ի բարեխաւս հոգին       |
| արքայակ(ան)   | գերեսի սպեփ            |
| սուրբ նշանս   | անոսի որ փիխեցաւ       |
| ի թվ. հ. չժա  | ի Քրիստոս եկ այս կեանս |

### ԱՄԷՆ

<sup>1</sup> V. Langlois, Rapport sur l'exploration archéologique de la Cilicie et la Petite-Arménie, pendant les années 1852-1853, Paris, 1854, p.34. Արձ. ուղղագր. Վ. Լանգլուայինն է - Ա.Դ.:

Դռան վերևի կողմնամասում կա մեկ ուրիշ փապանագիր՝ չափած հորինված:

Որ վասն անչափ սիրոյ քոյին  
Բանդ ի կուսէ առեր մարմին,  
Աղաչանալը Ասփուածածնին  
Թող ըզյանցանսըն զԱլիքսին  
Որ և հանգեալ ի մեծ թուին  
Չկ հինգին.

Յորժամ զայցես յաշխարհ կրկին  
Յարոյ զա փառաւը քոյին. Ամէն.<sup>3</sup>

Մեկ ուրիշ արձանագրություն էլ կապվում է 1317 թվականին, երբ թագավոր էր Օչինը: Արձանագրությունը չափած է և գդնվում է եկեղեցու խորանում:

† Կամաք անմահ բարերարին.  
Որ է պատճառ հանուրց գոյին.  
Սուրբ և հզօնաւր արքային Աւշին  
Տերամբ թագվոր Հայոց զարմին,  
Կանգնեաց զամրոցս այս ահազին  
Նոցունց որք ասք ապասկանին:  
Ըգիիննադիր այս ամրոցին

Հղթագազարմըն Կոստանդին  
Որ նա փիրէ մեծ դղեկին  
Որ Դեղընքար անուն կոչին.  
Վարդեցան ջանիք սորին  
Եալթն հարիս վախառն ութին (ԶԿԸ):  
Արդ որք ի սա ապաստանին  
Եւ կամ մարմնոյ աչալք նային,  
Տալ փոխարէն զՏէր ողորմին,  
Լինել ժառանգ Աղին որախտին. ամէն<sup>6</sup>:

Մեկ այլ արձանագրություն Սուրբ Կույսի պատկերի մասին է, որն արծաթապափ է, պատրաստվել է դռան համար և սփեղծվել է ժողովրդի միջոցով.

Զարձաթապատ սէշանոյ պափկերքս  
որդբամթք ժողովրդե[ան].....  
՚ի դուռն Տարսոնի մը ած ածնի եկեղեցւոյն  
՚ի թվին. Ո..<sup>7</sup>

Կա նաև մի մզկիթ-եկեղեցի, որը մզկիթ է առավել ուշ ժամանակ-ներում, նրա առաջին կառուցողը եղել է Օշին թագավորը (1307-1320թթ.): Վ. Լանգոլուան ներսի դրվերից մեկի վերևում կարդացել է հետևյալ արծանագրությունը.

Այս դուռն Տեառն է արդարոց

Ա ընակարան (t) երկնայնոց.

## Պահեաց զԱշխին արք(այ) Հայոց

որ քայիչն է ամենայն գործոց\*:

Սիս մայրաքաղաքին վերաբերող հավաքածն այսպես բաց է թողն-վում, որովհետք մանրամասն ներկայացվելու է Վ. Լանգուայի մեկ առ աշխատության մեջ՝ «Ճամփորդություն դեպի Սիս»:

Անավարդ քաղաքը գիտում է Սսից դեպի հարավ կես օրվա ովքի ճանապարհ հեռավորությամբ: Այն հին բնակաբեղի է, երևում են փառի կամարի և հին թագրոնի ավերակները: Չաղաքի կենտրոնում է գիտում փասներկուերորդ դարի մի եկեղեցի: Մի հայկական դրյակ զարդարում է Անավարդի վերևում գիտող ժայռը: Նրա ներսում երևում են եկեղեցիներ, զորանոցներ, խանութներ և այլ կառույցներ: Եկեղեցիներից մեկի վրա դրոշման են Ռուբինյան հայկական թագավորական գերդասպանի անունները, սակայն եկեղեցին ամրան է խառնաված, որ շատ բան անհնար է կարդալ:

Արևելյան կողմում կարդացվում է հեքիչյալ արձանագրությունը. «Յիշաքակ է սա Աւշին սրբի Թորոս որդի Կոսպանդին ար յարժանացը առաջար ծեր ի Քրիստոս Յիսոս Կոր մեր. ամեն»<sup>9</sup>:

Արձանագրության մեջ հիշապակվում է Օշինը, որն ըստ Վ. Լանգ լուսայի Լևոն Առաջինի եղբայրն էր, հաջորդեց իր հորը՝ Թորոս Առաջինին: Մինչ այդ Սիսը դեռ չէր դարձել Կիլիկիայի մայրաքաղաքը այն մայրաքաղաք դարձավ Լևոն Երկրորդի օրոք: Անավարդի դյակը մի յուրօրինակ միջնաբերդ էր, որը պաշտպանական մեծ հնարավորություն ուներ: Եզիփոսի մահմեղականները, երբ գրավեցին Անավարդը, քանի եցին առաջին Ռութինյանների գերեզմանները՝ կար-

### ՊԱՅԻ ՎՐԵՂՈՒՄ:

ույն պեղում, էջ 38:

ույն պեղում, էջ 44:

ծելով, թե մեռածների հետ թաղված են նրանց գանձերը: Հսկ Վ. Լանգլուայի՝ հայր Ղ. Խնճիճյանն իր «Աշխարհագրութիւն չորից մասնաց աշխարհի» գործում կարևորում է հայ թագավորական ընդանիքի անունները պարունակող արձանագրությունը: Անավարզի դոյլակի աշխարհակներից մեկի վրա կա մեկ ուրիշ կարևոր արձանագրություն, որը խիստ խաթարված է:

«† Յամի ՈԼԶերորդի թվականիս հայոց . . . . .  
մի . . . . .  
ուրբեն . . . . լեւոնի որդին. . . . .  
նորա եղբայրն բարեպաշտն ունիր . . . . .  
(փոր) ու լերամբ ևս և ազաք բնակութեամբն . . . . .  
. րկրաւոր փերութ. . . . . սկսեալ աւշինէ սկ. . . . .  
յթ քաղաքաց անավարզա ձենքիայ խափա. . . . .  
. արզապառս . . . . . աշխարհիս. . . . .  
. (2)ինեաց զպարհսպս . . . . . հիմսագրեաց լուր. . . . .»<sup>10</sup>

Հայոց 636 թվականը դառնում է Տուխանոսի փոմարի 1188 թվականը: Վ. Լանգլուան կարծում է, թե այդ արձանագրության վեցերորդ դորում հիշագրակած Օշինը 1072-ին է եկել Կիլիկիա և հասրավվել է Լամբրոնի ամրոցում: Երրորդ դորում հիշագրակած է Ուռիբեն Երկրորդի որդի Լևոն Առաջինը, որը եղել է Տայասպանի մեծ իշխանը 1174-1181թթ.: Յոթերորդ դորում նշված են երեք քաղաքների կամ բերդերի անուններ՝ Անավարզ, Ձենքիա, Խափա, որոցից վերջին անունը լրիվ անձանութ է:

Վ. Լանգլուան ուշագրավ ծևով ներկայացնում է Կիլիկիայի կարևոր բնակավայրերից մեկը՝ Այասը: Այս անվանումը համարում է հայկական: Այսը նավահանգիստ է և այն ծովածոցը, որի վրա այն գրինվում է, միջին դարերում կոչվել է Տայկական ծով, իսկ 19-րդ դարում այն կոչվում է Ալեքսանդրեպ: Այսն իր աշխարհագրական դիրքով մեծ նշանակություն է ունեցել թե հնադարում և թե՝ միջին դարերում: Ին քաղաքը, որն ավելի արևելք է, Կիլիկիայի նախադարուն է: Մնացել են քաղմաթիվ հետքեր առյուտե շինությունների, որոնք դեռ կարելի է փեսնել Այսա-չայ վարկի ափերին, և որոնք վկայում են վաղեմի հղորությունը: Միջին դարերում և հայերի փիրապեվության ժամանակ Այսը դառնում է զիսավոր առևտրական նավահանգիստը, որով գեղագիտութիւն էին Փոքր Ասիայի ապրանքավայր հանդիսավորություն ունեցուի առաջնային կենտրոնը:

<sup>10</sup> Նույն դորում, էջ 46:

արևմուգրի ապրանքները արևելյանի հետ<sup>11</sup>: Այս քաղաքում էր գլուխ նաև մաքսագրունքը:

Վ. Լանգլուան խոսում է նաև Այասի՝ իր ժամանակվա դերի մասին:

Նեփազության վերջում Վ. Լանգլուան վերսպին հաղորդում է պարոն նախարարին, որ իր գետած ջնաղ պագմական հուշարձանները առավել քայլայվում են, որովհետև մահմեդականները նպաստում են նրանց ամբողջական վերացմանը:

Բազմամարդ ու եռանդուն հայ բնակիչները Փոքր Հայասպանում մնացել են հազիկ հարյուր հիսուն հազար մարդ: Վ. Լանգլուան արձանագրում է երբեմնի հարուստ կյանքով ապրող հայերի ծանր վիճակը մահմեդական լծի վակ:

\* \* \*

Գրական, ազգագրական հնագիրական, բանասիրական, պատմական առումով մեծարժեք է Վիկոր Լանգլուայի «Ճանապարհորդություն դեպի Սիս» աշխապությունը:

1852 թվականի նոյեմբերի 20-ին Վիկոր Լանգլուան թողել է Ադանան և մեկնել Կիլիկիայի հյուսիսը, որպես պետք է փեսներ միջնադարյան հայաստանի բազմաթիվ հնագիրական հուշարձաններ:

Քանի որ Ադանայից մինչև Սիս ընկած ճանապարհը լի էր վկանգներով, Վ. Լանգլուայի անձի ապահովության համար ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ նահանգի դեկավար Զիա փաշայի միջոցով, որն իրեն փալիս է ուղեկցող գինվորական խումբ՝ բաղկացած փասնինգ հղուց և հանձնարարական նամակ Մուրտազա-Շեկի անունով, որի հովանավորությունը կապահովեր անվտանգ հեփաղություններ կարարելը: Ֆրանսիական հյուպատոսության ներկայացուցիչը՝ Բողոքս Առկը, նրա զարմիկը և բազմաթիվ ծառաներ կազմում էին քարավանը՝ բաղկացած քաններեք հղուց: Ադանայի կաթոլիկ հայ եպիսկոպոսը՝ Տովհաննես Նաջյանը, որը գործ ուներ Սսում, միացել էր քարավանին:

Առաջին օրը քարավանը հյուրընկալվում է թուրքական մի ցեղ:

“Նեփարքիր մի վարկած գոյություն ունի Քրիստոն Կոլումբսի ծննդավայրի մասին: Կարծում են, թե իր ծննդավայրը հանձարեղ այդ ծովագնացը չգիտեր և որպես ծննդավայր նշում են մի շարք երկրներ՝ Կորսիկա, Ֆրանսիա, Անգլիա, Իսպանիա, Հայաստան, Լեհաստան, անգամ Նորվեգիա (թեև John's Legendary lost Bathroom Readers, The Bathroom Readers Institute, Ashland, Oregon, 1999, p.36- “Spain, Armenia, Poland, and even Norway, Norwegians say his real name was Christopher Bonde”, p. 36):

դահմբի կողմից: Տաջորդ օրը քարավանը հասնում է Մուրփազա-Քելի մոտ, որը իմանում է Վ. Լանգլուայի ներկայության մասին, իտուն հեծյալներով ելում է ընդառաջ և ուղեկցում է այն վրանը, որը նախապեսված էր նրանց ընդունելու համար:

Տաջորդ օրը, չնայած բեկի պնդումներին՝ մի քանի օր հյուրընկալվել իր մոտ, Վ. Լանգլուան մեկնում է դեպի Սիս, որը հեռվից երևում էր որպես արձվաբույսի տեսքով մի դյավկ՝ հորիզոնը եզրափակող լեռան կարարին բազմած: Մուրփազա-Քելը չուղեկցելով քարավանին՝ նրա հետ դնում է իր որդուն, որպեսզի ոչ միայն ուղեկցի, այլև ներկայացնի հյուրին հայոց պատրիարքին, որը նստում էր Սսի վանքում: Երեք ժամ հետո խոսքը հասնում է իր նապատականին: Սիսը կառուցված է լեռների բարձրության վրա՝ որպես մի ամֆիթատրոն: Ինչպես Տարտոնում և Աղանայում, Սսի վները շարված են դարավափի ծևով ("les maisons de Sis sont à terrasses"), թվում է՝ փների մի շարքի գանձերը փողոց են մյուս շարքի համար: Վանքը կառուցված է հյուսիսում՝ քաղաքի բարձր մասում: Այն երևում է շաք հեռվից՝ շնորհիվ իր բազմաքանակ շինությունների: Սի մզկիթ և մի շուկա կազմում են Սսի թուրքական շինությունները: Դյավկը խոյանում է վերևում՝ ժայռերի գլխին: Կան վայրի թփություն, արևից խանձված, չորացած խոր, որը կերակրում է այծերի և ոչխարների հովերը: Քաղաքի ներքին մասով հոսում է Կարարուն-չայ գետը: Երբ գալիս է ձնիալի ժամանակը, գետը փոխվում է մի հեղեղի, որը սպառնում է քաղաքի ամրապատերին: Երբ Մահմեդ-Քելը Վ. Լանգլուային ներկայացնում է վանքի եայսկոպոսներին, վերջինս փեղեկացնում է, թե եկել է մի քանի օր վանքում մնալու, որպեսզի ուսումնասիրի հայկական ժամանակաշրջանի պատմական հուշարձանները և ապա հանձնում է Կոստանդնուպոլիսի հայ պատրիարքի նամակը: Պատրիարքը, կարդալով այն՝ ժայռում է և ասում. «Փաշան կառավարում է Աղանան, բայց լեռանը փիրում է Կուսան-օղլին»<sup>12</sup>:

Կուսան օղլին այն քարածքի փերն էր, որի վրա գրնվում էր Սիսը: Նա ասում է, թե պատրիարքը դարձել է այդ թուրք կառավարչի վասալը, որին շարունակ ընծաներ է փալիս:

Մուրփազա բեկը՝ Կուսան օղլու ազգականն էր, և ինքն էլ իր հերթին պատրիարքից պոկլում էր ծանր դուրքեր և հաճախ միջնորդ է հանդիսանում վերջինիս և Աղանայի կառավարչի միջև՝ նրա շարունակական հարկապահանջության բավարարման խնդիրներում:

Պատրիարքը կարգավորում է ուղեկցող խմբի խնդիրները, և Վիկոր Լանգլուային ուղեկցում են արքասահմանցի հյուերի սենյակը,

<sup>12</sup> V. Langlois, Voyage a Sis, capitale de l'Arménie au moyen age, Paris, 1855, p. 8.

որը վանքի ամենազեղեցիկ և լավագույն կացարանն էր: Տայագեւոր պափի վրա գրեսնում է մեծաքանակ անուններ՝ թուրքերի, արաբների, հայերի հիշաբակարաններ գարբեր լեզուներով և դրանց մեջ նրան մի անուն, որը հայունի է հնագեղիների և արևելագեղիների շրջանում, հաճելի անակնկալ է պատճառում: Անոնք գրված էր կավճով և մեծ լուսաբառով:

CH. TEXIER, VOYAGEUR FRANÇAIS,

20 JUIN 1836<sup>13</sup>

Շ. ԹԵՔՍԻԵ, ՖՐԱՆՍԻԱՑԻ ՃԱԾԱՊԱՐՈՐԴ, 20 ՀՈՒՆԻՍԻ 1836

Կրոնավորները Վ. Լանգլուային ասում են, որ իրենք գասանվեց գարի է, ինչ չեն գետել եվրոպացիների, և վերջինը թեքսիեն էր, որ անցնում էր Սսով՝ Մարաշ և Տրավիզոն գնալու համար:

Սսի ծագումն անհայտ է, և օժանդակ որոնումները, թե ովքեր են այն հիմնադրել, Վ. Լանգլուայի համար մնում են անպատճ: Սակայն շաք հիմքեր կան պնդելու, թե քաղաքը գոյություն է ունեցել հնագույն ժամանակներում: Քաղաքի հոռմեական անցյալին վերաբերող որևէ շինություն հնարավոր չէ գրնել, Վ. Լանգլուան կարծում է, թե դրանք անհետացել են, երբ Լևոն Երկրորդն այն դարձրել է Վիկիկիայի մայրաքաղաքը: Քազմաթիվ հեղինակներ և նրանց մեջ Բարկերը, որը Երկար ժամանակ մնացել է Վիկիկիայում, կարծում են, թե դա հնագույն Պիհենիսուն է, որը եղել է պրոկոնսուլ (անթիպափ) Ցիցերոնի նստավայրը: Վ. Լանգլուայի կարծիքով ինչպիսի անցյալ է ունեցած լինի Սիսը, պատրիարքության մեջ այն հայունի է դառնում մեր թվարկության դասաներկություն դարում: Լևոն Երկրորդը վերակառուցեց Սիսը և նրա թագավորությունից սկսած հաջորդ Վիկիկյան թագավորները<sup>14</sup> այնպես հիմնում են եկեղեցիներ, այլ հուշարձաններ: Նոր քաղաքը՝ Սիսը, փոխարինում է Անավարզին, որը մինչ այդ Ռուբինյան առաջին իշխանների գերեզմանագերին էր: Սիսը պահպանում է իր առաջնային դերը Վիկիկիայի մյուս քաղաքների նկավամամբ մինչև 1374 թվականը՝ մինչև Եգիպտոսի մահմեդականները փիրանում են նրա վրա Լևոն Վեցերորդի ժամանակ՝ քանիելով ամբողջությամբ թագավորական պալատը և ավերելով դյուակի պատերը: Սիսը, Վ. Լանգ-

<sup>12</sup> Նոյն գետում. էջ 9:

<sup>13</sup> Վ. Լանգլուան որոշ հայերն բարեր գրում է ֆրանսերներ և կողքին չի դնում թարգմանությունը. դրանցից է "takhavor"-ը:

լուայի բնութագրմամբ, իր այցելության ժամանակ մի փոքրիկ ավան էր՝ հինգ հարյուր փուն թուրք և հայ բնակչությամբ՝ խմբված հին դյակի և վանքի շրջակայքում: Սիսը ենթարկվում է Կուսան-օղի ըն-փանիքի բեկին և Աղանայի փաշային, որի հարկադրությունը շարունակական փուրքեր են պահանջում:

Վիկոր Լանգլուան մանրամասն նկարագրում է Ռուբինյանների գահակալության շրջանի հուշարձանները: Հայ թագավորների պալատը կոչվել է դարպաս: Հայագետը Սիս հասնելուց չորս օր հետո ուղևորվում է դեպի թագավորական պալատ՝ վանքի եպիսկոպոսներից մեկի՝ Կարապետի հետ: Երկու ժամ չափազանց շոգի մեջ քայլելով՝ նրանք հասնում են ամրոցի դարպասներին: Ինչպես միջնադարի բոլոր ամուր բերդերը՝ Սիս-Կալեսին նույնպես լրված է: Թուրք ցեղերը նրանում պահում են իրենց հոփերը՝ գինելով առափ խոփ: Դիպանի բերումով այդ օրը ամրոցում արածում էր այծերի հոփ, և երիտասարդ հովիվը եկողներին հյուրասիրում է այծի կաթով:

Սիս-Կալեսին ծվածն է, ունի երեք դուռ: Ժայռը, որի վրա կանգնեցված է ամրոցը, ունի ոչ հավասար բարձրություն, որից էլ ամրոցի պատերը բարբեր չափերի են: Ամրոցը բացի իր անհավասար բարձրության, բաժանված է երեք մասերի, և ամեն մասը նսփած է առանձին ժայռի գագաթին: Տարավային կողմում, ուր գինվում է դիմանց-աշբարակը, շափ ամուր է շինված և եղել է առաջին Ռուբինյան թագավորների նսփավայրը: Լևոն Երկրորդը վերակառութելով քաղաքը՝ մեծ նշանակություն է փուլ արքայական պալատի ամրությանը: Կիլիկիայի մյուս քաղաքները՝ Տարտոնը, Աղանան, Կողիկոսը, Մամես-փիան գինվում են դաշտավայրում և մաքելի են բոլոր կողմերից թշնամու հարձակման համար և չեն ընձեռում ինարավորություն՝ դիմադրելու ահարկու թշնամիներին: Սիսն, ընդհակառակը, իր դիրքով և ժայռերով շրջապարփած գոփիով, մահմեդական եղուզակների համար ծառայում է որպես դժվարին արգելք՝ նրանց մոդենալու քաղաքին, և հայերը կարող են հեշտությամբ իրականացնել իրենց պաշտպանությունը:

Լևոն Երկրորդը ամրոցը կառուցում է ժայռի գագաթին, որն իշխում է քաղաքի վրա և նախագծում է նոր քաղաքը Ք. ձ. հետո 1186-ին: Առաջին Կիլիկյան հայ թագավորը չի ավարտում իր նախագծերն իրականացնելը, այդ գործը շարունակում է հաջորդներից մեկը՝ նրա Զարել դսփեր ամուսինը՝ Նեթում Առաջինը, որը զահ է բարձրանում Լևոնի մահից հետո: Նեթումն ավարտում է Լևոնի սկսած գործերը, դա շափ լավ երևում է մի արձանագրությունից, որը ցավոք վնասված է. այն փորագրված է աշբարակի դահլիճի ներսում:

## «ԻՇՈՒԱԿԱՆԻՄԱՅՈՑ»

.... ՀԻՅԱ.ԱՇՐԱՎ

.... ՀԻՆԵՑՄՈՅՑՁԱԳ»<sup>15</sup>:

Այս թերի արձանագրությունն ասում է, թե Տեթումը ավարտել է դիմակետ-աշբարակի կառուցումը, և այն դարձել է նախավայր հայ թագավորների համար: Աշբարակի հյուսիսային կողմում կա ասքի-ճան, որը փանում է դեպի ամբար, ուր հավաքվում էր անձրևաջուրը: Շարունակելով շրջագայությունը ամրոցում՝ Վ. Լանգլուան փեսնում է նոր ամրություններ՝ կառուցված երկրորդ ժայռագագաթին:

Վ. Լանգլուայի կարծիքով Կիլիկյայի հայկական եկեղեցիներն ու մաքրությունները նման են նույն վայրերում եղած հունականին<sup>16</sup>: Տայկա-կան եկեղեցիներն արդարինց ունեն պարզ զարդարանք, իսկ ներսի մասում ունեն սյուներ և որմնանկարներ, որոնք ներկայացնում են հայ եկեղեցու սրբերին, մաքրություններն առավել պարզ են: Եկեղեցու դիմացի մասը մի շքամութք է, և կան երեք դրոներ, որոնք ներս են գա-նում:

Սիս-Կալեսին երկրորդ գագաթի ամրություններն առավել գուտելի են թուրք-սելջուկների և Եգիպտոսի մամելուկների հարձակումներից: Երրորդ և չորրորդ գագաթների արանքում կա հրաշալի ջրի մի ամբար, որն ըստ ավանդության օգնել է հայերին բուժելու զանազան հիվանդությունները: Երկրորդ և երրորդ գագաթների միջև կա մի քարանձավ, որը գեղացիներն անվանում են Գերշինլիկ (Աղավնագուն), սակայն այնքան չկա ոչ մի աղավնի: Ամրոցի երեք բարբեր հարկա-բաժիններում երևում են այլ շինությունների հետքեր՝ խանութներ, բանդեր, զորանոցներ և այլն:

Վիկոր Լանգլուան առանձնակի պատկերում է թագավորների պալատը: Նա ներկայացնում է, թե ինչպես է Ղ. Ինճիճյանը այն պատ-կերել իր աշխարհագրության մեջ: Ժագավորական պալատը կոչվել է դարպաս: Պալատն ուներ երեք հսկա դրոներ: Դռների և պատուհանների վերևում եղել են արձանագրություններ, որոնց հետքերն ան-գամ ջնջվել են: Սակայն Ինճիճյանը դալիս է դրանց նկարագիրը:

<sup>15</sup> V. Langlois, Voyage à Sis, capitale de l'Arménie au moyen age, Paris, 1855, p. 19.

<sup>16</sup> Ավելի ուշ շրջանում կան հակառակ կարծիքներ: Ֆրանսիացի բյուզանդական Շառ Դիլը գրում է. «Արևելքի քիչութեան արվեստի պարմության մեջ Տայասպանը գրափում է մի կարևոր տեղ: Արևելյան Պարսկաստանի և հելլենիստական Բյուզան-դիայի միջև ունեցած իր աշխարհագրական դիրքի շնորհիվ, նա կոչված էր բնականա-րայ խաղաղութեան միջնորդու դեր, այս երկու երկրների միջև: Սրանով է, որ նա ունեցավ մեծ մասնակցություն բյուզանդական արվեստի կազմագործան մեջ (գրես Célébration solennelle du quinzième centenaire de la traduction Arménienne de la Bible, Paris, 1938, p. 20):

Պայտում եղել է Սուրբ Սոֆիայի եկեղեցին, որի համար Նեթում թագավորը կառուցել է մի շափ քարձը զանգակապում: Լևոն Երկրորդի ժամանակ պայտին ունեցել է մի չքնաղ պարփեզ, որի հոյակապությունը, ըստ ականավեսների, դժվար է գրչով նկարագրել:

Միս քաղաքի կենտրոնում կա մեկ ուրիշ՝ շափ փոքրիկ եկեղեցի, որը շրջապատված է քարձը պարփեռով: Պատերի և եկեղեցու արանքում կա մի գերեզմանոց: Այս եկեղեցին Սուտմ եղած հոգևոր շինություններից ամենահին է՝ կառուցված Նեթում արքայի կողմից և կոչվում է Սուրբ Սարգսի հայ եկեղեցու ամենապաշտված սրբերից մեկի անունով: Եկեղեցու վրա կան զարդարանակներ: Քաղաքում կա նաև Ռուբինյանների դարաշրջանի մեկ ուրիշ եկեղեցի՝ Սուրբ Պողոսի և Պետրոսի անունով, որը լիովին ավերված է, կանգուն է մնացել միայն ավագ խորանի հետևի մասը: Կան նաև ուրիշ ավերված եկեղեցիներ: Եվ վերջապես կանգուն է Աստվածամոր տաճարը, որը գալիս է Ռուբինյան թագավորների ժամանակաշրջանից և վերակառուցված է մի քանի փարի առաջ ու սիրված ուխտափեղի է հավաքացյալների համար: Այդ եկեղեցու պատի վրա փորագրված է՝

### Ծբ ԿՈՍՏԱՆԴԻՆ

Եթե Սուտմ մնացել են թիզ թվով կանգուն հուշարձաններ, դրա պագճառը մահմեդականների հաճախակի հարձակումներին են: Ըստ հնագույն ճանապարհորդների հուշերի՝ Միս քաղաքը եղել է գեղեցիկ և ունեցել է ընդիր կորողներ՝ արդեն Լևոն Երկրորդի ժամանակ: Սահ հուշարձանները քանդված են, եկեղեցիները ավերված, լրված, և քաղաքի կարևորությունը վերացած է, հայաստանի երթեմնի շեն ու գեղեցիկ մայրաքաղաքը թուրքական ցեղերի կողմից վերածվել է մի ավանի:

Ուսումնասիրության Երկրորդ գլուխը կոչվում է "Monuménts Arméniens de l'époque musulmane" («Մահմեդականների շրջանի հայկական հուշարձանները»): Եզիափոսի մահմեդականների հարձակումների հաճախանալու հետևանքով հայաստանի կաթողիկոսական արտօռը Հռոմելայից փեղափոխվում է Միս՝ թագավորական պալատին մոտ: Կաթողիկոսը նագում էր դարպասում: Առաջին կաթողիկոսն ունեցել է մի համեստ տուն, որը հետագայում առավել բարգավաճել է: Դեռևս պահպանվում է հնագույն կաթողիկոսարանը, որը կառուցել է Ղուկաս կաթողիկոսը իր և հոգևորականների համար: 1734-ին Ղուկաս կաթողիկոսը կառուցում է մի վանք ու մի եկեղեցի, որը նվիրում է Սուրբ Գրիգոր Լուսավորչին: Եկեղեցին, որը հիանալի է կառուց-

ված, դարձել է դպրոց, ուր հայ երեխաները սովորում են իրենց լեզվից փարրական գիտելիքներ և ծանոթանում են կրոնին: Ներազյում կառուցվել է կաթողիկոսական նսպափեղը՝ փորագրված փայտից և ոսկեփառ մակագրությամբ: Ազ խորանի առաջ պահպանվում է Ղուկասի գերեզմանը, որը Սուտմ կառավարել է 1734-1737 թվականներին: Այդ մի պրիզմայաձև հուշարձան է, սպիրակ մարմարից՝ վրան մակագրություն:

Այս է փապան հայոց սրբածնի Կիլիկեցի վեհապետ փետր Ղուկաս կաթողիկոսին որ և հանգեալ մեծ թվին ՌՃՋՇՆ վեց ու ի' ամսեան. . . . օրդաբաթուերեբն<sup>17</sup>:

Եկեղեցու բակում՝ դռան առջև, կան մի շաբ գերեզմաններ: Այս գեղն է Հովհաննես Դինգերորդի գերեզմանը: Վ. Լանգլուան ներկայացնում է փապանագրի կրկնօրինակը և նրա ճիշդ ընթերցված բովանդակությունը, որը չափած է.

### ԱԲՍԴԱՆ

### ԿԻԼԻԿԻՈՑ

### ԵՐԻԳԵՂՉԵՆ

### ՌԵՇԱՆԳԵԱՒ

### ՌԱԶԱՐՄԱՐԻՈՒԹ

### ԻՅԱՄՄԵՍԵԱՆ

### ՅՈՒԱՆՆԻՍԻՆ

### ԿԹՈՂԻԿՈՍԻՆ

### ԿՈՉԵԱՆԱՃԻՆ

### ԻԹՎԱԿԱՆԻՆ

### ԵՕԹԱՆԱՍԻՆ

### ԴԵԿՏԵՄԲԵՇՆ

Այս փապան յՈհաննիսին

Կիլիկիոյ կաթողիկոսին:

Եր ի գեղջէն կոչեալ Ղաճին՝

Որ և կանգնեալ ի թվականին

Ղազար կաթիուր եօթանասնին

իյամսեանն դեկտեմբերին<sup>18</sup>.

Նույն ձևով, չափած մեկնությամբ Վ. Լանգլուան ներկայացնում է Միքայել Առաջինի փապանագրը.

<sup>17</sup>V. Langlois, Voyage à Sis, capitale de l'Arménie au moyen age, Paris, 1855, p. 19.

<sup>18</sup> Ղույն թեղում, էջ 24:

|           |          |
|-----------|----------|
| ՅԱՅՍ      | ԱՄՊԱԾՈՒ  |
| ԿԱՅԵԹԵ    | ԱԼՏՐՄԻ   |
| ՔԱՅԷԼՍԵԾՆ | ԸՆՏՐԵԼ   |
| ՍԱՎՍԵՄԱ   | ԳՈՅՆՎԵ   |
| ՐԱԲԵՐԵ    | ԱԼՑՈՒԱ   |
| ԿԱՆԵՎԵՐԱ  | ԿՈՉԵՎԱԾՎ |
| ՈՅՍՈՒԵՒ   | ԵՐԿՈՒ    |
| ԷԿԱՆԳԱ    | ՏԻՒԻ     |
| ՏՐՎԱՆ     | ԳԼ       |

Յայս գապանըս կայ եղեալ,  
Տէր մխրայէլ մեծն ընքրեալ,  
Սա վսեմազոյն վերաբեալ,  
Յուսական (?) է վերակոչեալ,  
Թվոյս հազար և երկու հարիոր,  
Է հանգստի ի դէր կանգեալ<sup>19</sup>:

Վիկոր Լանգլուան նկարագրում է նոր վանքը, որը կոչվում է Կիրակոսի վանք: Այս վանքերում նրա այցելության ժամանակ նստում էր կաթողիկոսը, վանքը կառուցել էր Ռուբինյանների արքայական իին պալատի նյութերով: Այն զբաղեցնում էր մեծ դարածք և շրջապատված էր ուժեղ պարսպով, որի ներսում անկանոն ձևով կային մի քանի շինություններ: Այնդեղ հասում էին ասդիմաններով և յուրաքանչյուր ամֆիթատրոնային մասում կար մի կառույց: Փայտաշեն ու բարձր մի հովանոց, որն իշխում էր քաղաքի վրա, կաթողիկոսի բնակարանն էր: Կար նաև մեկ ուրիշ ավելի բարձր հովանոց, որը հոգևորականների ժողովադիմություն էր: Այդպէս է կաթողիկոսն ընդունում էր օփարերկրացիններին: Վանքի ամենապարզաճ շինությունը եկեղեցին էր, որը պահպանվում էր հափուկ հոգածությամբ: Միաբանների երգելու փեղջ իին էր, իսկ շինության մյուս մասերը ժամանակակից շինություններ էին: Վանքն ավարտվել էր Կիրակոս կաթողիկոսի ջանքերով՝ 1810-ին: Եկեղեցին ուներ երեք բաժին, դրանցից մեկը նվիրված էր Գրիգոր Լուսավորչին, մեկը ուրիշը՝ Սուրբ Հջմիածնին: Զրի խողովակի բերաններն առյուծած էին՝ փեղադրված շինության անկյուններում և եկեղեցու գմբեթին, հիշեցնում էին Ռուբինյանների արքայական խորիրդանիշը: Աղջուում մի մենաստան էր, որով անցնում էին վանք մասնելու համար: Գլխավոր դռան վրա կար չափած արձանագրություն, որը հետքայալն է:

<sup>19</sup> Նույն դեղում, էջ 25:

Դուռն էմ մտից ի լոյս վերին,  
լուսոյ փառաց խառնարանին,  
զի ասդ բառնի մաքուր գինին,  
իինի գինումն անմահզարին,  
հասպեցելոյ սեամբ շնորկին,  
նոր կառուցելոյ բոլորովին,  
թէ ես թէ շնու արդեամբ վեհին,  
իինմնեցելոյ ՚ի բան վերին,  
դեր կիրակոս սրբազնին,  
և հոգելից հայրապետին:

՚ի թուին հայոց ոմծթ մայիս ժ օրն,  
սուրբ շինուածոյս վերակազնի,  
և այլ սենեակս ընդ պարսպի,  
մեծաւ ջանի կապարողի,  
ի հայոց գրոցն թուա կաղուի,  
այսքան ամօք աղխափողի,  
արիաջան փոխան որդիի:  
ընփիր Վեհիս Կիրակոսի,  
դէր եղիա եպիսկոպոսի,  
որէ դեղեա խարբեթացի,  
յիղո զանուծնէ արժանի<sup>20</sup>:

Երգչախմբի կանգնելու դեղում կաթողիկոսի նստելագեղն էր՝ սպիտակ մարմարից, պարրասպված հենց Սուում, Կոստանդնուպոլիսից եկած վարպետների ձեռքով: Թուրք զիսավորների ընչափրությունը չշարժելու համար խորանը զարդարված էր խիստ անշուր: Նույն ձևով խնամքով թաքնված էին եկեղեցու զանձերը, որոնք փակված էին մի փոքրիկ մագուռում, որ կոչվում էր Գրիգոր Լուսավորչի անունով: Այդ մագուռում հոգևորականները պահում էին զանազան մասունքներ, որոնք շապ էին և նրանց համար ունեին մեծ արժեք: Դրանք վերաբերվում էին Սուրբ Գրիգոր Լուսավորչին, Սուրբ Նիկողայոսին և այլ սրբերի ու զանազան սրբերի ու կարևոր մասունքն էր, որ պահպանվում էր վանքում: Այն դրված էր արծաթե դրվագազարդ ձեռքի մեջ, որը հիշեցնում էր բյուզանդական ոճ, վրան ուներ մի զմրուխտե քար, և երևում էին ոսկեզօծ լինելու հետքերը: Սուրբ Նիկողայոսի՝ Զմյուռնիայի հույն պափրիարի աջը նույնպես դրված էր արծաթե ձեռքի մեջ, քայց ա-Նույն դեղում, էջ 29: Մեջքը հապածների ուղղագրությունն ըստ Վ. Լանգլուայի է:

ռավել պարզ զարդարանդակներով։ Երեսուներեքերորդ պապ Սիլվեստրի ծեղը պահպանվում էր նույն ձևով. ինչպես նախորդների, իսկ ճգնավոր Բարսամի ծեղը դրված էր ձված արծաթյա փուսի մեջ։ Այդ մասունքները մնացել են Սահ պատրիարքարանում և անգամ հայոց եկեղեցու բաժանումից հետո, եթե կաթողիկոսական աթոռը 1441-ին փեղափոխվեց Մեծ Հայք՝ Էջմիածին, նրանք շարունակում էին մնալ դեղում։

Էջմիածինի կաթողիկոսը հավակնում էր Գրիգոր Լուսավորչի աջի գերը լինելու և ցույց էր փալիս մի մասունք, որը պահպում էր Շոռոմկայում։ Կիլիկյան կաթողիկոսների հին նստավայրում, մինչև նստավայրը Սիս փոխադրվելը։ Ըստ Վ. Լանգոլուայի հայագետ Մ. Բրոստեն Էջմիածին այցելած ժամանակ դեսել է այդ բազուկը, որը դրված էր ուսկեզօծ արծաթե ծեղի մեջ, սակայն այն չի համարվում վավերական։ Սահ գանձերի մեջ էր նաև Հակոբ կաթողիկոսի եմիփորոնը՝ պարուարված Հալեպում, որի երկու ծայրերում ուսկե փառերով գրված էր հեղիսյալը։

### I ԿԱԶՄ

ԵՅԱԻ : Ի

ԹՎԱՎԿ

ԱՆԻՍՄԵՐՈՒՄ : Ո

ԵՒ : Զ : Գ : ԿԱՔԻՆ : ԱԾ

ՈՂՈՐՄԵԱԱԱՎԵՔ : ԱԾ

ԽԱՏՈՂԻԱԱԱՅՈՐԻՆ : ԿԱԵՆ

### II ՆԿԱՐԵՅԱ

ԷՄԻՓՈՐՈ

ՆՍ : ԻՔԱՂ

ԱՔՆԻՆԱԱՊԻՎԱՅԵԼՈՒՄ

ԸՆ : ՏԵՐՅԱԿՈԲ : ՔԱՉՐԱԲ

ՈՒՆԱՊԵՏԻՆ : ՉՈՐՏՐ ԱԾՄԵՐ

ԹԱՐՈՎԿԱՅԵԼԵԼՏԱՅԵ : ԱՍԵՆ<sup>21</sup>

Այս եմիփորոնը մեփաքսից է, ասեղնագործված Դիսուս Քրիստոսի և բազմաթիվ սրբերի պատկերներով։ Ըստ ավանդության, այդ եմիփորոնը կապված է ավելի վաղ գործած նշանավոր հոգևորականների հետ։

<sup>21</sup> Նույն դեղում, էջ 33-34։

Եկեղեցու գանձերի մեջ էին նաև երկու Ավելարանները, որոնցից մեկը գրվել է Լևոն Դինգերորդի ժամանակ Սորովանքում՝ 1332 թվականին։ Երկրորդը, որը նույնպես մազաղաթից է, գրվել է Կոստանդնուպոլիս Չորրորդ Լուսինյանի ժամանակ՝ 1344-ին։ Այս վերջին Ավելարանը, ըստ հոգևորականների ասածի, հրաշագործ է, կարծում են, թե այն գրվել է Լևոն Երկրորդի ձեռքով<sup>22</sup>։ Եվ վերջապես ամենամեծ գանձը արծաթյա և ուսկեզօծ մյուռոնի ամանն է՝ պահպած խորանում, որը հափուկ նվեր է վանքին՝ Կոստանդնուպոլիսի Դուգ-օղլի ընկանիքից։

Վ. Լանգոլուան ներկայացնում է վանքի արխիվը։ Կաթողիկոսը գերագույն իշխանությունն է. ոչինչ վանքում չի կարող կարարվել առանց նրա գիտության։ Սակայն վանքի արխիվը գրեթե չի պահպանված, պատմական փաստաթղթերը կորած են, որոնք կարող էին հիանալի ձևով ներկայացնել անցյալի դեպքերը։ Կային ավելի ուշ ժամանակի նամակները՝ ուղղված Աղանայի, Այսթաբի, Տալեայի, Մարաշի և այլ վայրերի եպիսկոպոսներին, որոնք խառնիխուուն էին և չէին դասակարգված։ Մի հոգևորական, որը գրագրի դեր էր կարարում, դրանք հավաքում էր մի դեղում։ Արխիվի նյութերը Վ. Լանգոլուան դասակարգում է հետևյալ կերպ՝

1) Պապրիարքին ուղղված նամակներ, որպես պարասիստ վերջինիս նյութական օգնության խնդրանքի իր հավաքացյալներից՝ Կուսան-Դաղի բեկերի ընչափարությունը բավարարելու համար։

2) Տեքրեր, որոնք պարունակում էին այն մարդկանց անուններն ու գրված գումարների չափերը, որոնք օգնել էին վանքի կարիքներից հոգալու։

3) Նամակներ, որոնք շղափում էին անկարևոր հարցեր։

Սահ այս նոր արխիվը կարևոր էր հայոց լեզուն ուսումնասիրելու առումով։ Վ. Լանգոլուան ասում է, թե այդ նամակներով կարելի է ուսումնասիրել Կիլիկյայի այդ շրջանի հայերենը, որը բավականին գործեր է Մեծ Հայքի, Պարսկահայաստանի, Կոստանդնուպոլիսի և Զմյուռնիայի հայերենից։ Այդ լեզուն հարկապես հեփաքրքել է հայագետ Էղուարդ Դյուլորիեին։

Գրական, բանասիրական, մատենագիփական առումով արժեքավոր է Վ. Լանգոլուայի ուսումնասիրության այն հավածքը, որը ներկայացնում է Սահ գրադարանը։ Նա կազմել է Սահ գրադարանում պահվող ձեռագրերի ցուցակը։ Սահ գրադարանում կային և՝ փափագիր, և՝ ձեռագիր մարյաններ։ Կաթողիկոսը երկար ժամանակ երկմտել է

<sup>22</sup> Բավականին շատ հայկական ձեռագրեր, նույն կազմն ունենալով, գրվել են գրքերու դասականացները գարերեակում են այդ՝ ելեկով ձեռագրի հնությունից, բովանդակությունից, հիշագրակարաններից և բազում այլ հարկանիշներից - Ա. Դ.՝

ցոյց փալ հայագետին այդ գրադարանը, այն պատճառաբանությամբ, թե չի կարելի դուռը բացել փարին մեկ անգամից ավելի: Գրադարանի սենյակը փոքր էր և լուսավորվում էր միայն մի պարուիհանց: գրադարանն ուներ հարյուր քառասուն հինգ ձեռագիր և միայն երկու հարյուր հիսուն հագոր փառագիր գրքեր: Տպագիր գրքերը ծիսական-կրոնական էին և առանձին կարևորություն չունեին: Զեռագրերի մեծ մասը 16-րդ դարից հետո էին<sup>29</sup> և պատմական արժեք չէին ներկայացնում: Դին ձեռագրերը փեղափոխվել էին Կ.Պոլիս և Էջմիածին, որոշ արժեք ունեցող ձեռագրեր էլ վաճառվել էին օգտարերկացի ճանապարհորդներին: Վիկոր Լանգուան նշում է ձեռագրի համարը, պարունակությունը, դարը և ինչի վրա գրված լինելը: Բնականաբար մեծ թիվ են կազմում Ավելարանները, Աստվածաշունչ մագյանները, մի քանի փասնյակ Մաշփոցներն ու Քարոզգրքերը: Շատ են Ավելարանի, թերականության, «Երգ-երգոցի» մեկնությունները, կան և. Ընորհալու չափած գործերը, Ս. Խորենացու «Հայոց պատմության» մի օրինակը, Գրիգոր Տաթևացու, Հովհան Որովնեցու, Դավիթ Անհաղթի երկերից, Արիստոփելի փիլիսոփայության մեկնությունները, Թովմա Արքինացու քարոզները, Վարդան Մեծի գործերը, Սուրբ Հովհաննի Հայքնությունը, Եվագրի Սուրբ հայրերի պատմությունը, Սուրբաթեսի գործերից, Ներսես Լամբրոնացու Պատրիարքի մեկնությունը, Պողոս առաքյալի թղթերը, Ալեքսանդր Մակեդոնացու վարքը, Եկեղեցու կանոնգիրքը, փիլիսոփայության մեկնությունն ըստ Առաքել Սյունեցու, Գրիգոր Նյուացու գործերից, փարբեր պատմիչներից հարվածներ, Հայ կաթողիկոսների ցուցակը՝ Գրիգոր Լուսավորչից մինչև և. Ընորհալի, և այն, և այլն:

Գրքի վերջին՝ երրորդ գլուխ մերկայացված են Սահ պատրիարքարանի իրավական հնարավորությունները: Կիլիկիայի բոլոր Եկեղեցիները ենթակա էին Սահ կաթողիկոսին, վերջինս ենթակա էր թուրքական կառավարիչներին: Սահ կաթողիկոսի իրավունքները գրարձնվում էին Աղանայի, Մարաշի, Նալեպի և Կիպրոսի փաշայությունների վրա, որպես կային հիսուներեք Եկեղեցի և չորս վանք: Վ. Լանգուան աղյուսակի ծևով գրի 46-րդ էջում ներկայացնում է փաշայությունները, նրանցում եղած հայկական գյուղերը, ամեն գյուղի բնակչիների թիվը, Եկեղեցիների և վանքերի ցուցակը: Եկեղեցիները պահպան էին հավաքայանների նվիրագլությամբ, հաճախ հարուստ ընդունակները մուծում էին խոշոր գումարներ, այն դեպքում,

<sup>29</sup> Վ. Լանգուայի կազմած ցուցակի երրորդ ձեռագիրը միայն գրված մագաղաթի վրա, 15-րդ դարից է, այն Ավելարան է (լրեւ V. Langlois, Voyage à Sis, capitale de l'Arménie au moyen age, Paris, 1855, p. 38):

երբ աղքափները մի փարա էլ չէին փալիս: Սահ հոգևոր թեմը բաղկացած էր կաթողիկոսից, երկու արքեպիսկոպոսից, մի եպիսկոպոսից, փասներկու կրոնավորներից, որոնցից փասը կցված էին Զեյթուն և Տաճան քաղաքներին և սպասարկում էին նրանց: Կաթողիկոսի հագուստը ստվորաբար երկար զգեստն էր և լայն կապույտ գլխանոցը: Կրոնական արարողությունների ժամանակ նա բռնում էր արձաթե երկար գավազան, նրա խույրը արձաթե էր և հիշեցնում էր արքայական թագ: Հոգևորականները նույնպես սևազգեստ էին, իրենց գլխին ունեին սրածայր թասակներ, որոնց վրա գցված էր սև քող, որը փողփողում էր գլխի վրա: Վիկոր Լանգուայի այցելության ժամանակ Սահ Կաթողիկոսը եղել է Միքայել Երկրորդը, ծնվել է Սահ քաղաքում և 1832-ին փոխարինել է Եփրեմ Երկրորդին: Ասում են, թե նա արմագներով ծագում է Գրիգոր Լուսավորչի փոհմից: Հոգևորականներն ամեն ինչ անում էին, որ գոհացնեն թուրք կառավարիչներին՝ իրենց հոգևոր գործերն առաջ փանելու համար:

1861 թվականին Փարիզում լույս է բեմադրվել Վիկոր Լանգուայի մեկ այլ գիրքը “Voyage dans la Cilicie et dans les montagnes du Taurus” («Ճամփորդություն Կիլիկիայում և Տավրոսի լեռներում»), որում վերսպին ներկայացված են հայագետի ճամփորդական փառավորությունները:

Գրքի առաջարանում Վ. Լանգուան ներկայացնում է Փրանսիական կառավարության պետքական մովեցումը հեռավոր Երկրներն ու սուլմանային լինդրին: Ասիայի Երկրներն են ուղարկվում հետքաղողներ, որոնք իրենց ուսումնասիրություններում հնության հետքերով վերսպին կյանք են փախստ անցյալի պատմությանը: Ասիան եղել է մեծ իրադարձությունների թափերաբեմ, որպես կարգավորվել են հերոսական գործեր, և հնության ավերակները ճանապարհորդներին ընձեռում են բազմաթիվ խոսուն փաստեր: Եվրոպայի ժողովուրդները, որոնք կրում են անդիկ աշխարհի կնիքը, ուզում են լայնացնել ու խորացնել իրենց գիտելիքները աշխարհի վերաբերյալ: Այդ առաքելությամբ է, որ մեծարանակ ճանապարհորդներ շրջում են Արևելքի Երկրները, պեղում են խորհրդավոր հողը՝ վկան Ասիայի հզոր և մեծ կայսրությունների, որոնց հիշարժան իրադարձությունները քանի անգամ ծևափոխել են աշխարհի դեմքը: Արևելքի ամենաճոխ հարվածներից մեկն էր Փոքր Ասիան, որը միջին դարերում դարձավ Արևմուլքի այցելության վայրը: Ուխտավորներն ու առևտրականներն էին այցելու այսպիսի, որպես կաղնջական ժամանակներում հույսները հիմնել էին իրենց գաղութները, և որ Եվրոպայի փարբեր Երկրներից հարված բանակները գալիս էին Սուրբ Վայրերը ազարագրելու հա-

մար: Առաջինն այսպեղ եկան Արևմուտքի ժամանակագիրները, հետո գերմանացի և ֆրանսիացի ճանապարհորդները, որոնց հիշապակումների շնորհիվ ծանոթություն կարելի էր ունենալ Կիլիկիայի քաղաքների ու բնակավայրերի հետ: Այդ այցելությունների վապավորությունները լի են հետաքրքիր փաստերով, սակայն նրանք թերի են, որովհետեւ ճանապարհորդները հոգ չեն փարել այցելել Տավրոս լեռնաշղթայի հարվածները, նրանց հետաքրքել են միայն Միջերկրականի ծովեզերյա քաղաքները: Վ. Լանգուան վերստին հիշեցնում է, թե 1852 թվականի մայիսի 7-ի նախարարական որոշմամբ՝ ինքը գիտական հետազողական առաքելությամբ պետք է մեկներ Կիլիկիա, սկիզբներ երկրի քարտեզը, նկարագրեր գլխավոր հուշարձանները և գրառեր արձանագրությունները<sup>24</sup>: Նա բացադրում է, թե այդ ճամփորդությունը նախապատրաստել են հանրային կրթության նախարարությունը և Ակադեմիայի համապատասխան հանձնաժողովը, կոնկրետ հանձնարարականով, թե ինչ ուղղությամբ պետք է առաջ դարձներ իր աշխարհագրական և հնագիտական ուսումնասիրությունը: Իրենց հերթին նրան հանձնարարականներ են դպի Ասիական Միության և Կայսերական թանգարանների դեկավարությունը՝ մասնացույց անելով Լուվրի թանգարանի մեծարժեք ցուցանմուշները: Այնուհետեւ Վ. Լանգուան ներկայացնում է Կիլիկիա հասնելու պահից իր կափարած հետազա քայլերը: Ակզբում գնացել է Կիլիկիայի հնում հունարենակ մասը և գրառել բազում չիրապարակված արձանագրություններ և հայփնաբերել բազմաթիվ հին հունական քաղաքների ավերակները: Երկրորդ ուղևորությունը եղել է Տարսոսից հյուսիս արևմուտք, ուր այցելել է Աղանա, Սիս՝ Ռուբինյանների և Լուսինյանների մայրաքաղաքը և հայ կաթողիկոսի նստավայրը: Այսպեղից անցել թուրքերով, քրդերով, հայերով բնակեցված Տավրոս լեռնաշղթայի բնակավայրերը, հետո գնացել Անավարդ և հասել հնագույն Այասը: Ներու ընթացել է բոլորովին այլ ուղղությամբ և հավաքել մեծ քանակությամբ արձանագրություններ, որոնցից հարյուր ութառուներկու բնագիր հրապարակել է հապուկ գորով<sup>25</sup>:

Վ. Լանգոլուան Տարտոնում անցկացրել է 1852-1853 թվականների ձմեռը: Նա այնպիսի պեղումներ է կատարել և գերեզմաններից զբար է աղյուս թրծված արձաններ, խեցեղեն ամաններ, ապակե անոթներ և ուրիշ իրեր, որոնք պատկանում էին հունա-հռոմեական ժամանակ-

<sup>24</sup> Voyage dans la Cilicie et dans les montagnes du Taurus, exécuté pendant les années 1852-1853, Paris, 1861, p. IV:

<sup>25</sup> Stéphane V. Langlois, *Inscriptions grecque, romaines, byzantines et arméniennes de la Cilicie*, Paris, 1854.

ներին, և դրանք Ֆրանսիա բերելուց հետո ցուցադրված են Լուվրի թանգարանի անդիկ շրջանը ներկայացնող դահլիճներից մեկում: 1853-ի գարնանը Վ. Լանզլուան շարժվում է դեպի հյուսիս: Իր գիտարշավներից մեկի ժամանակ հետազոտել է Լամբրոնի բերդը՝ Ռուբինյաններին արյունակից ճյուղերից մեկի նսկավայրը, որի ավերակ ները երևում են իրենց բազում աշխարհականերով: Դինգերորդ գիտարշավի ժամանակ Վ. Լանզլուան գրել էր Սարդանապալի հուչարձանը Տարտոնի մուտքերքում և 115 մետր երկարությամբ մեկ այլ կառույց, որը Ասորեսպանի թագավորի սյունաշիրիմն էր, և որի առաջ Ալեքսանդր Մակեդոնացու բանակը զորահանդես է արել Դարենի և պարսիկների դեմ կովելուց առաջ: Վ. Լանզլուան այդ բոլորը մանրամասն նկարագրել է առանձին հոդվածներում, որոնք լույս են դրեսել “Revue Archéologique”-ում («Նազիփական հանդես») և “Archives des missions scientifiques”-ում («Գիտական առաքելությունների արխիվ»): Դայագելով Կիլիկիայում կարարած ուղևորությունների ժամանակ գրել է բազմաթիվ դրամներ, որոնք թողարկվել են քարբեր թագավորների կողմից, և դրանց մասին գրել է հարուկ ուսումնասիրություն՝ “Numismatique de l’Arménie au moyen âge”, որը լույս է դրեսել Փարիզում, 1855-ին:

Վիկոր Լանգլուայի կարծիքով, նրանք, ովքեր կափարել են նման ճամփորդություններ, կհասկանան, որ թիւ ուսումնասիրված և հեռավոր երկրների մասին գրելիս հնագեցը իր կողմից առանձնացնում է այն, ինչոր գպնում է կարևոր:

Վերջում հայագեպը իր ջերմ ցանկությունն է հայփնում, որ ուրիշ ճանապարհորդներ ու գիտնականներ շարունակեն իր գործը, որին ինքը նվիրել է մի ողջ պարի, և երջանիկ կլինի, եթե այս գիրքը, որին նա նվիրել է իր ջանքերը, արգասավոր և ներշնչող լինի ընթերցողների համար:

1855-ին Փարիզում լույս է դրեսել Վիկտոր Լանգլուայի դրամագի-  
վական կարևոր հետազողությունը՝ Նվիրված միջնադարյան Հայա-  
պանի դրամներին<sup>26</sup>: Նախքան այս հետազողության հրաբարակվելը  
Վ. Լանգլուան մի ուսումնասիրություն է ներկայացրել ֆրանսիական  
ակադեմիայի արձանագրությունների բաժնի 1851-ին հայքարարած  
մողույթին, որի մեջ խստել է Առողջինյան թագավորական գերդաստա-  
նի դրամների մասին (*"Essai sur les monnaies des rois arméniens"*, Paris,

<sup>26</sup> Stéu V. Langlois, Numismatique de l'Arménie au moyen age, Paris, 1855.

1850): Այդ աշխափությունը գրախոսվել է Շ. Լենորմանի կողմից և արժանացել է բարձր զնահագրականի: Վերջինիս կարծիքով Վ. Լանգլուան շոշափել է այդ աշխափության մեջ այնպիսի խնդիրներ, որոնք մինչ այդ ամփեսված էին Ֆրանսիայի դրամագեպների կողմից: Նա մեծ հոգագործությամբ հավաքել է բոլոր հայրնի փաստերը և ավելացրել որոշ նորերը: Այդ աշխափանքը արժանահարգ է և շարություն<sup>27</sup>:

Վ. Լանգլուան ասում է, թե Հայաստան կապարած այցելությունը հնարավորություն է տրամադրել հավաքել և համեմատել բազում հուշարձաններ և տալ հայկական դրամների առավել ամբողջական նկարագիրը: Նա ասում է, թե Կոստանդնուպոլսում եղած ժամանակի հնքը հանդիպել է Երիտրասարդ գիտնական Քերովք Ալիշանին<sup>28</sup>, որը կրօպ վերաբերմունք ուներ այն ամենի հանդեպ, ինչը վերաբերում էր Հայաստանի պատմությանը: Ալիշանն իր ձեռքի տակ ուներ Ռուբինյան գերդաստանի դրամների ամենահարուստ հավաքածուներից մեկը և սիրով դրամադրել է դրանք հայագեղին՝ թույլադրելով ուսումնասիրել և տպագրել առավել կարևորների մասին գիտական հետազոտություն: Տայ դրամների խնդրում Վ. Լանգլուան սփացել է նաև Վիեննայի Միջիարյան միարանության անդամ հայր Միջիյանի աջակցությունը, որը զբաղվում էր հայ դրամագիտությամբ, և ինքը քաղել է որոշ հագուստներ նրա նկարագրերից, որոնք հագուստ հետաքրքրություն ունեին: Այս աշխափության մեջ մտել են նաև այն հուշարձանները, որոնք ինքը գտել է Սոսում, Տարտունում, Կոռիկոսում, Մելլիկիայում, Լամբրոնում, Մսիսում, Անավարզում, Աղանայում և Այասում:

Նրա կարծիքով իր գիտարշավների ժամանակ հայքնաբերած դրամները, որոնց մեծ մասի վերաբերյալ դրամագիտ խոսք չկա, արևելքի դրամներով զբաղվող մասնագեպներին կը նետեն կարևոր փաստեր և կիսանեն նրանց՝ առավել ուշադրություն դարձնելու հայկական այն դրամների վրա, որոնք կադրնվեն Արևելքում: Վ. Լանգլուան թվարկում է այն դրամագեպների անունները, որոնք հետաքրքրություն են հայկական դրամներով աշխարհի դրամներ վայրերում՝ Կոստանդնուպոլսում, Սանկտ-Պետրուրում, Աղանայում, Ժնևում, Փարիզում և այլուր<sup>29</sup>: Նա հիշաբակում է այն պահոցները, որտեղ կան հայկական դրամներ՝ Ս. Ղազար կզոր հավաքածուն. Վիեննայի Միջ-

թարյանների, Պրուսիայի թագավորական թանգարանի, Բրիտանական թանգարանի, Էրմիտաժի. Սանկտ-Պետրուրով Ասիական ինստիտուտի և վերջապես Ֆրանսիայի կայսերական գրադարանի հավաքածուները: Նա ասում է, թե իր ժողովածուն ներկայացնում է նկարագրերը Աղվանքի հայ թագավորների և Ռուբինյան ու Լուսինյան գերդաստանների դրամների: Ինքը լուրջուն է պահպանել հայ Բագրագունիների դրամների վերաբերյալ, չի խոսել նաև Կարսի հայ թագավորների և Վասպուրականի Արծրունիների դրամների վերաբերյալ, որովհետև ոչ մի գեղ չի գտել նրանց դրամներից և կարծում է, թե այդ գերդաստանները գուցե չեն հագել իրենց դրամները: Իր առաջարքանի վերջում Վիկտոր Լանգլուան հագուկ շնորհակալություն է հայքնում իր բարեկամ հայագեկ Էդուարդ Դյուլորիեին, որն իրեն վկել է կարևոր խորհուրդներ, աշակցել ու խրախուսել է և մաքնացույց է արել հայ ժամանակագիրների ընձեռած փաստերը: Աշխաբանքը գրելիս ի նկատի է ունեցել նաև Ս. Զամյանցի, Սեն-Մարտենի աշխափությունները:

\* \* \*

1859 թվականին լույս է գետել Վիկտոր Լանգլուայի մի այլ հետազոտություն՝ նվիրված հայկական դրամներին<sup>30</sup>: Այս աշխափությունն ունի շարունակական հայագուստ և առաջին հայագուստ մասին վերաբերող բազմաթիվ խնդիրներ: Ներածության հեղինակը է Դյուլորիեն է: Այն սկսվում է հայ ազգի կազմավորումից և հայ պետականության ծագումից: Է. Դյուլորիեն համոզված է, թե Հայաստանի վաղնջական պարմությունը գտնվում է թանձր մթության մեջ, Տայկ նահապետին համարում է առաջին հայկական պետականության հիմնադիրը, որից և սերել են առաջին թագավորական գերդաստանի գլխավորները: Երկրորդ թագավորական գերդաստանը սերում է Պարսկաստանի Արշակունիներից: Չնայած հայերը բազմից նվաճվել են Կառեսպանի, Պարսկաստանի, Շոռնի, ավելի ուշ հույսների և արաբների կողմից, սակայն դեռ 19-րդ դարի կեսերին հայերի մի մասը շարունակում է ապրել իրենց պատենական հողի վրա՝ երբեք չմոռանալով իր պարմական անցյալն ու ազգությունը: Տայերս ունեցել են մի յուրօրինակ ներքին կազմակերպվածություն, որը նրանց ներշնչել է ապրել և գոյագում երկար: Նա Հայա-

<sup>27</sup> Նույն փեղում, էջ VII-VIII:

<sup>28</sup> Անոնց Ալիշանի նախկին անունը եղել է Քերովք Ալիշանյան, նրա հայրը դրամագեկ և ուներ դրամների հարուստ հավաքածու:

<sup>29</sup> Տե՛ս V. Langlois, Numismatique de l'Arménie au moyen age, Paris, 1855, p. IX.

<sup>30</sup> V. Langlois, Numismatique générale de l'Arménie, տե՛ս Bibliothèque historique Arménienne ou Choix des principaux historiens Arméniens traduits en Fransais et accompagnés de notes historiques et géographique, par E. Dulaurier, Paris, Londres, 1859.

պանի պատմությունը բաժանում է երեք ժամանակահարվածների միջև։ Փաստեր կան, ըստ որոնց երկրորդ թագավորական գերդաստանի ժամանակ Հայաստանը ծաղկել է։ Սակայն երկու հզոր հարևանները՝ Պարսկաստանը և Բյուզանդիան, նրան շարունակ ճնշել են և դարձել Հայաստանի տարածքը ռազմական բախումների թափերաբեմ։ Հայաստանի համար շաբ դժվար է եղել ընդունել երկու հարևաններից որևէ մեկին, կամ պահպանել չեզոք դիրքորոշում, որա պատճառով էլ երկիրը ճակարտով կախված է եղել երկու հզոր կայսրությունների քմահանույթներից։

Ներածության մեջ մանրամասն ներկայացվում է Հայաստանի կրոնական պատմությունը։ Հայերը ինդեվրոպացիներ են և սկզբում պաշտել են բազում աստվածների։ Ներու Տրդափի ժամանակ նրանք անցել են միհաստվածությանը։ Խոսում է Հայաստանի հեթանոս աստվածների և նրանց նշանակության մասին՝ զուգահեռներ անցկացնելով հոյս, հոռոմեական և պարսկական աստվածների հետ։ Ներածության մեջ ներկայացվում է զրադաշտական կրոնի նախասկիզբ Զրվանը, որի անունը թարգմանվում է «անվերջանալի ժամանակ» («le Temps sans bornes»)<sup>31</sup>։

Հայկական Արամագդը համապատասխանում է պարսիկների Որմիզդին և հոյսների Զևսին, եղել է երկնքի և երկրի արարիչը, ենթով Ս. Խորենացու «Հայոց պատմության» մեջ եղած մի փաստից, ենթադրում է, թե Արամագդն ունեցել է չորս տարբեր անուններ և ձևեր։ Բերվում են Արամագդի մեկնություններն ըստ առանձին հայ մարդենագիրների։ Օրինակ, Հովհան Օձնեցին, պավլիկյանների դեմ ուղղված թղթում գրում է, թե Արամագդին բարելացիները կոչում են Բել, հոյսները՝ Զևս, պարսիկները՝ Որմիզդ, հայերն՝ Արամագդ<sup>32</sup>։ Այս Ա-

<sup>31</sup> Նույն փեղում, էջ IV: Աշոր Աքրահամյանը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխարհության 233 ծանոթագրության մեջ գրում է. «Զրվան հապուկ անունը իրանակ անգում ունի. պահ. Զարվան, պարսկ. Zarvān, որը գեներելում իրըն հասարակ անուն՝ Zarvan, նշանակել է «ժամանակ», ասթծո Վերագրվելով, դարձել է հարուկ անուն (սփուրաքանությունը Հյութշմանին է, հմնք. Դ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան, հ. 2-րդ, էջ 219)։ Հայտնի է, թե Եզնիկն ինչ աղբյուրի հիման վրա է եղած «քախրկան փառք» իմաստները։ Տես Եզնիկ Կողբացու, Եղծ աղանդոց, Թարգմանականը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աքրահամյանի, Երևան, 1970, էջ 320։ Պետք է նկարել, որ «Ավեստայի» ամբողջական գիրքական թագրում խապատ բացակայում է Զրվան անունը - Ա. Դ. (փեն Avesta, Livre sacre du zoroastrisme, Paris, 1881)։ Այս առումով Եղիշեի, Եզնիկ Կողբացու, Ս. Խորենացու գործերը հապուկ արժեք ունեն միջազգային պահպանական համար։

<sup>32</sup> Bibliothèque historique Arménienne ou Choix des principaux historiens Arméniens traduits en Français et accompagnés de notes historiques et géographique, par E. Dulaurier, Paris, Londres, 1859, p. IV.

րամազդը Դարանադյաց գավառի Անի քաղաքում ունեցել է փաճար, որը չորրորդ դարում կործանել է Գրիգոր Լուսավորիչը։ Արամագդն արձաններ է ունեցել Մծրինում և Եղեսչայում։ Մյուս հեթանոսական աստվածներից է Միհրը կամ Միհրան, որի պաշտամունքը կապ ունի զրադաշտականության հետ։ Միհրը դաճար է ունեցել Դերջան գավառի Բագառի ավանում։ Գրիգոր Լուսավորիչն այդ դաճարը նույնապես քանուում է և նրանում եղած գանձերը բաժանում աղքափներին։ Իսկ Վահագնի պաշտամունքը, ըստ Ս. Խորենացու, նրան նմանեցնում է Շերակեսին։ Վահագնի ծնունդը կապված է փիեզերական ուժերի հետ, այն պարկերված է մի երգում, որը լի է Արևելքի խորհրդանշիշերով։ Այս հապվածում, ըստ Խորենացու, բերվում է Վահագնի ծնունդի ֆրանսերեն թարգմանությունը։

<sup>33</sup> Հայերի Անահիտ պարվածութիւն համապատասխանում է հոյսների Արդիմիսին, լատինացիների Դիանային, քաղեցացիների Միլիպային կամ Ասթարթեին։ Հայերը կանգնեցրել են Անահիտի ոսկե արձանը և դրա պարճառով նրան կոչել են Ոսկիամայր, Ոսկիածին, որը ոսկի է բերում։ Նրա արձանը կանգնեցված էր Երիզայում։ Անահիտն ամենից շաբ դաճարներ ուներ Հայաստանում։ Ները Անահիտին կոչում էին նաև այլ կերպ՝ թարգմանելով նրա անունը Վեներա։ Անահիտի պաշտամունքը հասել է մինչև Հնդկաստան։ Անահիտը խիստ պաշտելի է եղել նաև Պարսկաստանում։ Այս Անահիտը Հնդկաստանում կոչվել է Նանա, Անահիտին նույնացրել են նաև հոյսների Աֆրոդիտի հետ։ Սրբաբոն նունիսկ կարծում է, թե Անահիտ պարվածութիւն ունի պարսկական ծագում<sup>33</sup>։

Հայերի մեջ հապուկ ձևով պաշտված է նաև Աստուկը, որը դաճար ունի Աշփիշապում՝ Տարոնում։ Նրան Նավասարդի գոտին վարդեր են ընծայում և աղավնիներ։ Այդ գոտնն անցել է քրիստոնեությանը և կոչվում է Պայծառակերպության գոտն։ Այսպես Վարդափառի գոտնը կոչվում է Աղավնիների գոտն («la fête des Colombes»)<sup>34</sup>։ Դին պաշտամունքային պանթեոնում դրված են նաև արակեզները («յարալեզք»), որոնք, ըստ Խորենացու Արայի և Շամիրամի մասին պատմող առասպելի, պետք է լիզեին հայոց արքա Արայի վերթերը և նրան վե-

<sup>34</sup> Նույն փեղում, էջ IX: Ազարանելոյնի մոտ այս փառք հետևյան է. «Մանաւանդ այս մեծի Անահիտ փիկնօք, որ է փառք ազգին մերոյ և կեցուցիչ, զոր և թագաւոր ամենայն պարունակ, մասնաւոր թագաւոր Յունաց, որ է մայր ամենայն զգասպութեանց, բարերար ամենայն մարդկան թնութեան, և ծնունդ մեծին արին Արամագդայ» (փեն Ազարանելոյն, Պատմություն Հայոց, Երևան, 1983, էջ 40)։

<sup>35</sup> Bibliothèque historique Arménienne ou Choix des principaux historiens Arméniens traduits en Français et accompagnés de notes historiques et géographique, par E. Dulaurier, Paris, Londres, 1859, p. IX.

րակենդանացնեին: Սակայն այդ հրաշքը գեղի չի ունենում: Ըստ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի», արալեզները ներկայացվում են որպես շնից առաջացած աստվածություն<sup>35</sup>: Դիշափակվում է Փ. Բուզանդի պատմության այն հարվածը, որում սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին փորձում են վերակենդանացնել արալեզների օգնությամբ: Ներածության մեջ ներկայացված է նաև սոսի ծառի պաշտամունքը, որի միջոցով քրմերը զանազան գուշակություններ էին անում: Մեծ ափսոսանքով է խոսում հեթանոսական շրջանի հայ գրական հուշարձանների կորսորի մասին: Նեթանոսական կրոնի հավաքալիքները քրիստոնեական շրջանի սկզբում առավել պահպանվել էին Գողյան գավառում, որ Մեսրոպ Մաշտոցը մեկնեց քարոզելու քրիստոնեությունը: Այս առումով հիշափակվում են Մովսես Խորենացու և Սպեֆանոս Օրբելյանի պատմությունները (Մովսես Խորենացի, Հայոց պատմությին, գիրք II, գլ. 48, գիրք III, գլ. 47-50)<sup>36</sup>: Ներածությունը ներկայացնում է նոր կրոնի՝ քրիստոնեության գարածումը Հայաստանում՝ սկսած առաջին դարից՝ Աբգար թագավորի ժամանակահարվածից: Այս հարվածում կրկնվում է Նոյ նահապետի ասպածաշնային լեզենդը՝ Նոր կրոնի՝ քրիստոնեության գարածումը կամ Մասիսի գլխին կայանելը: Դիշափակվում է նաև, որ ջրհեղեղի պատմությունը կաշաք ժողովուրդների մոտ՝ Շինասպանում, Նողկասպանում. Պարսկասպանում, Հունասպանում: Ասվում է, թե հայերը չեն ծագել հրեական նահապետներից, հայոց հին գրույցները և լեզենդներն ունեն ոչ թե ասպածաշնային ծագում, այլ գալիս են գլյայ ժողովրդի պարմական անցյալից և պահպանաված են բանահյուսական երկերում ու Մար Աբաս Կարինայի պատմության մեջ:

Անդրադարձ կա հայ գրին ու գրականությանը: Կարծիք է հայրն վում, թե մինչև հունական, ասորական և պահլավական գրի օգբագործումը հայերն ունեցել են սեպագիր, որով գրել են իրենց լեզվով: Դա եղել է նրանց վաղնջական գիրը, որը փորագրվել է ժայռերի վրա, ինչպես, օրինակ, Վանում: Սեպագրեր օգբագործել են չորս ժողովուրդներ, դրանց թվում սկյութները, խուժիսպանցիները, հայերը, ասորաքաղեացիները, սակայն հայրնի չէ, թե նրանցից ով է առաջի-

<sup>35</sup> «Այսպէս են՝ ծովացություրը, որ կովից սերված են համարում, պայջ՝ մարդկանցից և արալեզը՝ շնից» (լրեն Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 77):

<sup>36</sup> Սուեփանոս Օրբելյանի պատմության ժեղարվությունը է. «Թե ինչպէս սուրբ Վարդապետ Մեսրոպը գալիս է Սյունիք և Գողյան, շրջում գավառները և զանազան լեզերում թարևսկած կոռապաշտությունը վերացնում է Կարինակ իշխանի ու Շաբիթայի օգնությամբ (լրեն Սպեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 97):

Նը հարվագործել սեպագիրը, նրանք այն օգբագործել են յուրաքանչյուրն իր լեզվով<sup>37</sup>: Քաղաքական կապերն Ասիայի հարևան երկրների, ապա Ասորեսպանի ու Հունասպանի հետ իմաստ դարձան, որ հայերն օգբվեն պահլավների, ասորիների և հույների գրերից: Ենթադրվում է, որ բազմաթիվ գրողներ ազաքորեն օգբվում էին այդ լեզուներից՝ իրենց երկերը շարադրելիս: Հայրնի է, որ Տիգրան Մեծի որդի Արփավազը պատմական գործեր և ողբերգություններ եր գրում հունարենով: Նախաքրիստոնեական շրջանի բոլոր հայ թագավորների դրամներն իրենց վրա ունեն հունական գիրը: Ասորիները մեծ չափերով վերաբնակվել են Հայասպանում՝ իրենց հետ բերելով գիրն ու լեզուն: Նրանք եղել են քրիստոնյա առաջին քարոզիչներից և ուսուցիչներից ու Ավելարանի վարդապետությունը բարածել են Հայասպանում, իմանել են վանքեր, ունեցել են եպիսկոպոսական ասքիճաններ: Հայասպանի հարավարևելյան մասում, Տիգրիսին և Եփրափին հարող շրջանները ենթարկվել են Անգիոքի ասորի պարիհարքին և քահանաներն այդ վայրերում քրիստոնեական կրոնը քարոզել են ասորերեն: Կորյունն ու Ղազար Փարպեցին իրենց մարդաններում ասում են, թե նախքան Ասպածաշնչի թարգմանվելը հայերեն, հոգևորականությունն օգբագործում է ասորերեն Ասպածաշունը: Ենքո ներկայացվում է Մեսրոպ Մաշտոցի կողմից ազգային լեզվի այբուբենի սպեկուլումը: Եվ իր՝ Ասպած մակնացույց է արել Մաշտոցին հայ գրերը, ինչպես Մինա լեռան վրա Մովսես մարգարեին է հանձնել պատվիրանները: Սակայն կա փաստ, ըստ որի հայերը գառներ են ունեցել մինչև Մաշտոցը: Մերվում է հովազի վզի վրա եղած մանյակի արձանագրությունը, որին բռնել էին Պամֆիլիայի լեռներում. «Արշակ արքայից Նյուիսիայի Ասպծուն ("Rex Arsacés deo Nysœo")»<sup>38</sup>: Զետիքը է ուրեմն զարմանալ, որ հեթանոսական շրջանի հայ արքաների դրամներն ունեն հունարեն գառներ և նման չեն Ռուբիկյանների և Աղվանիքի հայ Գորիկյանների Մեսրոպապառ դրամներին: Պետք է կարծել, որ պաշտոնական հարաբերություններում Հայաստանում ազգային լեզվին զուգահեռ օգբագործում էին հունարեն գրերը՝ մինչև Մաշտոցի այբուբենի հայտնագրությունը: Այսուհետու խոր է գնում հայկական դրամների վերաբերյալ:

Հայկական դրամները հնագույն շրջանում կարելի է բաժանել երկու դասի՝ նախ դրամների շարք, որ հայել են Աքեմենյանների սար-

<sup>37</sup> Bibliothèque historique Arménienne ou Choix des principaux historiens Arméniens traduits en Français et accompagnés des notes historiques et géographique, par E. Dularier, Paris, Londres, 1859, p XV.

<sup>38</sup> Նույն գրելում, էջ XVI.

րապները՝ Հայաստանի կառավարիչները, այնուհետև փոքր թագավորները Ալեքսանդր Մակեղոնացու կայսրության բաժան-բաժան լինելուց հետո: Այնուհետև հայ Արշակունիները: Նազույն դրամները պատկանում են Հայկան գերդաստանի վերջին ժամանակներին: Որոշ դրամներ պատկանում են Փոքր Հայքին, և նրանց մասին կցկուր փեղեկություններ կան օգտագործելու մոտ<sup>39</sup>: Շատ արժեքավոր են Արշակունիների շրջանի դրամները, որոնց գահակալության մասին բազմաթիվ փաստեր կան ոչ միայն հայ պատմիչների, այլև հույս ու հռոմեացի: Դրամները մի նոր լույս են սփռում այդ թագավորների գործունեության վրա: Դրամներ են հասել Տիգրան Մեծից և նրա հաջորդներից՝ Արքավագդից, Տիգրան Երրորդից և Էրաբոյից, Արքաքսեսից: Անհրաժեշտ է նաև հագուկ կանգ առնել թագերի վրա, որոնք հայ թագավորները դնում են իրենց գլխին:

\* \* \*

Վիկոր Լանգլուայի դրամագիրական հեքազուրությունների մեջ մի առանձին տեղ ունի "Une monnaie de Gorig" խորագրով նամակը, որն ուղղված է Ֆրանսիայի թագավորական դրամագիրական Միության նախագահ Ռ. Շալոնին, 1866 թվականի փետրվարի 14-ին<sup>40</sup>:

Վ. Լանգլուան հագուկ նշում է, թե իր հոդվածը վերաբերում է հազվագյուղ մի դրամի, որի նկարը ինքը սփացել է Թիֆլիսից: Այդ դրամի մասին գրել է Ս. Բրուսեն իր "Monographie des monnaies arméniennes" աշխաբության մեջ: Դրամը պղնձից է և պատկանում է Աղվանիքի հայ Բագրատունի թագավոր Գորիկին: Գեներալ Բարբուր-մեն իրեն ուղարկել է Բրուսեի հրաժարակած նկարը, դրամի բնօրինակը գրնվում է Մոսկվայում՝ իշխան Ալեք. Գագարինի մոտ: Այդ դրամը հիմք է փախս հասկաբորեն խոտելու Աղվանիքի հայ Բագրատունի թագավորների մասին: Դրամի մի երեսին Դիտու Քրիստոն նկարն է, իսկ մյուսին՝ Մեսրոպադառ հայերենով գրված է. «Տէր օգնէ Կորիկէ և կորապալատին»: Այս դրամական հուշարձանը փախս է շար հարցերի պարախանաներ: Այնուհետև Վ. Լանգլուան խոտում է ուսու գիտնական-ճանապարհորդ Աւաստիանովի դրամագիրական հեքազուրությունների մասին, իսկ վերջում խոր ափսոսանք է հայություն արարական դրամների գիրակ ու իր բարեկամ Սորեի մահվան

<sup>39</sup> Նույն գեղում, էջ XVIII.

<sup>40</sup> V. Langlois, Une monnaie de Gorig. Dynaste Bagratide de l'Arménie, Lettre de M. Victor Langlois à M. R. Chalon, président de la Société royal le de numismatique, Paris, 14 fevrier, 1866.

համար և հույս հայփնում, թե նրա արաբական դրամներին վերաբերող հոդվածները կշարունակվեն փագործել հանդեսում:

\* \* \*

Վիկոր Լանգլուայի հայագիրական ժառանգության մեջ մի առանձին տեղ են գրավում հայ դիվանագիրության պատմությանը նվիրված հեքազուրությունները: Դրանց մեջ երեսելի է հարկապես "Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royal de Roupeniens" աշխաբությունը, որը լույս է բերել 1863-ին Վենետիկում («Գանձարան Հայաստանի հրովարտակների կամ Տիշագրակարան Ռուբենյան թագավորական դիվագիրության»): Աշխաբության աջակիցը եղել է Գևորգ Հյուրմյուզյանը, որին էլ ընծայվել է այս ուսումնասիրությունը: Աշխաբության նախարանում հայագեցին ասում է, թե իր ուսումնասիրությունը բասը բարիների բրնձան աշխաբանքի արդյունք է, որի նյութերը հավաքել է Կիլիկիա կապարած գիրական այցելության ժամանակ, քաղել է դրանք նաև XIII-XIV դարերի խաչակրաց արշավանքներից մնացած փաստաթղթերից: Դրապարակված նյութերը ծեռք են բերվել հիմնականում Արևմտյան Եվրոպայի արևիկներից՝ Վենետիկից, Ծննովայից, Թուրինից, Փարիզից, Մադրիդից և Բեռլինից:

Աշխաբությունը բաժանվում է երկու մասի՝ 1) պատմական ներածություն, որը կիշեցված է բնագրերի ճիշք ընկալումը, 2) ժողովածու պատմական փաստաթղթերի. որոնք հասել են Սահ թագավորներից: Վերջում նա իր երախագիրությունն է հայփնում Ս. Ղազար կղզու Միհթարյան միաբանության հայրերին, որոնք ծեռնարկեցին այս գրքի հրաժարակությունը և հիշեցնում է, թե Միհթարյանների հոչակավոր ակադեմիայի գուրուս են եկել այնպիսի նշանակոր գրքեր, ինչպիսիք են՝ Եվսեբիոսի ժամանակագրությունը, Փիլոնի և հայ դասականների գործերը: Այս հեքազուրության 101 մեծադիր էջերը գրադացնում է ընդարձակ ներածությունը: Թագավորական դիվանների գոյության մասին խոտել է դեռևս Սովուս Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ: Բոլոր թագավորությունների ժամանակ՝ Արշակունիների, Բագրատունիների, Ռուբենյանների, հայերն ունեցել են թագավորական դիվաններ և սովորություն են ունեցել եկեղեցիների, սուրբ շինությունների վրա փորագրել կարևոր պատմական փաստերը: Այդ արձանագրություններն ունեցել են կարևոր նշանակություն, նրանք պահպանվել են պատերի վրա՝ չնայած ավերիչ հարձակումների: Հարձակումների ժամանակ այրել են ու ոչնչացրել պալատներում

պահպող գրվածքները, սակայն արձանագրությունները մնացել են: Արձանագրությունները, որոնց օգնությամբ կարելի է վերականգնել Բագրագունիների ժամանակաշրջանի եկեղեցական հրովարդակները, բավականին շատ են: Արձանագրությունները պարունակում են կարևոր փաստեր, թիվ խոսքերով: Նրանք ունեն կայուն բովանդակություն՝ կառուցողի կամ նվիրագրուի անունը, նրա կապերը, եկեղեցու անունը, կառուցման կամ նվիրագրության թվականը: Այդ արձանագրությունների ոճը հիշեցնում է հրովարդակների ոճը: Ակադեմիկոս Մ. Քրոստեն իր աշխագրություններում, օրինակ, գրագրել է նման արձանագրությունների բազմաթիվ օրինակներ: Նա գրագրել է Հովհաննավանքի կոնդակները: Առանձին ենթախորագրերի գակ Վ. Լանգլուան խոսում է Ռուբինյանների հրովարդակների մասին, որոնք եղել են, սակայն այրվել են, երբ Եգիպտոսի մահմեդականներն ավերում էին Կիլիկիան: Դրանց մի մասը մնացել է Եվրոպայի պետրական արխիվներում, և միակ վկայություններն են, որոնցով վերականգնում են Հայաստանի քաղաքացիական արխիվները՝ Ռուբինյանների տիրապետության շրջանում: Պահպանված են երկու կարևոր հրովարդակներ՝ մեկը վերաբերում է 1201 թվականին և կապվում է Լևոն Երկրորդի հետ, որը ճենովայի վաճառականներին գրված արգունությունների մասին է խոսում, և երկրորդ սպենդվել է 1307-ին և ուղղված է Վենետիկի վաճառականներին: Վ. Լանգլուան ասում է, թե Սսի թագավորական դիվանը վերականգնելու համար ինքը որքան երկար է շրջել Եվրոպայում՝ բացի Վենետիկից, ճենովայից ու Թուրինից, այցելել է Նեապոլ, Մալթա, Ֆլորենցիա, Պիզա, Բենոլին քաղաքները: Նա թվում է մի շարք իշխաներն գրեթե, որոնք կարևոր նյութ են մարդակարարել իրեն, իիշխանակում է նաև Մխիթարյանների «Բազմավեպը»: Նրա կարծիքը հայերը մինչև Կոստանդնուպոլիսի անկումը՝ 1453 թվականը, սերդ կապերի մեջ էին Դուռաստանի և ապա Բյուզանդիայի հետ: Պակմիջներից հայտնի է, որ եղել է նամակագրություն XIII-XIV դարերում Ռուբինյանների և Բյուզանդիայի միջև: Ամենից շատ փաստեր՝ հայ պետրական գրագրությանը վերաբերող, պահպանվել են Իբրահիմյում՝ հայրենական գրադարանում, Վենետիկիում, Նեապոլում, Մալթայում: Կան ճենովայի թագավորական դիվանում փաստաթղթեր, որոնք վկայում են Լևոն Երկրորդի մշակած մաքսային և վաճառականական կանոնների մասին՝ ճենովացիների համար: Տասներեքերորդ դարում ամուր կապեր են եղել Սսի թագավորական գրադարանում, ուներ մի շատ կարևոր ձեռագիր հայ-վենետիկյան առևտուրամասնությունը:

Սուրբ Մարկոսի գրադարանը, որը գրնվում էր դուրսերի պալատում, ուներ մի շատ կարևոր ձեռագիր հայ-վենետիկյան առևտուրա-

կան կապերի վերաբերյալ: Այդ ձեռագիրը բնագրի պատճենն է և գրնվում է Վենետիկիկում:

Սիցիլիայի և Լեապոլի հետ Կիլիկիայի հայկական թագավորության կապերը շատ սերդ չեն եղել, դրանք որոշ զարգացում են սպացել երիտրասարդ Լևոն Դինգերորդի ժամանակ, որն ամուսնացել է Սիցիլիայի մի արքայադիմում հետո: Բեղինում՝ թագավորական արխիվում է գրնվում Տևունյան օրինի մի հրովարդակը, որի մեջ խոսվում է հայ արքունիքի հետ եղած կապերի մասին: Փարիզի կայսերական դիվանում փաստեր կան Հայաստանի վերջին թագավորը Լևոն Վեցերորդ Լուսինյանի մասին, որը վախճանվեց 1393-ին Փարիզի Սելյարին վանրում: Բարեբախտաբար անսպասելի Մոնպելիեի արխիվներում գրնվեցին երկու հրովարդակներ՝ գրված 14-րդ դարի առաջին կեսին՝ թագավորներ Օշինի և Լևոն Դինգերորդի կողմից: Լևոնում կապարած հետպատկությունները Վ. Լանգլուային որուել կարևոր արդյունքի չեն հասցել: Բարելուսայի, Մադրիդի և Սեգովիայի դիվաններում գրնվել է միայն մի փաստաթուղթ, որը պարմում է Լևոն Վեցերորդի Եգիպտոսում գերված լինելու և նրա՝ Խապանիայում գրնվելու մասին, երբ նա ազար արձակվեց Կահիրեի սուլթանի միջոցով:

Վ. Լանգլուան առանձնահապուկ ծանրանում է Ռուբինյանների պալատական հրովարդակների դարձվածների, գրելառների, կայուն բանաձևների վրա: Լևոն Երկրորդի ժամանակ որոշակի փոխվում է հայերենի պետրական լեզվի գրելառը: Նրա մեջ ներթափանցում են օպարամուտ բառեր, ֆրանկների ազդեցությունը խաչակրաց արշավանքների շնորհիվ դառնում է ակնհայտ: Սպենդվում է մի լեզու, որի մեջ մեծ փեղ են գրավում Լևոնի Երկրների հապուկ գրեմինները: Կիլիկյան հայ թագավորները եկորական արթաների նման իրենց հրովարդակներում օգտագործում էին սպորագրություն և կնիք: Լևոն Երկրորդի գրություններում օգտագործվում էր հետվայր բանաձևները: «և վասն առաւել հասպատութեան ծեռնագրեցար մերով սովորական բարձր ծեռնագրով»<sup>41</sup>: Կամ Լևոն Դինգերորդը, հերկնելով իր նախորդների ոճին, գրում էր. «և յաղաս առաւել հասպատութեան ծեռնագրեցար մերով թագավորական բարձր ծեռնագրաւաս»: Կիլիկիայի հայ թագավորներն իրենց անվան դիմաց դնում էին խաչ. «† Նեթում թագավառը Հայոց», «† Լևոն թագավոր ամենայն Հայոց»: Լևոն թագավորի դրամի երեսի կողմի վրա գրված է՝ «† Լեհուն թգր ԱՄՆԵԱՅՆ ՀԱՅՈՅ», թագավորը երևում է դեմքով, թագը զիսին, հազար յական զարդերը, նսկած զահի վրա, որը պահպում է երկու առյուծնե-

<sup>41</sup> V. Langlois, Le Trésor des chartes d'Arménie ou cartulaire de chancellerie royal des Roupeniens, Venise, 1863, p. 16.

րի միջոցով, աջ ձեռքին բռնած է խաչակիր գունդը, ձախին՝ շուշան ծաղիկը: Դրամի հետևի կողմում գրված է՝ «† ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ», նկարված է առյուծ, ձախից քայլող՝ բռնած կրկնակի խաչ, դիմացը՝ մի բումբ:

Լևոն Դինգերորդը Սիցիլիա գրած հրովարդակի վերջում ավելացնում է. «և կնքեցաք արքունական ոսկի Վուլովս»:

Վ. Լանգուան ներկայացնում է հին Հայաստանի քաղաքական կարգը՝ սկսած Հայկ նահապետից, շարունակում է Ասորեստանի, Պարսկաստանի Աքեմենյանների հետ ունեցած հարաբերությունները, Սասանյանների և հայ Արշակունինների հարաբերությունները, երկրի ֆեոդալական բնույթը, նախարարների և թագավորների հարաբերությունները: Քրիստոնեության ընդունումից հետո պետական կարգը նորոգվում է քափ քրիստոնեական կրոնի: Այս հին կարգը նոր փոփոխությունների է ենթարկվում Կիլիկյան թագավորների ժամանակ: Լևոն Երկրորդն իր պետական կարգի մեջ մտցնում է արևմուտքի ձևերը: Հայ թագավորն իր թագը սպանում էր Շռոմի պապից և Գերմանիայի միապետից, փաստորեն կրկնակի վասար էր: Լևոն Երկրորդը ձևավորում է իր երկրի դասերի իրավունքները: Ազնվականները՝ բարոնները, ունեին իրենց հողադրածքներն ու դոյակները: Նրանք ենթարկվում էին արքային: Հոգևորականները նույնպես ունեին իրենց գործածքային իրավունքները: Հասարակության առաջին դասն էին համարվում թագավորը, ազնվականությունը, բարձրաստիճան հոգևորականությունը, երկրորդ դասին էին պատկանում ցածրաստիճան ազնվականները, զյուղացինները, նվաճված գործածքների բնակիչները, այսինքն՝ փարբեր ազգերի մարդիկ, որոնք ապրում էին այդ գործածքում մինչև հայերի գերիշխանության հասքափելը: Բարձր ազնվականության մեջ մտնում էին 11-րդ դարում Հայաստանից զարթած նախարարական վների ներկայացուցիչները: Ազնվականությունից հետո եկող մարդիկ բաժանվում էին երկու մասի՝ բուրժուաներ (բուրժես)՝ այսինքն՝ քաղաքային բնակչությունը և գեղջուկ շինականները: Միսիթար Գոշի «Դաքաստանագրքում» հիմնալի ներկայացված են այդ խավերը: Լևոն Երկրորդի ժամանակ հասքափելին նաև իրավական օրենքներ:

Այնուհետև Վ. Լանգուան մանրամասն ներկայացնում է ֆեոդալների իրավունքները, հայ բնակիչների օրենադրական իրավունքները և արքասահմանցիններին փրփող արդունությունները: Վ. Լանգուան Լևոն Երկրորդին որոշ առումով համարում է սահմանադրական հարցերի նորարար: Այս առումով հապուկ նշանակություն է փալիս նշանավոր հոգևորական, Տարտոնի և Լամբրոնի արքեպիսկոպոս Ներսես

Լամբրոնացու «Թուղթ առ Լեռն արքայն Հայոց» նամակին<sup>42</sup>: Ներսես Լամբրոնացին գրում է Լեռն Երկրորդին՝ իրեն Մեծ Հայքի հոգևորականներից պաշտպանելու համար, որոնք նրան մեղադրում էին ազգային արմագներից հեռանալու հարցում: Այս նամակի որոշ հարվածներ օգնում են հասկանալու մի շարք անուններ, որոնք եվրոպացի հայագեցներին ծանոթ էին միայն լագինական գառադարձությամբ: Վ. Լանգուան այդ համարում է ամենակարևոր փաստերից մեկը: Ներսես Լամբրոնացին առաջարկել էր օգտագործել Վմիր, Շենուա, Մարգարա, Սիր, Պրոքսիմոս, Գունդուսպաալ, Մարաջախս, Վապետ, Լեճ բառերը<sup>43</sup>:

Աշխաբության երրորդ գլխում ներկայացվում է Կիլիկյան հայկական թագավորության կազմավորումը:

Առաջին բերդերը, որոնք հայերը գրավեցին, մեծ մասամբ պատկանում էին հույներին և շափ քիչ՝ մահմեդականներին: Ք. ձ.հետքը՝ 1100 թվականին, Քեսունի բերդը և Մարաշը պարկանում էին Գող

<sup>42</sup> Տես Ընթիր Մաքենագիրը, Գ. Կաթողիկոս Տղա, Ն. Լամբրոնացի, Նամականի, Վենետիկ, 1838:

<sup>43</sup> Մեկ որիշ կարևոր աշխաբության մեջ՝ "Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie sous les rois de la Dynastie Roupéenne, d'après les documents orientaux conservés dans les dépôts d'archives de l'Europe, St. Petersb., 1860", Վ. Լանգուան 54-րդ էջում գեղեղել է Կիլիկյան Հայաստանում ընդունված փիլդոսները՝ աղյուսակում նշելով բայի ծագումը (հունական, արաբական, ֆրանկների) և դիմացը ֆրանսերեն հիմարը: Կիլիկյան Հայաստանի սահմանադրությամբ հասարակության մեջ գործեր ասդիման ունեցող մարդկանց համար գործածվել են հետևյալ բառերը՝

|     |                     |
|-----|---------------------|
| 1.  | Թագավոր             |
| 2.  | Թագակիր             |
| 3.  | Կոնեփարի            |
| 4.  | Մարաջախս            |
| 5.  | Սենեգալ             |
| 6.  | Պրոքսիմոս           |
| 7.  | Շենուա              |
| 8.  | Թրաներեպս           |
| 9.  | Դուրս               |
| 10. | Կոմս                |
| 11. | Բարոն               |
| 12. | Ասպետ               |
| 13. | Կիր                 |
| 14. | Պայլ                |
| 15. | Լեճ                 |
| 16. | Վմիր                |
| 17. | Սերասպոս            |
| 18. | Պանսերասպոս         |
| 19. | Մարգարա կամ Մարգախս |
| 20. | Բուրժես             |

Վասիլին, 1076-ին Օշինը՝ Տեթումյան գերդաստանի գլխավորը, տերն էր Լամբրոնի, իսկ նրա որդին՝ Տեթում Առաջինը փիրում է Տարտոնին: Լեռնային Կիլիկիան գրավում է Երիքասարդ Ռուբենի կողմից, իսկ նրա որդի Կոստանդինը գրավել էր Տավոռ լեռների շագ հարվածներ՝ նախքան իր մահը: Լևոն Երկրորդի ժամանակ Կիլիկյան Հայաստան արդեն ուժեղ պետություն էր՝ լավ պահպանվող սահմաններով: Այս պարագան է սպիրում Գերմանացի միապետին Լևոն Երկրորդին ճանաչելու որպես Կիլիկիայի թագավոր, փիրողոս, որը պահպանվեց մինչև 1375 թվականը, մինչև վերջին թագավոր Լևոն Վեցերորդի գահընկեց լինելը:

Երկրի ողջ հողի գերը Լևոն Երկրորդ թագավորն էր, ամեն անհապ՝ ազնվական և ոչ ազնվական, թագավորի մարդն էր և ուղիղ գծով հպատակվում էր նրան: Հայաստանի թագավորը հպատակվում էր միայն Ասպծուն: Դրա համար էլ մեծ մասամբ Ստում հափած Ռուբենյանների դրամներն ունեին «Կարողութեամբն Ասպծոյ» մակագրությունը: Լևոն Երկրորդը արդարին աշխարհում վասալական կախման մեջ էր Գերմանիայի միապետից և Ռոռմի պապից: Տեփազայում Տեթում Առաջինը կախման մեջ է ընկնում Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս Իններորդից: Վ. Լանգլուան ժամանակագրական կարգով թվարկում է Կիլիկյան հայ թագավորներին, գահակալության թվերով՝ սկսելով Ռուբեն Մեծից (1080թ.) և ավարտելով Լևոն Վեցերորդ Լուիսինյանով (1393թ.):<sup>44</sup>

Այսուհետեւ Վ. Լանգլուան բացարձում է, թե ինչ արդունություններ ու պարբականություններ ունեին ազնվականներն ու բարոնները: Նույն ծևով մանրամասնորեն մեկնաբանվում են կաթողիկոսի և հոգևորականների իրավունքներն ու պարբականությունները: Որոշ ժամանակահարված Կիլիկիայում և Մեծ Հայրում միաժամանակ կային Երկու կաթողիկոսներ: Գրիգոր Վկայասերը նսկում էր Կիլիկիայում՝ 1065-ից մինչև 1105-ը, իսկ Բարսեղ կաթողիկոսը Անիում՝ 1081-ից մինչև 1113-ը: Տեփազայում այս երկուսին փոխարինում է Գրիգոր Երրորդ Պահլավունին, որը նսկում է Ռոռմկայում:

Տեփազայում կաթողիկոսական աթոռը տեղափոխվում է Սիս: Հայգերը բերում է Կիլիկյան հայ կաթողիկոսների ցուցակը՝ սկսած Գրիգոր Պահլավունուց մինչև Պողոս Առաջինը (1374-1376թթ.): Վ. Լանգլուան խոսում է Ռոռմի պապի միարարական ջանքերի մասին, որոնք բապալվում են Մեծ Հայքի նշանավոր հոգևորականների անզիջում պայքարի հետևանքով: Ներկայացվում է Կիլիկյան Հայաստանի

հոգևորական քահանայապետությունը: Երկար էջերով պատկերված են խաչակիրների ժամանակ եղած փոխարարերությունները, Տևողական օրդենի կապարած դերը՝ սկսած Ֆրիդրիխ Բարբարոսայի ժամանակներից: Տևողական օրդենի գլխավորները Լևոն Երկրորդի ժամանակ փիրում էին Կիլիկիայի մի շարք կարևոր բերդերի: Կիլիկիայում իրենց ներկայացուցիչներն ու համայնքներն են սրեղծում իդալացի երեք ծովային հանրապետությունները՝ հարկապես ճենովան և Վենետիկը: 1216 թվականին ճենովացիները մեծ արդունություններ են սրանում Կիլիկիայում: Ճենովացիներն առաջինն են, որ վաճառականական արդունություններ սրացան Հայաստանում, նրանց անունը հաճախ է բրում բոլոր արևմտյան այցելուների կողմից, որոնք գալիս են Վրեսելը: Վ. Լանգլուան դեսել է ծովափնյա այն աշխարակները, որոնք դեռ իր ժամանակ կոչվում էին «Ճընիվիս-կալեսի» («châteaux génois»):<sup>45</sup>

Բայցևայնական վենետիկցիները Հայաստանում ունեին առևտրական մենաշնորհ Երկար դարիների ընթացքում: Վենետիկցիները նույնական Կիլիկիայում իիմնել են եկեղեցի և առևտրական գմներ: Այնուհետև Վ. Լանգլուան գրում է Դիզայի և Ֆլորենցիայի՝ Կիլիկիայի հետ ունեցած առևտրական և դիվանագիրական հարբերությունների մասին:

Առանձին ենթագլուխում "De l'importation et de l'exportation.-Monnaies, poids et mesures"<sup>46</sup> («Ներամուծումը և արդահանումը, Դրամները, կշիռները, չափերը»), ներկայացված են առևտրի հետ կապված այս ժամանակվա չափանիշները:

Վրեմութքի վաճառականները Կիլիկիա էին բերում մեծ քանակի ապրանքներ՝ ցորեն, գարի, գինի, ծեթ, մելքաքս, կրավ, Եվրոպայում գործված մահուդ, մելքաքյա զգեսքներ, շաքարավագ, կորալներ, թանկարժեք մելքաղներ, օճառ և զենք: Բերվում էին Փարիզում պարբառագված գորիներ, դանակներ, հայելիներ, մոմեղեններ: Խոկ Կիլիկիայից բանում էին բարեկեր գեսակի սպրուկներ, ծիեր, գոմեշներ, եզներ, ոչյարներ, կաշիներ, հավեր և ծվեր: Տանում էին նաև Տավոռսի լեռների անդառներից կորված փայտանյութ, լեռան հանքավայրերից հանված մելքաղներ, աղ, սննդարար և յուղով հագիկեղենն, բամբակ, մելքաքսի բոժոժ: Բայց Կիլիկիայի հայերի ամենահիմնական գրաղմունքը Ասիայից քարավաններով բերված ապրանքների մթերանոցներ պահելու էր, որոնք հետո Կիլիկիայի միջոցով ուղարկվում էին Եվրոպա: Այդ Երկրներն էին Պարսկաստանը, Հնդկաստանը, Թա-

<sup>44</sup> V. Langlois, Le Trésor des chartes d'Arménie ou cartulaire de chancellerie royal des Roupeniens, Venise, 1863, p. 56.

<sup>45</sup> Նույն գեղում, էջ 85:

<sup>46</sup> Նույն գեղում, էջ 96:

թարների երկիրը:<sup>43</sup> Կիլիկյան Հայաստանի դրամները հարվում էին Սսի և Տարտոնի արիեսպանոցներում, որոնք ուկուց, արծաթից և պղնձից էին պարրասպում դրանք: Լևոն Երկրորդից մինչև Լևոն Դինգերորդը Հայաստանում եղել են բազմաթիվ դրամական ռեֆորմներ: Չափերն ու կշիռները Կիլիկյան Հայաստանում հարմարեցված էին Արևմուտքի հետ: Բաժնի վերջում Վ. Լանգլուան ակնարկ ունի նաև իր ժամանակի առևտիք վերաբերյալ:

1288 թվականի դեկտեմբերի 23-ին Կիլիկիայի Լևոն Երրորդ թագավորն առևտրական արքունություն է տվել ճենովային: Վ. Լանգլուան գրքում բերում է այդ արքունագրի հայերեն բնագիրը և կողքին գերեզում ֆրանսերեն թարգմանությունը: Արքունագիրը պահպում է Թուրիին քաղաքի դիվանում: Առաջին անգամ փառքրվել է Սեն Մարտինի կողմից<sup>44</sup>: Լևոն Երրորդի արքունագրում պարզորոշ երևում է 13-րդ դարի Կիլիկյան Հայաստանի դիվանագիրական լեզվի մակարդակը, թվարկվում են երկրի սահմանադրական օրենքները՝ արքասահմանցիների վերաբերյալ. թվարկվում են այն ապրանքները, որոնց երկողմանի շրջանառությունը պետքականորեն թույլադրվում է: Նպարակահարմար է ներկայացնել այսպես արքունագրի սկզբի և ավարտի հարվածները.

«[Յանուն հաւը և Որդույ և] սուրբ Ռոգյոն ամեն. Այս մեր թագաւորական բարձր իրամանք է, և հաստափութեան սիզեղ, Լևոնի ճշմարիկ ծառայի Ասպուծոյ և նորին շնորհաւը և ողորմութեամբ թագաւորի ամենայն Հայոց, զոր պարզեցաք ասպուածայիաստափ գումնին

ճնվիզացն, ի խընդրոյ պատուելի եւ իմաստուն իշխանին, մեծապարվեալ վիզային, ճնուվիզացն գումնին ծովու այս դեկիս և մեր թագաւորութեանս կապարեալս հաւաքարիմ սիրելոյն սիր Պենեթ Զաքարեին: Վասն ճընուվեզ վաճռուկներոյն, որ լինի իրենց սահմանն այսպէս. յառաջ որ մեր քաղընյն որ ի մեր ծեռք կան, նայ բաժերն ու իրաւներն լինի որպէս Այասուն է, զարդ ել ի յայն գեղեսափընոյն, որ ի սիզեղն գրած կայ, և զինչ իսկի իր ծախտեն ի շուկայն սամսրով...»: «...Եւ արդ յայսմ հետք և առ յապայ չունի ոք իշխանութիւն ի մեր թագաւորութեանս ամենայն հնազանդացն ոչ ի մեծայմեծացն և ոչ ի փոքրունց՝ մեր թագաւորական բարձր իրամանացս հակառակ կայ, կամ ասպուածայպահ գումնին ճընուվիզացն՝ ուժ կամ նեղութիւն առնել կամ այլ ավելի հարկ կամ իրաւուն պահընջել, այլ այնպէս մընացէ հաստափուն որպէս իրամայել ենք: Վասն որոյ պարզեցաք զմեր թագաւորական բարձր իրամանը և զպարուելի սիզեղս: Եւ վասն ա-

<sup>43</sup> Նույն գեղում, էջ 154:

ուակել հաստափութեան ծեռնայգրեցաք մերով սովորական բարձր ծեռնագրովս. ի թվականիս Հայոց ԶՃ ԼԵ, և ի փոքր թուականիս յերկուքն, յամսեանս դեկտեմբերի ի ԵԳ. Հաստափուն է կամաւըն Ասպուծոյ. Գրեցա արգահափութեամբ Նեթում ջանցլերին նուասպ ծառայի Ասպուծոյ. և սուրբ արքայիս շնորհողի այսմ պարզելիս:

Եւ ճընուվեզ որ լինի յերկիրս բնակութեամբ իր կենալն, ու սպանայ հայրենիք որ լինի ի կոնկան դեհաց կամ ի մեր թագաւորութենես գուրք, ու մեռնի անփիաթիկ ու անժառանգ, նայ իր ինչքն զարդ ի հայրենեսպներոյն՝ դառնայ ի գումնին ծեռք, և հայրենիքն դառնայ ի պարունութեանն ի ծեռքն:

† Լեւոն թագաւոր Հայոց»<sup>45</sup>:

Հայաստանի դիվանագիրության, իրավաբանության առումով բացառիկ հետաքրքրություն ունի Վիկտոր Լանգլուայի "Essai historique et critique sur la constitution social et politique de l'Arménie sous les rois de la Dynastie Roupéenne" աշխափությունը՝ լույս բեւսած Պետերբուրգում, 1860-ին: Այս հետազոտության որոշ փաստեր և դրույթներ կրկնվում են "Le Trésor des chartes d'Arménie ou cartulaire de chancellerie royal des Roupéniens" գրքում (1863):

"Essai historique et critique sur la constitution social et politique de l'Arménie sous les rois de la Dynastie Roupéenne" աշխափության 21-րդ էջից մինչև 37-րդ էջը ժամանակագրական կարգով ներկայացված են Կիլիկյան հայ թագավորների իրության սահմանադրությունները՝ սկսած Լևոն Երրորդի դիվանագիրական հարաբերություններից մինչև Լևոն Վեցերորդ. Լուսինյանի 1392-ի հուլիսի 20-ին գրած կտակը<sup>46</sup>: Գրի առաջին գլուխը կոչված է «Հայաստանի քաղաքական-դմբեսական կառուցվածքը Ռուբինյանների ժամանակ»: Այս սկսվում է պագմական ակնարկով՝ Պարույր Ակայորդուց, հասնում է պարթև Վաղարշակ արքային, որն առաջինն է սահմանում Հայաստանի նախարարական դասերը և նախարարական բարձերը:

Ավանդույթը, որը սպելովել էր Հայաստանում երկար դարերի ընթացքում, շարունակում են Կիլիկյան թագավորները, որոնք կարսրում են նաև մեծ թվով նորամուծություններ, փոխում են անգամ նախարարական հազուսպի ծները՝ դրանք նմանեցնելով եվրոպականին: Հայաստանում երկրի գլխավոր գորահրամանափարը կոչվում էր

<sup>43</sup> Նույն գեղում, էջ 158:

<sup>44</sup> V. Langlois, "Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie sous les rois de la Dynastie Roupéenne, d'après les documents orientaux conservés dans les dépôts d'archives de l'Europe, St. Petersb., 1860", p. 37.

սպարապետ. Ռուբինյանների օրոք այս պաշտոնը կոչվում է կրնելու պարլ (գրւնդսփարլ): Վիկորոր Լանգլուան ներկայացնում է Կիլիկիայի սպարապետների ցանկը՝ սկսած Պաղինից՝ 1188-ից և հասցնում է մինչև 1395 թվականը՝ մինչև Տովհան Բարինը: Մանրամասն ներկայացվում են պալափական բոլոր պաշտոնները՝ սենեկապետը-մեծած ջամբան ("alternation du mot chambellan")<sup>50</sup>, Պրոքսիմոսը, որը թագավորի գանձապահն էր, պայլը հյուպագոսն էր, մինապանը՝ նավահանգիստների պետը:

Ուսումնասիրության 62-րդ էջում գծված է Ռուբինյան հայ թագավորական գերդասպանի գոհմածառը, իսկ 64-րդ էջում անուններով նշվում են հայ ազնվականները: Վ. Լանգլուան մանրամասն գրում է նաև հայ հոգևորականների մասին, ներկայացնում հայ կաթողիկոսների ցուցակը Կիլիկիայի հայկական թագավորության ողջ ընթացքում: Այդ ցուցակն է<sup>51</sup>:

#### Հռոմեայում

- 1113թ. – Գրիգոր Երրորդ Պահկավունի:
- 1166թ. – Ներսես Շնորհալի, Կլայեցի:
- 1173թ. – Գրիգոր Տղա:
- 1180թ. – Բարսեղ:
- 1193թ. – Գրիգոր Դինգերորդ, Մանուկ:
- 1195թ. – Գրիգոր Վեցերորդ, Ազիրապ:
- 1202թ. – Տովիաննես Ցոթերորդ, Մեծաբարո, Ստեցի, հանվել է պաշտոնից 1203թ.:
- 1203թ. – Անանիա Մերասպացի, Եպիսկոպոս, բռնազավել է կաթողիկոսական աթոռը 4 տարի:
- 1203թ. – Դավիթ Երրորդ:
- 1206թ. – Տովիաննես Ցոթերորդը վերահասպագվել է իր ալեռողի վրա:
- 1220թ. – Կոստանդին Առաջին Բարձրերդցի:
- 1268թ. – Դակոր Առաջին Գիվնական:
- 1287թ. – Կոստանդին Երկրորդ, հանվել է պաշտոնից:
- 1290թ. – Սպեհիանոս Չորրորդ Խախ գյուղից, գերի է փարվել Եզիապոսի մահմեդականների կողմից:

<sup>50</sup> Նույն գեղում, էջ 56:

<sup>51</sup> Ցուցակում եղած որոշ թվականներ փարբերվում են առավել ճշգրտված և նոր հրափարակված «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» ժողովածուից (վետ Ամենայն Հայոց կաթողիկոսներ, խմբագրությամբ Պ. Տովիաննիսյանի, Մրահեղացի, կազմել և հրափարակել են Վ. Մարկոսյանը, Ա. Խոյանը, Երևան, 2001: Ժողովածուն սկսվում է հայ առաջին կաթողիկոսից՝ Գրիգոր Ա Լուսավորչից և հասնում է մինչև արդի Ժամանակի հայ եկեղեցու առաջնորդ Գարեգին Բ Ներսիսյանը):

#### Սառւ

- 1294թ. – Գրիգոր Ցոթերորդ, Անավարգեցի:
- 1307թ. – Կոստանդին Երկրորդ, Վերահասպագվել է իր պաշտոնում:
- 1323թ. – Կոստանդին Երրորդ Լամբրոնացի:
- 1327թ. – Դակոր Երկրորդ, Անեցի, հանվել է պաշտոնից:
- 1341թ. – Միհրան Առաջին, Գոնեցի:
- 1355թ. – Դակոր Երկրորդը վերահասպագվել է իր պաշտոնում:
- 1359թ. – Մեսրոպ Առաջին, Արդազեցի, նախապես եղել է Արդազի Ս. Թաղեի վանքի վանահայր:
- 1372թ. – Կոստանդին Չորրորդ:

1374թ. - Պողոս Առաջին, Ստեցի: Կաթողիկոսության անջապումը: Կաթողիկոսական աթոռը վերադարձվում է Էջմիածին, սակայն Սսի կաթողիկոսությունը շարունակում է իր առանձին ընթացքը<sup>52</sup>:

Վիկորոր Լանգլուան գրում է եվրոպացի խաչակիրների կրոնական հասպագությունների և Կիլիկիայի հոգևոր կյանքի վրա նրանց ունեցած ազդեցության մասին: Աշխագության ողջ երրորդ գլուխը նվիրված է Ռուբինյան Տայասպանի առևտին, արդյունաբերությանը, մաքսային գործին, դրամներին, չափ ու կշռին:

\* \* \*

Խիստ ուշագրավ հետազոտություն է նվիրել Վ. Լանգլուան Կիլիկիան Տայասպանի և ճենովայի հանրապետության միջազեփական կապերին: Այդ ուսումնասիրությունը որպես գեկուցում ընթերցվել է Փարիզում 1860 թվականի մայիսի 10-ին<sup>53</sup>: Ըստ արևիվային նյութերի հայագետն ուսումնասիրել է Երկու դարի՝ XIII-XIV միջազեփական կապերը: Վ. Լանգլուան իրակերենով դնում է մի հարված Տորկվարո Տաստի «Ազագագրված Երուսաղեմ» պետմից: Խաչակիրներն ազագագրում են Երուսաղեմը, ֆրանկները հաղթանակած փիրում են սուրբ Երկրին, ուր հազարամյակից ավելի առաջ Քրիստոսը հայրին դարձրեց մարդկանց իր ասպարագային գոյության մասին: Խաչակիրների պատերազմներից հետո Խաչակիայի ծովային հանրապետությունները փառահետ ձևով փարածեցին իրենց գերիշխանությունը

<sup>52</sup> V. Langlois, "Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie sous les rois de la Dynastie Roupéenne, d'après les documents orientaux conservés dans les dépôts d'archives de l'Europe. St. Petersb., 1860", p. 70-71.

<sup>53</sup> V. Langlois, Mémoire sur les relations de la République de Gênes avec le royaume chrétien de la Petite Arménie, pendant les XIII et XIV siècles, Paris, 1860.

գրավված դարաձբների վրա: Ասորիքում ֆրանկների ունեցած հաջողությունները նպաստեցին, որ Դիզայի, ճենովայի, Վենեփիկի նավերն իրենց ուղղությունը վերցնեն դեպի Արևելք և մրածեն նոր ձևով զարգացնել առևտուրն ու արդյունաբերությունը:

Երկար դարերի ընթացքում ճենովան Սիրիայի հետ ունեցել է սերպ առևտուրական կապեր, որոնք շարունակական զարգացել են, և այդ կապերն ավելի ամրապնդեցին խաչակրաց արշավանքներից հետո: Վ. Լանգլուան ուսումնասիրել է այդ կապերի ամենահեքարքի հավաքած՝ ցավոք չունենալով մեծ թվով հիշապակարաններ: Եղածներն էլ ինքը ծեռք է բերել Թուրինի և ճենովայի արխիվներից: 1200 թվականից սկսած մինչև 14-րդ դարը ճենովայի հանրապետությունը մրգել է մի մեծ և նոր հարաբերության մեջ՝ Կիլիկյան Հայաստանին դիմուլով որպես իր համար կարևոր գործակից:

Ճենովացիններն ու վենեփիկցինները, որոնք եռանդուն ձևով առևտուր էին անում Հայաստանում, այնքեղ հիմնում են իրենց խանութեները, կրպակները, եկեղեցինները և այլ գործող հիմնարկներ: Արդեն 13-րդ դարում Կիլիկիայի հայ թագավորները մեծ արքունություններ են փախս Վենեփիկի և ճենովայի առևտուրականներին: Այս արքունությունը վերաբերում էր ոչ միայն մաքսային գործին, այլ քաղաքացիական ուրիշ խնդիրների ևս: Այդ կապերը բաժանվում են հետևյալ հինգ կենսական մեջ՝

- 1) Մաքսային սակագները և առևտուրական այլ իրավունքներ՝ դարձվող օպարերկրյա ապրանքների վրա:
- 2) Կարգավիճակ և իրավունքներ խորպակվածների կամ նավարեկության ենթարկվածների համար:
- 3) Նրանք, ովքեր ունեն կրակ և կամ չունեն այն:
- 4) Քաղաքացիական և քրեական դատերը:
- 5) Անհափների կարգավիճակը<sup>4</sup>:

13-րդ դարից սկսած ճենովայի առևտուրականները, որ մինչև այդ առևտուր էին անում Սիրիայի հետ, սկսում են նոր կապեր հասպատել Կիլիկյան Հայաստանի հետ: Ասում են, թե առաջին կապերը հասպատել են արդեն Կիլիկիայի թագավոր Լևոն Երկրորդի ժամանակ: Լևոն Երկրորդը շար շուր հասկացավ, որ ինքը Եվրոպայի հետ պետք է մինչ նոր կապերի մեջ, եենվի իր հենարավորությունների վրա՝ պետքությունը ուժեղացնելու նպատակով: Մի խաղաղության պայմանագիր կնքվեց Լևոն Երկրորդի և ճենովայի ծովակալ Նիկոլա

Նորիայի միջն, որի հիմքը առևտուրական կապեր հասպատելն էր: Բազմաթիվ ժամանակագրներ պահպանել են այդ բանակցությունների հիշապակումը: Ճենովայի կառավարությունը Հայաստան է ուղարկում Բողոքան Ռոմեուի համար բանակցելու համար, որպեսզի Սոհ դիվանագունը ճանաչի ծովակալ Նիկոլա Նորիայի ծրագիրը: Տասնչորս փարի հետո ճենովացինները, Հայաստանում իրենց ազդեցության մեջանալուց հետո, ուղարկում են նոր բանագնաց Արքուն Ֆերարիին՝ ճենովայի դերկոմանին, դեսպանորդների հետ, Լևոն Երկրորդին համոզելու, որ իրենց գրվեն ավելի մեծ արքունություններ քան Վենեփիկին: Մի նոր հրովարդակալ անմիջապես շարադրվում է 1215 թ. մարտի 15-ին, այս գալիս է ճենովա, ուր Նիկոլա Պորփայի ջանքերով թարգմանվում է լատիներեն և բաղդապատճեն է հին հետ: Արքուն Պլաստինիուսի կողմից: Այս գործում մեծ դեր է կապարում Լևոն Երկրորդի զարմիկը՝ Ռայմոնդ Ռուբենյանը, որը Անդրիոքի կառավարիչն էր, նա նպաստում է ճենովայի ու Կիլիկիայի կապերի ամրապնդմանը: Մի նոր առավել շահավետ արքունագիր ճենովայի համար սպորագրվում է 1216-ի փետրվարին: Արդեն Լևոն Երկրորդի ժամանակ ճենովան պահանջում է նոր արքունագիր: 1288-ին Բենուա Զաքարիան գալիս է Հայաստան և պահանջում է արքունագրի վերահասպատում: Մեկ դարի անց Բենուա Զաքարիան Սիր է գալիս նոր պահանջներով: Բայց Լևոն Երկրորդը վախճանվում է, և Նեթում Երկրորդը՝ նրա որդին, գահ է բարձրանում: Կաֆորոն, որը հայքնում է այս ամենի մասին, չի հայդնում, թե արդյոք նոր թագավորն ընդունեց ճենովացինների առաջարկած փոփոխությունները: Սակայն քաղաքական հետագա իրադարձությունները հուշում են, թե Նեթում Երկրորդը, նրա եղբայրները այնքան եռանդով չեն լծում ճենովացինների գործերին:

Իրականում, փասներեքերորդ դարի վերջին փարիններին ճենովան Հայաստանում չուներ նախկին արքունությունը: Վ. Լանգլուան խոսում է ճենովայի և Կիլիկյան Հայաստանի հետագա հարաբերությունների մասին՝ շեշփելով, թե դրանք հապերագալ ծաղկել են Լևոն Երկրորդի և Լևոն Երկրորդի ժամանակ: Ճենովայի առևտուրը ծավալվել է Կիլիկիայի բոլոր հիմնական քաղաքներում: Առաջին պայմանագրից հետո ճենովացինները Հայաստանում գեր էին գնների ու հողերի: Լևոն Երկրորդն իրավունք էր պատճեն ճենովացիններին Սոսմ կառուցել եկեղեցի, գներ, դափնարան: Մի քանի դարի անց թագավորը դատիս է նոր արքունություններ՝ Տարտոնում հողագործ եկեղեցի, քաղնիք, փուռ կառուցելու և այգի գննելու համար: Թուրինի դիվանում հայ-ճենովական կապերին վերաբերող փաստաթղթերը չորսն են՝

<sup>4</sup> Նույն դարձում, էջ 294:

- 1) 22 հոկտեմբերի 1268թ.,
  - 2) 3 հոկտեմբերի 1270թ.,
  - 3) 6 հոկտեմբերի 1271թ.,
  - 4) 7 հոկտեմբերի 1271թ.:

Վ. Լանգոլուան մանրամասնում է մի շարք փասփաթղթերի դպյալներ (էջ 303-307):

Ազարդելով իր հետազոտությունը՝ Վ. Լանգուան նկատում է, թե ճենովան իր նավերը միայն Հայաստան չէ, որ ուղարկում էր, դրանք գնում էին նաև Սև ծով, ուր ճենովացիներն ունեին գերիշխող դիրք: Հայագետի կարծիքով դեռ իր օրերում կարելի էր սեսնել ճենովացիների անցյալի հիշաբակները, որոնք ունեցել են երբեմնի փայլ, հնում ծաղկուն կյանքով ապրող մի երկրում:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՎԻԿԱՐ ԼԱՆԳՈՒԱՆ ԵՎ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վիկոր Լանգլուան մեծ հետաքրքրություն է ցուցաբերել հայ պատմագրության նկադմամբ՝ այն դիվելով ոչ միայն հայկական դիվակեփից, այլև համընդհանուր պատմության նշանակեփից: Նրա հայագիրական վաստակը այս ուղղությամբ հսկայական է: Նա ուներ գիրական երազանք՝ հայ միջնադարի պատմիչների գործերը թարգմանել ֆրանսերեն և հրապարակել հինգ սովոր հայորների մեջ: Նախախնամությունը թույլ դրվեց իրականցնել միայն առաջին երկու հայորների կազմումն ու հրապարակումը<sup>1</sup>:

Քանի որ նա զբաղվում էր Կիլիկյան Հայաստանի խնդիրներով, ապա անհրաժեշտ է համարում թարգմանել մի հայված Սմբատ Գունդասպարի Ժամանակագրությունից, որը հրապարակվում է Ս. Պետրոպալազում, 1862-ին: Լանգուան իր թարգմանությանը կցում է անհրաժեշտ նախաբան, որում ներկայացվում են պատմիչի գործը և նրա անձո:

Կիլիկյան Հայաստանի ժամանակագիրների մեջ Սմբադ Գունդա-  
փարը զբաղեցնում էր բարձր դիրք, նա կարևոր դեր էր իր խաղում ոչ  
միայն Հայաստանի, այլև Փոքր Ասիայի քաղաքական գործերում: Այս  
ժամանակագիրը Կիլիկիայի թագավոր Նեթում Առաջինի հարազար  
եղբայրն էր և երկրի քաջ սպարապետը: Պարմության կարևորագույն  
հարգածներում նա կարարված դեպքերի ականափեսն ու մասնա-  
կիցն էր, հասցրել է ժամանակագրությունը մինչև իր մահը<sup>2</sup>: Վ. Լանգ-  
լուան ասում է, թե հայերը գիտեին Սմբադի ժամանակագրության  
մասին, սակայն կարծում էին, թե այդ երկը կորած է: Սակայն Կիլի-  
կիայի հոգևորականների ջանքերով ժամանակագրությունը բազմաց-  
վել է և բարեբախտաբար դուրս է բերվել երկրից՝ նախքան վերջինիս  
նվաճվելն ու ամայացվելը մահմեղականների կողմից: Էջմիածնի  
սուրբ կամարների դակ, ուր հավաքվել են հայ մագիստրության  
գանձերը, իրենց տեղին են գտել նաև Սմբադ Գունդափարի՝ մեծար-  
ժեք այդ երկի երկու արդագրությունները: Ավելի ուշ Ս. Ղազար կո-  
ղու Միհիթառյան միաբանները ձեռք են բերում Սմբադ Գունդափար-

Վ. Կանգուայի գործը շարունակեց Մ. Բրոսսեն (փետ Ա. Դոլոխանյան, Մարի Ֆելի-սին Բրոսսեն հայացել, Երևան, 2002, էջ 14-60):

<sup>2</sup> Հետ ինը ժամանակներում նկարվել է, որ Սարաք Գունդարաբի Ժամանակարությունը շարունակվել է ուրիշի կողմից և այն հասցվել է մինչև 1331 թ. (պետք Պալասան, Պարմուդիխն Հայոց, Ազգից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1894, էջ 571):

լի ժամանակագրության մի օրինակը, սակայն ձեռագրի անանուն լինելու պաֆճառով չեն իմանում, թե դա հայոց սպարապետի երկն է: Նույն միջոցին Միքայել Չամչյանցը, որը 18-րդ դարավերջի մեծագույն հայ պատմաբանն էր, կրահում է ժամանակագրության հեղինակի ով լինելը: Կար մի խանգարող հանգամանք ճիշդ կրահելու համար. պատմության մեջ նկարագրվում էին դեպքեր, որոնց ժամանակ Հայաստանի սպարապետը այլևս կենդանի չէր:

Սութիս Սոմալը՝ Մխիթարյան Միաբանության վանահայրը և Սյունյաց արքեպիսկոպոսը, իր “Quadro”-ում (էջ 129) խոսում է Սմբադի և նրա ժամանակագրության մասին: Վ. Լանգլուան Սմբադի ժամանակագրության գրինվելու պատմության մեջ դնում է խորհրդավոր շեշտեր: Այս հանգամանքն առկա է 19-րդ դարի գրեթե բոլոր այն հայագետների մով, որոնք իրենց գիտական հետազողությունների ընթացքում հոգեպես այնքան էին ծովակել հայ պատմությանը, որ ամեն մի նորույթ, ամեն մի փասբ ընկալում էին ազգային, ավելի շուրջ ազգանվեր գիտնականի հոգու ցնծությամբ: Ահա այդպես նա ներկայացնում է, թե ինչպես Մարի Բրոսան Էմիխանում եղած ժամանակ գրել է Սմբադ Գունդսպարի ձեռագիրը. «Այս հմուտ արևելագետը այցելել է Էջմիածին 1848-ին և շաբ է երջանկացել, մի քանի օր հետազողություն հետո, գրադարանում Սմբադի ժամանակագրության երկու օրինակը հայտնաբերելու համար»<sup>3</sup>: Վ. Լանգլուան արձանագրում է նաև Շ. Շահիսարունյանի կագարած դերը այդ խնդրում: Վերջինս պատրաստել էր Էջմիածնի ձեռագրերի ցուցակը, և դա հեշտացրեց Ս. Բրոսանի գործը՝ ձեռագրերը գրնելու խնդրում: Առաջին ձեռագիրը թիվ 12 էր, իսկ երկրորդը՝ թիվ 46-ը<sup>4</sup>՝ պատմական գրքերի ցուցակում: Ս. Բրոսանի կագարածի արդյունքը եղավ այն, որ պարունական Գևորգյան-Դովիհաննիսյանցը հրաժարակեց հայ սպարապետի ժամանակագրությունը, որը լույս բերած 1856-ին Մուսկվայում: Քիչ ժամանակ անց մեկ ուրիշ գիտնական վարդապետ, որը երկար դարիներ ապրել էր Էջմիածնում, գնում է Փարիզ՝ իր հետ բանելով ձեռագրի ընդօրինակություն և այն հրաժարակում է Փարիզում, «Շար հայ պատմագրաց» մատենաշարուվ (‘La chronique de Sempad a paru dans un volume in-120, en même temps que celle en vers rimés de Vahram Rapouni; Paris, 1859’ («Սմբադի ժամանակագրությունը լույս բերած 12-րդ հավորում, ուսույն ժամանակ, ինչ Վահրամ Ռապունը չա-

<sup>3</sup> V. Langlois, Extrait de la Chronique de Sempad, seigneur de Babaron, connétable d'Arménie, suivi de celle de son continuateur, comprenant l'histoire des temps écoulés depuis l'établissement des Roupéniens en Cilicie, jusqu'à l'extinction de cette dynastie, St. Petersbourg, 1862, p. 2.

<sup>4</sup> Նույն գեղում:

փած ժամանակագրությունը, Փարիզ, 1859)<sup>5</sup>:

Սմբադ Սպարապետի ժամանակագրության ձեռագիր մի օրինակ է պահպետ է Լոնդոնի Բրիտանական թանգարանի գրադարանում, որը Վիկտոր Լանգլուային ծանոթ չի եղել: Այդ ձեռագրի նկարագիրը գրված է Ֆրենքերիկ Կոնիբերի կողմից “A catalogue of the Armenian manuscripts in the British Museum” ձեռագրացուցակում:

Ֆ. Կոնիբերը այդ ժամանակագրության ձեռագիրը դրել է “Historical and geographical works” բաժնում: Այն ձեռագրացուցակի մեջ կրում է 116 թիվը, գրադարանում է ձեռագրի 5-ից մինչև 116 թերթերը: Ֆ. Կոնիբերը գրում է. “Folios 5-116 contain the Chronicle of Sinbat Sparapet, brother of King Hethum I” («5-ից 116 թերթերը պարունակում են Տերթում արքայի եղբոր Սմբադ Սպարապետի ժամանակագրությունը»): Վ. Լանգլուայի կարծիքով Փարիզում գրագրված գարբերակը առավել է Մուսկվայի հրաժարակությունից, բացի այդ նրանում կան այնպիսի ծանոթագրություններ, որոնք օգնում են ավելի կագարյալ ձևով հասկանալ բնագիրը: Ահա վարդապետ Շահնազարյանի փարիզյան գրագրությունից էլ Վ. Լանգլուան կագարյալ է իր թարգմանությունը՝ հաշվի առնելով պարունականի գարբերակի գարընթերցվածները:

Վ. Լանգլուան համոզված է, որ թե՛ Մուսկվայի և թե՛ Փարիզի հրաժարակումները կագարյալ չեն՝ չնայած երկուսն էլ ավարտվում են 1331 թվականով: Վ. Լանգլուայի կարծիքով Ս. Չամչյանցի օգնագործած («Պատմութիւն Հայոց», հ. III) ձեռագիրը ավելի կագարյալ է (այն ներկայացնում է պատմական դեպքերը մինչև 1335 թվականը), քան Էջմիածնի օրինակները: Սմբադ Գունդսպարի ժամանակագրությունը շարունակող անհրաժեշտ չի գտնել ամեն ինչ պատմել մանրամասնորեն, այլ ընթերցողներին դրանք անհայտ է պահել իր ժամանակի կարևոր դեպքերի մասին:

Սմբադ Գունդսպարի ձեռքով գրված ժամանակագրությունը, ըստ Վ. Լանգլուայի, սկսվում է Ք. ծ. հետո 951-952 թվականներին և հասնում է մինչև 1274 թվականը: 951-ից մինչև 1165-ը Սմբադ Սպարապետը քաղել է Մագրեսո Ուռիայեցուց և նրա շարունակող Գրիգոր Երեցից: Սակայն հետագա դեպքերը քաղել է երկու արաք ժամանակագիրներից և Միքայել Ասորուց: Եթե Սմբադը հասնում է Լևոն Երկ-

<sup>5</sup> Վահրամ Ռապունի Կիլիկիայի Լևոն Երրորդ թագավորի պատվերով չափած ձևով շարունակել է Ներսես Շնորհապու «Վիպասանութիւն» պատմական պոեմը՝ այն հասցենով մինչև 1275 թվականը: Պոեմը նկարագրում է Ռուբենյան թագավորների գործերը (լրեն Վահրամ Ռապունի, Ուրանաւոր պատմութիւն Ռուբենյանց, Փարիզ, 1859):

<sup>6</sup> Frederic Conybeare, A catalogue of the Armenian manuscripts in the British Museum, London, 1913, p. 290.

որորի թագավորությանը, հանդես է գալիս որպես ականափես, նույնիսկ խոսում է իբրև կաքարված պատմական իրադարձությունների հիմնական դեմքերից մեկը:

Նրա առաջին շարունակողը, ըստ Վ. Լանգուայի, չի օգտագործել այլ աղբյուրներ, որովհետք նա եղել է իր նկարագրածի ժամանակակիցը, անձ, որ պատմում է եղածը: Ակելով 1286-ից՝ իր պատմությունն ավարկում է 1331-ին, մոտ կես դարի պատմություն է ներկայացնում: Ինչ վերաբերում է երկրորդ շարունակողին, ապա չի երևում, թե նա երբ է ապրել և որ պահին է ավարտել իր պատմությունը: Եթե վարդապետ Մարտիրոս Դրիմեցին, որը պոեմ ունի հայոց թագավորների հաջորդների մասին մինչև Լևոն Վեցերորդ Լուսինյանը, քաղել է իր կյուրք ազգային աղբյուրներից, կասկած չկա, թե այս երկրորդ շարունակությունը մասը չի եղել նրա ձեռքի փակ եղած փաստերի:

Սմբափի և նրա շարունակողների ոճը պարզ է, ինչը հայուկ է ժամանակագրությանը և լեզուն ներկայացնում է Ռուբինյանների շրջանի հայերենը: Նրանում երևում են արաբերեն, պարսկերեն բառեր, կարելի է փեսնել նույնիսկ գաղիքաբանություն (միջին Փրանսերեն), որը ցույց է փալիս, թե որքան մեծ է եղել Հայաստանի վրա խաչակիրների լեզվի ազդեցությունը, և որքան արևմտյան ֆեոդալական դարձվածներ ներմուծվել են Տավրոսի լեռնաշղթայի Հայաստանի կյանքում: Սմբափը Շեթումյան էր մոր գծով, և նվիրված էր Լևոն Երկրորդին, նրա աղջկան՝ Զաքելին: Եթե Շեթում Առաջինը դարձավ թագավոր, նրա զգացմունքները բնականաբար ձևափոխվեցին, և իր ողջ սպարապետության ընթացքում ծառայեց Շեթում Առաջինին՝ անսահման նվիրվածությամբ, մինչև անզամ հանուն թագավորի զոհվեց ճակարտամարդությունը: Նա իր նվիրվածության բազում ապացույցներ ուներ եղբոր և նրա որդու՝ Լևոն Երրորդ թագավորի առաջ:

Սմբափը Ներսես Լամբրոնացուն ապացուցում է, թե ինքը ավելի շուրջ լաքինական եկեղեցու հեվլորդ է, քան ազգային, որ ինքը պետք է պարկանի արևմտյան կողմնորոշում ունեցողներին և հակառակի ազգային իին գաղափարախոսությանը<sup>7</sup>, որն արգելակում է ա-

<sup>7</sup> Սմբափ Գունդագարը հիանալի փիրապետում էր Փրանսերեն լեզվին և թարգմանություններ էր կաքարում այդ լեզվից: Նա թարգմանել է Անդրեա Անդրեա (Օրենսգիրքը), որի Փրանսերեն բնագիրը կորած է և գիրական աշխարհին այն ծանոթ է միայն Սմբափ Գունդագարի թարգմանությամբ: «Անդրեա Անդրեա» օրենսգիրքը հիմնականում պարունակում է դագավարական հոդվածներ՝ նվիրված կալվածագրերերի ու լիճ (լիճ) նորփերի փոխարքերությունների ամենափարբեր բնագավառներին: 1876 թվականին Վենետիկի Մխիթարյան հայրերը հրափարակել են այդ թարգմանությունը՝ նրան կցելով իրենց կաքարած Փրանսերեն նոր թարգմանությունը (տե՛ս Assises d' Antioche, reproduit en français et publiées au sixième centenaire de la mort de Sembat Le Connitabile, leur ancien traducteur arménien, Venise, 1876):

ուաշաղիմությունը և Փրանկների ազդեցությունն Ասիայում:

Առաջաբանի վերջում Վ. Լանգուան ներկայացնում է Սմբափ Գունդագարի կենսագրությունը: Սմբափը Բարձրաբերդի փիրոց Կուսարանինի որոյին էր: Նրա մայրը Լամբրոնի փիրոց՝ Օշին Երկրորդի աղջիկն էր, Ներսես Լամբրոնացու քույրը: Նա իր ժամանակագրության մեջ պատմում է, թե ծնվել է 1208-ին՝ Լևոն Երկրորդի թագավորության ժամանակ և ծառայել է վերջինին: Նրա հայրը եղել է սպարապետը, քայլ երբ զահ է բարձրացել նրա եղբայրը՝ Նեթում Առաջինը, սպարապետ է դարձել ինքը: Սմբափը եղբոր հետին մասնակցել է մահմեղականների դեմ մղված բոլոր կոփսներին: Սմբափը եղբոր ցանկությամբ մեկնել է թաթարական հորդա՝ ճանապարհորդելով ուղիղ երկու փարի և հաջողությամբ վերադառնալով արքունիքը: Սմբափը Կիպրոսի թագավորը Շենրի Լուսինյանին պատմում է իր դժվարին ճամփորդության մասին, որն ընթացել է անձանդ երկրներով: Այդ նամակը կարևոր փաստաթուղթ է Զինգի խանի հեվլորդների մասին պատմող: Կիպրոսի թագավորին գրած նամակում Սմբափը պատմում է, թե ինչ ճանապարի է անցել Կարակորում՝ խանի նսկավայր հասնելու համար: Կիլիկիայից նա անցել է Բաղդադ, հասել է Սամարդանդ, անցնելով մի շարք պետություններով, հասել է խանական Սեծ Շորդա: Նույն ժամանակ թաթարական հորդա է գնացել նաև Կիլիկիայի թագավոր Շեթում Առաջինը, սակայն բոլորովին այլ ճանապարհով: Ինչպես հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, Շեթում Առաջինը մեկնել է Կասպից ծովի հյուսիսով, ուր առաջին հերթին այցելել է Բաթու խանին: Շեթում Առաջինը վերադարձին անցել է Կասպից ծովի հարավով և Սեծ Շայրով է շարժվել դեպի Կիլիկիա:

Իր ճամփորդության վերջում Սմբափը սկսում է շարադրել ժամանակագրությունը, որը հասցնում է իր մահվան նախորդող փարին: Նա շարունակ և՝ կովում, և՝ նյութ էր հավաքում իր պատմության համար՝ երկար փարիներով աշխատելով իր գործի վիա: Կարելի է եղանակացնել, թե նա աշխատել է մոտ 25 փարի, որովհետք 40 փարի եր անցել նրա ճամփորդությունից, և վախճանվել է համարյա յոթանատուն փարեկանում: Կորի պատմիչ Արուֆարաջը նկարագրել է Սմբափ Սպարապետի դժբախտ մահը: 1277-ին թուրքերը, միանալով Եգիպտոսի մահմեղականների հետ, շարժվում են դեպի Մարաշ՝ Կիլիկիան գրավելու համար: Լևոն Երրորդ թագավորը խկույն զորք է հանում Սմբափ Գունդագարի գլխավորությամբ: Հայկական զորքերը հանդիպում են թուրքերին Մարաշի մոտ: Դա մեծ պահքի հունիսի երրորդ շաբաթվա ուրբաթ օրն էր: Ռազմի դաշտում Սմբափը սպանվում է, մյուս իշխանների հետ, որոնց թիվը կազմում է 13 մարդ, նրանց

հետ ավելի քան երեք հարյուր ասպեկտներ: Ժամանակագիրն ասում է, թե առավելությունը հայերին էր, որոնք կոփորեցին մեծ թվով այլադավանների և այդ ծևով կանխեցին երկրի նվաճումը: Մմբագը նահագակվեց 69 քարեկանում, և նրա պաշտոնն անցավ որդուն՝ Լևոնին, իր զավակներից երկրորդին: Նրա պատ որդին՝ Շեթումը, պարմից էր, որը Կոռիկոսի տերն էր: Նա գրել է մի պատմություն ֆրանսերն լեզվով՝ թաթարների մասին՝ ֆրանսերեն սովորելով Կիպրոսում՝ իր վաճքում: Նրա աշխագիրն չափ հետքարքիր փասքեր կան թաթարների մասին, և երևում է, որ հոր հետ ինքն էլ մեկնել է թաթարական հորդա, որովհետև նրա գրածը ականագետ պատում է: Վ. Լանգլուան վերջում բացագրում է իր թարգմանության սկզբունքները: Նա ջանացել է հնարավորինս գրական գեղեցիկ ֆրանսերենով մարդուցել հայերեն բնագիրը, բացագրել է բնագրի խորհին, անհականացի գեղերը, մեկնաբանել է մարդկանց և երկրներին վերաբերող փաստերը: Անշուշտ ընթերցողը այս ժամանակագրությունը կիամարի չոր ու միապաղաղ, բայց սա կապում է այն ժամանակի հետ, որում այն սփեղձվել է: Նրանում կարելի է գտնել հսկայական հետքարքություն 12-րդ և 13-րդ դարերի մասին, որովհետև չափ փասքեր ներկայացված են նորովի, որը և հնարավորություն է փալիս դրանք համեմատել ու սպուցել արաք, ասորի և արևմտյան ժամանակագիրների հաղորդածների հետ:

\* \* \*

Վիկոր Լանգլուան այն հայագետներից էր, որ ջանքեր է թափել ապացուցելու Մովսես Խորենացու հինգերորդ դարի պատմիչ լինելը: Այդ մրահոգությամբ էլ նա գրել է ուսումնասիրություն Մովսես Խորենացու «Հայոց պատմության» աղբյուրների վերաբերյալ<sup>9</sup>: Վիկոր Լանգլուան հետքագությունը բաժանել է հետևյալ մասերի:

Նախարան և բովանդակության ներկայացում:

- 1) Մովսես Խորենացին, նրա կյանքը, գործերը, միտքումները:
- 2) Աղբյուրներ, որոնցից օգտվել է Մովսեսը՝ հունական աղբյուրներ, ոչ կրոնական մագիստրություններ, քրիստոնեական մագիստրություններ:

3) Քաղեական աղբյուրներ՝ հիմնական նկարառումները: Մար Աբա Կափինայի գրքի փարիքն ու կարևորությունը: Ասորական աղբյուրներ:

<sup>9</sup> Victor Langlois, Etude sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren, Paris, 1861.

4) Հայկական աղբյուրներ՝ ժողովրդական բանահյուսություն և երգեր: Արևելքի հին դիվաններում պահպող աղբյուրներ:

Եզրակացություն:

Վիկոր Լանգլուան նշում է, թե Մովսես Խորենացին պագեանում է հայ այն մագիստրությունների թվին, որոնց գովել են սուրբ թարգմանիչներ անոնը, որոնք կարարել են ազնիվ ու փառահեղ գործ՝ հունարենից ու ասորերենից հայերեն են թարգմանել առավել ակնառու այն գործերը, որոնց անհրաժեշտությունը պեսք է զգացվեր: Մովսեսը Մեսրոպ Մաշտոցի այն աշակերգներից էր, որ գրադիւն է Սուրբ գործերի թարգմանությամբ: Լինելով անխոնջ ուսումնասիրող՝ նա հետքագութել է Ասորիքի, Եզրակացու և Հունասրամի գլխավոր քաղաքների դիվաններն ու գրադարանները: Նա գիտելիքներ է ամրարել և՝ կրոնական, և՝ աշխարհիկ գիտություններից և ունեցել է մեծ բազմագիտակություն: Նա սովորել է ասպեկտաբանություն, պատմություն, հունարական արվեստ, աշխարհագրություն, ներբողագություն: Մովսես Խորենացուն են վերաբերում Եվսեբիոսի ժամանակագրության, «Ալեքսանդր Մակեդոնացու կենսագրության» և ուրիշ այլ գործերի թարգմանությունները<sup>10</sup>: Վիկոր Լանգլուայի կարծիքով Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրությունն է ներշնչել Մովսես Խորենացուն գրելու Սահակ Բագրատունու խնդրած պատմությունը<sup>11</sup>: Նախարան Մ. Խորենացու «Հայոց պատմության» աղբյուրներին անցնելը, հայագետը փորձում է խոսել նրա կյանքի մասին, որի փասքերը սակավ են, նույնիսկ հայքին չեն ծննդյան և մահվան թվականները: Մովսեսը ծնվել է Տուրութերան նահանգի Տարոն գավառի Խորին կամ Խորեն ավանում, գեղի անունով էլ կոչվել է Խորենացի: Խնչան իր դարի մյուս գրողները, նա էլ պագեանել է կրոնական դասին: Նրա ուսուցիչները՝ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը, նկաբելով Մովսեսի բացահիկ ընդունակությունները, ուղարկում են արքասահման՝ հունական և ասորական մշակույթի մեջ հմգանալու: Մովսեսը հաջողությամբ այցելել է Եղեսիա, Երուսաղեմ, Ալեքսանդրիա, Կոստանդնուպոլիս, Աթենք և Հռոմ, հավաքել է այդ վայրերում ոչ միայն կրոնական գիտելիքներ, այլև հմգանել է արդարին գիտությունների մեջ: Եղեսիայի դիվանում որոշ ժամանակ պարապելուց հետո Մովսեսը գեղագիտութել է Ալեքսանդրիա, ուր կարարելագործվել է հունա-

<sup>9</sup> Վիկոր Լանգլուան հղում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հետևյալ խորհրդական հայությանը. «Զի և ես այր եմ ծերացեալ և հիւանդով և անպարապ ի թարգմանութեանց» (լուս Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, մաս III, գլուխ ԿԵ, էջ 438):

<sup>10</sup> Victor Langlois, Etude sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren, Paris, 1861, p. 300.

րեն լեզվի և հունական փիլիսոփայության բնագավառներում: Նա ոչինչ չի պատրաստ Աթենքում, Հռոմում և Կոստանդնուպոլիսում իր կարգադի մասին: Մովսեսը երևում է որպես բարեպաշտ, խիստ զարգացած և քրիստոնեական խոնարհություն ունեցող մի անձնավորություն:

Վ. Լանգուան ասում է, թե Մովսեսին վերագրել են մի շաբ երկար կյանք, նա կյանքի վերջում Բագրեանդի եպիսկոպոսն էր: «Տայագեւը թվարկում է նրա գործերը՝ պայմանագիր դրանց մեջ դնելով Անանիա Շիրակացու «Աշխարհացույցը»:

Սակայն Մովսես Խորենացու հիմնական գործը համարում է «Տայոց պատրաստությունը» և իր ուսումնասիրության փողաբակում թվարկում մինչ 1861 թվականը եղած հայերեն և այլալեզու փայագությունները<sup>11</sup>: Ենց այս գործում է երևում Մովսես Խորենացու բնավորությունը, անսահման սերը հայրենիքի նկարմամբ, ազգային մտածողությունը, իր ազգին նվաճել ցանկացող օգարների նկարմամբ ավելությունը, հիացմունքը հունական մագիստրության նկարմամբ, ասորական մտածելակերպի կողմնորոշման ընդունելը, քաղաքական երազանքները: Մովսեսը բնանական գործ է գրել, նա հաշվի է առել փարբեր հեղինակների կարծիքները, նրանց մեջ որոնել է ճիշդը, լավագույնը: Չնայած նախապարհվություն է դրվել հունական աղբյուրներին, սակայն չի անդասել այլ բնույթի աղբյուրները ևս<sup>12</sup>: Նա հավաքացնում է, թե Մ. Խորենացին էլ իր գրի սկզբում 16-րդ դարի նշանավոր Փրանսիացի գրող Մոնտենի նման կարող էր գրել. "Moïse aurait donc pu dire, comme Montaigne, au debut de ses Essais: "L'est icy un livre de bonne foy"<sup>13</sup>: («Մովսեսն էլ ուրեմն, ինչպես Մոնտեն է ասել իր էսեների սկզբում, կարող էր ասել. «Կյարեղ է ճշմարիկ հավաքի գիրը»:

Վ. Լանգուայի կարծիքով Մ. Խորենացին անառարկելիորեն իր ազգի ամենամեծ պատմիչն է, նրա մասին հիացմունքով են խոսում Կիրակոս Գանձակեցին, Թովմա Արծրունին, Վասոյիկը և Սամվել Անեցին: Եթե որոշ բնադապներ կասկածի դակ են դնում Մովսես Խո-

<sup>11</sup> Խորեն գրելում, էջ 303:

